

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

7



ՄԵԹՐԴԱԿԱՆ ՈՒՂԵՅՈՒՅՑ

ԱՐՄԵՆ ԽԱԶԻԿՅԱՆ ԳԱԳԻԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Արմեն Խաչիկյան, Գագիկ Հովակիմյան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 7

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ



Երևան 2023

ԵՐԵՎԱՆ 2023

Կրթակարգով նախատեսված Համաշխարհային պատմության սույն մեթոդական ձեռնարկը ստեղծվել է կրթակարգի հիմնական սկզբունքներին ու պահանջներին համապատասխան և նպատակ ունի օգնելու պատմության ուսուցիչներին՝ կազմակերպելու և անցկացնելու որակյալ կրթություն ապահովող ժամանակակից դասեր:

Ձեռնարկի հեղինակ պ. գ. թ. դոցենտ՝ Արմեն Խաչիկյան

**Հետադարձ կապի՝ թեմատիկ գնահատման ամփոփիչ թեստերը և
թեմատիկ ստուգման / գնահատման նմուշային հարցաշարերը կազմել են
Արմեն Խաչիկյանը (պ. գ. թ. դոցենտ) և Գագիկ Հովակիմյանը (պ. գ. թ. դոցենտ)**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ 4
- 2. ԱԶԳԱՑԻՆ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՑԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ 4
- 3. ԴԱՍԱԳՐՔԻ ՀԱՑԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 5
- 4. ԴԱՍԱԳՐՔԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԸ 6
- 5. ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԸՍՏ ԹԵՄԱՆԵՐԻ 9
 - ԹԵՄԱ 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ 9
 - ԹԵՄԱ 2. ԱՆՏԻԿ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ, ՀԻՆ ՀՈՌՄ 14
 - ԹԵՄԱ 3. ԱՐԵՎՍՈՒՏՔԻ ԵՎ ԱՐԵՎԵԼՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ 22
 - ԹԵՄԱ 4. ՄԻՋՆԱԴԱՐԻ ԱՎԱՐՏԸ, ՓՈՓՈԽՎՈՂ ՀԱՍԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 29
- 6. ԽԻԿ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄ

1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

Համաշխարհային պատմության դասընթացն առանձնահատուկ տեղ և դեր ունի հասարակագիտական առարկաների շարքում: Այն կոչված է սովորողներին օգնել պատկերացում կազմելու մարդկային քաղաքակրթության առաջացման, զարգացման ուղիների և նվաճումների մասին, ցույց տալ, թե ինչպես և բազմաթիվ սերունդների ինչպիսի ջանքերով է ստեղծվել աշխարհը, որում մենք ապրում ենք:

Ըստ կրթական չափորոշի՝ «Համաշխարհային պատմություն» առարկայի դասավանդման նպատակն է «նպաստել սովորողների աշխարհայացքի ընդլայնմանը և արժեքային համակարգի ամբողջացմանը, ազգային ու համամարդկային արժեքներ կրող, սոցիալապես ակտիվ, պատասխանատու և պահանջատեր քաղաքացու ձևավորմանը, նրանց հետագա կրթությանը, մասնագիտական կողմնորոշմանը կամ աշխատանքային գործունեությանը նախապատրաստվելուն՝ ելնելով հարափոփոխ աշխարհում համամարդկային արժեքներով, հայրենասիրության ու քաղաքացիության ոգով դաստիարակելու անհրաժեշտությունից»:

Չափորոշիչն ընդգծում է, որ հանրակրթական հիմնական ծրագրի «Համաշխարհային պատմություն» առարկայի առանձնահատկությունը «սովորողի պատմական շրջահայաց մտածողության ձևավորումն ու զարգացումն է, որը հնարավորություն կտա նրան ըմբռնելու մարդկության պատմության ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները, հասկանալու դրանց իրականացման գործում մարդու և շրջակա միջավայրի փոխազդեցությունը, գնահատելու պատմական գործընթացների համատեքստում ինստիտուցիոնալ կառույցների ձևավորումը, վերլուծելու գլոբալ փոխազդեցությունների դաշտում առկա գործընթացները, ծանոթանալու մշակութային միջավայրին և հասկանալու անհատ-հասարակություն-միջավայր փոխազդեցությունն ու փոխկապվածությունը»:

2. ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Անցած հազարամյակների ընթացքում երկրագնդի վրա ապրել են բազմաթիվ ժողովուրդներ, որոնք զգալի ավանդ են բերել համամարդկային քաղաքակրթության զարգացմանը: Նրանց մեծ մասն այսօր վերացել է՝ ձուլվելով այլ ազգերի, բայց որոշ հին ժողովուրդներ՝ հայերը, հույները, պարսիկները, չինացիները, հնդիկները և այլք, կարողացել են գոյատևել ցայսօր: Այդ ժողովուրդներից յուրաքանչյուրն ունի ուրիշներից տարբերվող ազգային արժեքներ՝ մտածելակերպ և հոգեբանություն, բարքեր ու սովորույթներ: Այդ արժեքները տվյալ ժողովրդի պատմական հարստությունը լինելով հանդերձ, հանդիսանում են նրա ներդրումը Համաշխարհային պատմության մեջ:

Հայոց պատմությունը ևս, լինելով մեր ժողովրդի պատմական հարստությունը, Համաշխարհային պատմության մասն է: Ահա ինչու համաշխարհային և հայոց պատմության դասընթացները պետք է սերտորեն կապվեն իրար, լրացնեն միմյանց: Դրանք պետք է միտված լինեն, այլ երկրների ու ժողովուրդների շարքում, Հայաստանի և հայ ժողովրդի ունեցած դերի ու նշանակության պարզաբանմանը, համաշխարհային քաղաքակրթության զարգացման մեջ նրա պատմական ներդրման արժևորմանն ու գնահատմանը:

«Համաշխարհային պատմություն» դասընթացի ուսումնասիրությունը՝

- սովորողներին կծանոթացնի տարբեր ժողովուրդների ու հասարակությունների ձևավորման և զարգացման պատմությանը:

- Կնպաստի սովորողների կողմից աշխարհի տարբեր մասերում տեղի ունեցած պատմական դեպքերի և իրադարձությունների իմաստավորմանը, դրանց պատճառներն ու հետևանքները գնահատել կարողանալուն:
- Կօգնի պատկերացում կազմել տարբեր ժողովուրդների ու երկրների տնտեսական կյանքի, քաղաքակրթական ու մշակութային նվաճումների մասին, արժևորելու նրանց կատարած ներդրումը համաշխարհային քաղաքակրթության առաջընթացի մեջ:
- Կօգնի հընթացս իմաստավորել և ըստ արժանվույն գնահատել հայ ժողովրդի ներդրումը համաշխարհային քաղաքակրթության ձևավորման և զարգացման մեջ :

3. ԴԱՍԱԳՐՔԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Համաշխարհային պատմության VII դասարանի դասագիրքը գրվել է Հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների, ԿԳՄՍ նախարարի 2021 թ. ապրիլի 30-ի հրամանով «2021-2022 ուսումնական տարում ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում փորձարկելու նպատակով հաստատված «Համաշխարհային պատմություն» առարկայի փորձնական չափորոշիչը և ծրագրերը», և 2022 թ. օգոստոսի 29-ի հրամանով «Նոր չափորոշիչն համապատասխան՝ «Համաշխարհային պատմություն» առարկայի լրամշակված ծրագրերը հաստատելու մասին» հրամանների հավելվածների համադրությամբ:

Կրթական նոր չափորոշիչն համապատասխան՝ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների VII դասարանում «Համաշխարհային պատմություն» առարկայի ծրագրով «Հին աշխարհի պատմություն» և «Միջին դարերի պատմություն» դասընթացները, որոնք նախկինում դասավանդվում էին 2 ուս. տարում, այսուհետև կդասավանդվեն 1 ուս. տարվա ընթացքում: Առարկայի դասավանդմանը հատկացված է 68 ժամ: Այս իրողությունը, բնականաբար, նոր մոտեցում է պարտադրում Համաշխարհային պատմության ներկայացվող դասագրքում համապատասխան բաժինների դասանյութի շարադրանքին՝ թե՛ բովանդակության, թե՛ ծավալի, թե՛ մեթոդիկայի առումով:

Հիմնական դպրոցի VII դասարանի համար նախատեսված «Համաշխարհային պատմություն» առարկայի նոր դասագիրքը բաղկացած է 2 մասից, 4 թեմատիկ բաժիններից՝ ընդամենը 58 պարագրաֆ:

Առաջին մասը ընդգրկում է Հին աշխարհի պատմության ժամանակաշրջանը: Այն ներառում է 1-2-րդ թեմատիկ բաժինները (32 պարագրաֆ) և դասավանդվելու է ուս. տարվա առաջին կիսամյակում:

Երկրորդ մասը ընդգրկում է Միջին դարերի պատմության ժամանակահատվածը: Այն ներառում է դասագրքի 3-4-րդ թեմատիկ բաժինները (26 պարագրաֆ) և կդասավանդվի 2-րդ կիսամյակում:

- Դասագիրքը շարադրված է՝ հաշվի առնելով պատմագիտության զարգացման ներկա մակարդակը և նրան առաջադրված խնդիրները: Դասանյութերի ծավալը համապատասխանեցված է աշակերտների տարիքային զարգացման միջին մակարդակին:
- Պատմական իրադարձությունների շարադրանքը տրված է համաժամանակյա սկզբունքով, որպեսզի սովորողը պատկերացում կազմի աշխարհի տարբեր երկրներում տվյալ ժամանակաշրջանում կատարվածի մասին: Միևնույն ժամանակ, ապահովված է տվյալ երկրի/հասարակության զարգացման հնարավորինս հաջորդական շարադրանքը, ներկայացված են կարևոր իրադարձությունների սկզբնավորումը, ընթացքը և հետևանքները:

- Պատմության շարադրանքը աշխատել ենք ներկայացնել ցայտուն օրինակներով, պատմական գործիչների բնութագրումով, իրադարձությունների պատկերավոր նկարագրություններով: Դրանք առավել լավ են տպավորվում աշակերտների հիշողության մեջ:
- Միջնադարի քաղաքակրթությունների զարգացումը շարադրելիս խուսափել ենք Արևմուտքի և Արևելքի երկրների պատմությունը տարբեր թեմաներում, իրարից առանձնացված ներկայացնելուց, ինչը պատմության եվրոպակենտրոն մոտեցման դրսևորում է:
 Մինչդեռ միջնադարում Արևելքի և Արևմուտքի քաղաքակրթությունները զարգացել են համաժամանակյա, իրար հետ փոխազդեցության և փոխներգործության միջոցով: Հիմնական դպրոցի առարկայական ծրագրում Արևելքի և Արևմուտքի քաղաքակրթությունների պատմական զարգացման տարանջատումը, մեր խորին համոզմամբ, կղժվարացնի աշակերտների կողմից պատմական երևույթների ճիշտ իմաստավորումը, իրադարձությունների պատճառների և դրանց հետևանքների ընկալումը: Ավելին, Բյուզանդիայի և Արաբական խալիֆայթի պատմությունը, կամ Մոնղոլական տերության պատմությունը Ռուսաստանի, Իրանի, Չինաստանի պատմությունից տարանջատելը հակահունչ է նաև հասարակության օրինաչափ զարգացման տեսանկյունից:
- Դասագիրքը հավասար մանրամասնությամբ չի անդրադառնում աշխարհի տարբեր երկրների պատմությանը: Ներկայացված է նախևառաջ Արևելքի և Արևմուտքի առաջատար դեր խաղացած քաղաքակրթությունների պատմությունը: Ոչ էական դերակատարում ունեցած երկրների պատմությունը ներկայացված է թռուցիկ կամ շրջանցված է:
- Այն երկրների ու ժողովուրդների պատմությունը, որոնք կարևոր դեր են խաղացել և նշանակալի ներդրում են կատարել համաշխարհային քաղաքակրթության առաջընթացի գործում, դասագրքում ներկայացված է համեմատաբար հանգամանակից: Այդ երկրների պատմության կարևոր հանգուցակետերը շարադրված են հնարավորինս մանրամասնորեն:
- Պատմության տարբեր շրջափուլերում առաջատար ժողովուրդների ու հասարակությունների քաղաքակրթական ձեռքբերումներին, տնտեսական կյանքին ու մշակույթին ծանոթանալով՝ սովորողները հնարավորություն կունենան ընկալելու, իմաստավորելու և արժևորելու նրանց նվաճումները:
- Նկատի ունենալով Հայաստանի պատմական կապերն ու շփումները հարևան և հեռավոր երկրների հետ՝ անհրաժեշտ ուշադրություն է դարձվել այդ երկրների պատմության շարադրանքի համապատասխան երանգավորմանը:
- Մշակույթի բաժիններում ձգտել ենք ներկայացնել ամեն կոնկրետ քաղաքակրթության նվաճումների առավել ակնառու արդյունքները: Դրանք շարադրված են այնպես, որ աշակերտի հիշողության մեջ մնան տվյալ դարաշրջանը կամ երկիրը առավել բնորոշող, ուրիշ դարաշրջաններից ու երկրներից տարբերվող հատկանիշները:

4. ԴԱՍԱԳՐՔԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԸ

Դասագրքի յուրաքանչյուր պարագրաֆի ծավալը 3 տպագիր էջ է: Պարագրաֆի դասակարգումը շարադրված է 3-5 ենթամասերով՝ կախված թեմատիկ ընդգրկումից: Մասերի միջև պահպանված են բովանդակության ներկայացման շարունակականությունը, ամբողջականությունը և համակարգվածությունը:

Դասագրքի տպագիր ծավալը սահմանափակ է, ուստի շատ փաստաթղթեր, կարևոր իրադարձությունների մանրամասներ և բացատրություններ դասագրքին կցված են էլեկտրոնային

տարբերակով՝ QR կոդերի միջոցով: Հեռախոսով սքանավորելով տվյալ պարբերության մոտ, նկարի կամ քարտեզի վրա նշված QR կոդը, կարելի է նաև կարդալ հատվածներ պատմական աղբյուրներից, դիտել թեմային վերաբերող նկարներ, քանդակներ, արվեստի այլ գործեր: QR կոդերի տակ ներառված են գծանկարներ և ավելի մեծ մասշտաբի քարտեզներ, որոնք դասի տեքստում տրված են սեղմ չափերով:

Դասագրքի մեթոդական ապարատը հարմարեցված է տարբերակված աշխատանքներ կատարելու՝ ըստ սովորողների կրթական կարիքների, և նպատակ ունի ամրապնդելու դասի տեքստում տրվող նյութը: Ամեն պարագրաֆի վերջում ներկայացված են տեքստում հանդիպող նոր բառերն ու արտահայտությունները: Տրված են դասանյութը ամփոփող, կարևոր եզրահանգումների ընկալումն ամրապնդող հարցեր և առաջադրանքներ, երբեմն՝ թեստի ձևով:

Ուսումնառության արդյունավետության գնահատումը պետք է կատարվի սովորողների ինչպես ընթացիկ, այնպես էլ ամփոփիչ գնահատման միջոցով: Գնահատումն իրականացվում է պաշտոնական գրանցման և հաշվետվության համար: Նպատակն է ձեռք բերել ապացույցներ և տվյալներ, որոնք ցույց են տալիս սովորողների գիտելիքների յուրացման մակարդակը և արդյունավետությունը:

Ըստ պետական չափորոշի՝ գնահատականի բաղադրիչները հետևյալն են. «Հիմնական դպրոցում «Համաշխարհային պատմություն» առարկայի գնահատականի 40%-ը պետք է կազմի հիմնական գաղափարների իմացությունը և ըմբռնումը, հմտությունների զարգացման մասնաբաժինը կազմելու է 30%-ը, 20%-ը՝ արժեհամակարգի, իսկ 10%-ը՝ կապը իրական կյանքի հետ»:

Սովորողների կողմից գիտելիքների յուրացման ընթացիկ ստուգումը ուսուցիչը կարող է իրականացնել իր հանձնարարած տարբեր բնույթի և տիպի առաջադրանքներին նրանց դրսևորած մասնակցության ակտիվության, ցուցաբերած գիտելիքների և ունակությունների գնահատման միջոցով:

Ամփոփիչ գնահատումը սովորաբար իրականացվում է ժամկետի (քառորդ, կիսամյակ) կամ թեմատիկ միավորի վերջում: Սույն դասագրքի յուրաքանչյուր թեմատիկ բաժնի վերջին պարագրաֆը նախատեսված է տվյալ բաժնի դասանյութի ամփոփման համար և ներառում է ուսումնառության վերջնարդյունքները գնահատող թեստ: Եթե առանձին դասերում տրվող հարցերն ու առաջադրանքները հիմնականում վերաբերում են տվյալ դասանյութին և սովորաբար կոնկրետ բնույթ ունեն, ապա ամփոփիչ հարցերի ու առաջադրանքների թեմատիկ ընդգրկումն ավելի մեծ է, և այստեղ կարող են լինել նաև ընդհանուր բնույթի հարցեր, համեմատություններ և այլ առաջադրանքներ:

Հետադարձ կապ ապահովող թեմատիկ թեստերը տեղադրել ենք դասագրքում, ինչպես նաև QR կոդերի միջոցով տվյալ թեմատիկ բաժնում ընդգրկված դասանյութերի հիման վրա: Ամեն ամփոփիչ թեմատիկ թեստ գնահատվում է 10-բալանոց սանդղակով: Թեստում ներկայացված հարցերը նախատեսված են գիտելիքի յուրացման ինչպես թույլ, այնպես էլ միջին և բարձր մակարդակ դրսևորող սովորողների կողմից համարժեք դրական գնահատական ստանալու համար: Սովորողների քառորդային/կիսամյակային գնահատումը կատարելիս ուսուցիչը կարող է հաշվի առնել ինչպես ընթացիկ ստուգումներից, այնպես էլ ամփոփիչ թեստերից նրանց ստացած գնահատականները:

Հետադարձ կապ ապահովող ամփոփիչ թեստերի էլեկտրոնային տարբերակները գետեղված են սույն ձեռնարկում: Ուսուցիչը կարող է ամփոփիչ թեստերում դրված հարցերից յուրաքանչյուրը փոխարինել մեկ այլ համարժեք հարցով: Այդ նպատակով ձեռնարկում տեղադրել ենք նաև յուրաքանչյուր թեմայի համար թեմատիկ ստուգման/գնահատման

Նմուշային հարցաշարեր, որտեղից ուսուցիչը իր հայեցողությամբ կարող է ընտրել համարժեք հարցեր և դրանցով փոխարինել ամփոփիչ թեստի հարցերը: Եթե դպրոցը ունի համակարգիչ և տպիչ սարք, ուսուցիչը կարող է, ըստ դասարանի աշակերտների քանակի, թղթի երկու երեսին տպագրել նոր կազմած թեստը և բաժանել սովորողներին՝ գրավոր պատասխանելու և գնահատվելու համար: Գնահատված ամփոփիչ թեստերը կարելի է երկար պահպանել՝ հաշվետվության համար: Նմուշային հարցաշարերում զետեղված թեստային հարցերը կարելի է օգտագործել նաև տարեվերջյան քննությունների համար թեստային առաջադրանքներ կազմելիս:

5. ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԴԴՆԵՐ ԸՍՏ ԹԵՄԱՆԵՐԻ

ԹԵՄԱ 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Դասագրքի ամենից ընդգրկուն և բազմաբնույթ թեման է, բաղկացած 12 պարագրաֆից: Այն ներառում է քաղաքակրթության առաջին օջախների սկզբնավորման, դրանց տարածման ու զարգացման, Առաջավոր Ասիայում կենտրոնացված պետությունների ձևավորման պատմությունը:

§ 1-ի առավելապես տեսական նյութի յուրացումը կարևոր է, որ սովորողները հեշտ ընկալեն ամեն կոնկրետ քաղաքակրթության առաջացման և զարգացման ինչպես յուրօրինակությունը, այնպես էլ այդ գործընթացի ընդհանուր հատկանիշները: Նյութի ծավալն ու կարևորությունը նկատի առնելով՝ խորհուրդ ենք տալիս դրա դասավանդմանը հատկացնել 2 դասաժամ:

Նախ, սովորողների տարիքային ընկալմանը համապատասխան, պետք է ներկայացնել «քաղաքակրթություն» հասկացությունը, բացատրել անվան ծագումը, նաև քաղաքակրթություն - մշակույթ հասկացությունների փոխկապվածությունը: Կարևոր է սովորողներին բացատրել, որ քաղաքակրթությունը հասարակության առաջընթաց զարգացման բոլորովին նոր մակարդակ էր: Անցումը քաղաքակրթությանը տեղի է ունեցել «նեոլիթյան հեղափոխության» արդյունքում, երբ մարդիկ ընտելացրին կենդանիներին, սկսեցին զբաղվել երկրագործությամբ, սովորեցին կավե ամանեղեն պատրաստել: Այդ նորամուծությունների շնորհիվ հասարակությունը սկսեց բարիքներ ստեղծել սեփական աշխատանքով և արդեն քիչ էր կախված բնության արհավիրքներից, ինչի արդյունքում մարդիկ կարողացան անցնել նստակյաց կյանքի:

«Նեոլիթյան հեղափոխությունը» առաջինը տեղի է ունեցել Ք.ծ.ա. VII-V հազարամյակներում Առաջավոր Ասիայում, ուր առկա էին այդ նորամուծությունների համար առավել բարենպաստ պայմաններ.

- ա) արհեստական աճեցման և երկարատև պահպանման ենթակա հացազգի բույսերի լայն տեսականի՝ ցորեն, գարի, աշորա, հաճար, կորեկ և այլն,
- բ) ընտելացնելու ենթակա բազմազան կենդանատեսակներ՝ ոչխար, այծ, խոզ, կով, գոմեշ, ձի, ավանակ և այլն,
- գ) բնականից ոռոգվող և պարզունակ գործիքներով հեշտ մշակելի հողատարածքներ՝ Նեղոսի, Եփրատի, Ինդոսի, Հուանհեի հովիտներ,
- դ) տարբեր մետաղների հարուստ հանքապաշարներ՝ Փոքր Ասիա, Հայաստան, Իրան:

Մետաղամշակության հարցում կարևոր էր այն հանգամանքը, որ, չնայած մետաղի առաջին դարաշրջանը պղնձի-քարի դարն է, իսկական հեղաշրջում էր բրոնզի ստացումը և կիրառումը, ինչը արագացրեց միասնական պետությունների առաջացումը:

Կյանքի պայմանների որոշակի բարելավումը նպաստեց մարդկանց թվաքանակի աճին: Դա իր հերթին հանգեցրեց տոհմերի և ցեղերի միջև հաճախակի ընդհարումների և պատերազմների՝ հարևան տոհմերից նրանց ստեղծած բարիքները խլելու նպատակով: Սովորական երևույթ դարձան թշնամի տոհմի մարդկանց, ապա և տոհմակիցներին շահագործելը: Տոհմական կառավարման նախկին մարմինները այլևս ի գորու չէին կարգավորելու ներքին և արտաքին հակամարտությունները: Հրամայական անհրաժեշտություն էր առաջանում

ստեղծելու հատուկ մի կազմակերպություն, որը կապաշտպաներ մարդկանց և նրանց ստեղծած բարիքները թշնամի ցեղերի հարձակումներից, կապահովեր կարգ ու կանոնը տոհմի/ցեղի ներսում, կազմակերպեր տոհմի բոլոր անդամների շահերից բխող հասարակական աշխատանքները (պաշտպանական ամրությունների, ջրանցքների կառուցում և այլն): Այսինքն, պետության առաջացումը, նյութական բարիքների արտադրության և բաշխման կազմակերպման նոր ձևերի ու տեխնիկական միջոցների կիրառումը մարդկային հասարակության բնականոն զարգացման հետևանք էին և առաջընթաց քայլ:

Պետության ձևավորումը նշանակում էր ոչ միայն նախնադարի ավարտը, այլև նոր հասարակարգի՝ քաղաքակրթության սկիզբը: Այն հասարակության հետագա զարգացման և բարգավաճման նոր հնարավորություններ ապահովեց, ինչը դրսևորվեց քաղաքակրթության հասած ժողովուրդների կողմից մինչ այդ չտեսնված վիթխարի կառույցների, միասնական ոռոգման համակարգերի ստեղծմամբ, առօրյա կյանքում և կենցաղում նոր հարաբերությունների տարածմամբ, կենսամթերքի և նյութական բարիքների արտադրության աննախադեպ աճով:

§ 2, § 3, § 4-ը ներառում են Աֆրիկայի հյուսիս-արևելքում՝ Նեղոսի հովտում, Հին Արևելքի խոշորագույն քաղաքակրթություններից մեկի կազմավորման և զարգացման պատմությունը: Եգիպտոսի օրինակով ընդգծվում է բնակլիմայական պայմանների հետ մարդկանց մշտական պայքարի և պետականության կազմավորման միջև եղած անմիջական կապը, ինչը մեծապես պայմանավորեց այստեղ հասարակության վաղ համախմբումը, պետական, սոցիալ-տնտեսական և մշակութային համակարգերի ձևավորումը: Արհեստական ոռոգման համակարգի ստեղծումը միաժամանակ և՛ մարդկանց կենսագործունեության անհրաժեշտ նախապայման էր, և՛ պարտադրում էր մի կենտրոնից կառավարվող կոլեկտիվ աշխատանքի առկայությունը: Եգիպտական նոմը խոշոր բնակավայրի շուրջը համախմբված գյուղական բնակավայրերի միություն էր, որոնք իրար կապված էին ոռոգման ընդհանուր համակարգով (ջրանցքներ, ամբարտակներ, ոռոգման այլ կառույցներ): Այսպիսով՝ նոմը մի քաղաք-պետություն էր, հար և նման Հարավային Միջագետքի շումերական քաղաք-պետություններին:

Ք.ճ.ա. XXXI դարում Եգիպտոսի միասնական պետության կազմավորումը մի քանի տասնյակ նոմերի մեկ կենտրոնի՝ Մեմֆիսի շուրջը բռնի միավորման հետևանք էր: Փարավոնի իշխանության կայունությունը պայմանավորված էր ոչ միայն ռազմական ուժով, այլև տնտեսական ներազդման լծակներով: Այս նպատակով Նեղոսի հովտի և դելտայի ոռոգման կառույցները միավորվեցին մեկ համակարգի մեջ: Որևէ նոմի անհնազանդության դեպքում փարավոնը կարող էր հեշտությամբ խափանել դրա ոռոգման կառույցների գործունեությունը, այսինքն՝ կիրառել տնտեսական պատժամիջոցներ:

Եգիպտոսի Հին թագավորության անկման հիմնական պատճառը երկրի քաղաքական և տնտեսական կյանքի գերկենտրոնացումն էր: Երկարատև նվաճողական պատերազմները և խոշորածավալ շինարարական աշխատանքները վիթխարի ծախսեր և մարդկային ռեսուրսներ էին պահանջում: Համայնքային տնտեսությունները քայքայվել էին, որովհետև աշխատունակ կախյալ բնակչության մեծ մասը ներգրավված էր արքայական և տաճարային տնտեսությունների աշխատանքներում և պետական շինարարությունում: Հին թագավորության վերջին շրջանում խիստ կրճատվեցին պետության եկամուտները, թուլացավ

փարավոնի կենտրոնական իշխանությունը: Արդյունքում Ք.ժ. ա. X-XIII դարում միասնական պետությունը տրոհվեց անկախ նոմերի:

Նոմերի միջև վերսկսվեցին երկպառակչական պատերազմները, քայքայվեց ոռոգման համակարգը, Եգիպտոսը հայտնվեց տնտեսական և քաղաքական անկման եզրին: Երկրի նոր միավորումը տեղի ունեցավ Ք.ժ.ա. X-XI դարում: Սկսվեց Եգիպտոսի Միջին թագավորությունը:

Միջին թագավորության փարավոնները ավելի մեծ ուշադրություն էին դարձնում երկրի ներքին կյանքի կարգավորմանը: Տնտեսության վերականգնման համար կարևոր նշանակություն ունեցավ Ֆայումի օազիսում արհեստական լճի կառուցումը: Դա զգալիորեն ընդլայնեց մշակովի հողերի տարածքը և մեծացրեց գյուղատնտեսական արտադրանքի ծավալը: Նվաճողական պատերազմները հիմնականում նպատակ ունեին անվտանգ դարձնելու Եգիպտոսի հյուսիսային և հարավային մատույցները:

Եգիպտոսի բարձրագույն հզորությունը Նոր թագավորության ժամանակաշրջանն էր: Փարավոններ Թուրմոս I-ի և Թուրմոս III-ի լայնածավալ նվաճողական արշավանքների լույսի տակ ներկայացվում է Եգիպտական տերության վերելքը:

Չնայած Ք.ժ.ա. XIII դարում Ռամզես II-ին հաջողվեց ժամանակավորապես ամրապնդել կենտրոնական իշխանությունը, սակայն նրանից հետո Եգիպտական պետությունը այլևս ի վիճակի չէրավ վերականգնելու իր երբեմնի հզորությունը: Ք.ժ.ա. IX-VII դարերում Եգիպտական պետությունը աստիճանաբար թուլացավ, պարբերաբար ենթարկվելով հարևան ցեղերի և պետությունների արշավանքներին և ժամանակ առ ժամանակ նվաճվելով նրանց կողմից:

Հին Եգիպտոսի մշակույթը համաշխարհային մշակույթի անբաժան մասն է: Ներկայացված են հին Եգիպտական մշակույթի հիմնական նվաճումները՝ հիերոգլիֆային գիրը, բնական գիտությունները, կրոնը, ճարտարապետությունը և քանդակագործությունը: Օրացույցի, բժշկագիտության և այլ կարևոր բնագավառներում Եգիպտացիների ձեռք բերած հաջողությունների օրինակով ցույց է տրվում Հին Եգիպտոսի մշակույթի համաշխարհային նշանակությունը:

Հին Միջագետքի քաղաքակրթության պատմությունը ներկայացված է § 5, § 6, § 7, § 8-ում: Միջագետքի բնակլիմայական և աշխարհագրական պայմաններով էր պայմանավորված այստեղ բնակչության վաղ անցումը նստակյաց կյանքի: Ի տարբերություն Եգիպտոսի, Միջագետքի տարածքը բնականից պաշտպանված չէր, ինչով էլ բացատրվում է այստեղ էթնիկապես տարբեր պետական կազմավորումների առաջացումը: Ներկայացված են Ք.ժ.ա. III հազարամյակում Միջագետքում ձևավորված պետական կազմավորումների՝ շումերական քաղաք-պետությունների, Աքքադի թագավորության և Ուրի III դինաստիայի պատմությունը:

Ք.ժ.ա. II հազարամյակը Միջագետքի պետությունների հետագա հզորացման փուլն էր: Անկում ապրած պետությունների փոխարեն հանդես են գալիս նորերը՝ Աշշուրը (հետագայի Ասորեստանը), Բաբելոնի Հին թագավորությունը, Միտաննին, Էլամը, որոնք սկսում են կարևոր դեր խաղալ Առաջավոր Ասիայի քաղաքական կյանքում:

Ք.ժ.ա. II հազարամյակի առաջին կեսը Միջագետքի պետությունների քաղաքական և տնտեսական վերելքի ժամանակաշրջանն էր: Այդ պետությունները արտահանում էին իրենց արհեստագործական ու գյուղատնտեսական արտադրանքը հարևան երկրներ՝ Միջագետք

ներմուծելով մետաղներ, շինաքար և փայտանյութ, որոնցով հարուստ էին, այդ թվում՝ Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանները:

Համաուրապիի օրենսգիրքը աշակերտին մատուցելիս անհրաժեշտ է հատուկ ընդգծել դրա ստեղծման հիմնական դրդապատճառը՝ կենտրոնական իշխանության ամրապնդումը, որը հենվում էր մասնավոր սեփականության հաստատման վրա: Համաուրապիի օրենսգրքում ներկայացված օրենքներից գիտենք, որ Բաբելոնում կային արքայական, տաճարային և մասնավոր տնտեսություններ, թույլատրվում էր հողաբաժինների առք ու վաճառքը, մեծ դեր ունեին այգեգործությունը և առևտուրը:

Ք.ճ.ա. I հազարամյակի սկզբներին Միջագետքում ձևավորվեց ժամանակի Առաջավոր Ասիայի հզորագույն տերությունը՝ Ասորեստանը: Համեմատաբար մանրամասն ներկայացված է ասորեստանյան պետության գոյության վերջին փուլը, նրա վերածվելը աշխարհակալ տերության, հարաբերությունները Վանի թագավորության հետ: Ներկայացված են Ասորեստանի բանակի կառուցվածքը, նվաճողական պատերազմներ վարելու մեթոդները: Նվաճված երկրների վրա Ասորեստանի դրած ծանր հարկերը և դրանց հավաքման արտակարգ դաժանությունը սարսափազդու էին, ինչը միայն ավելացնում էր Ասորեստանի նկատմամբ հպատակեցված ժողովուրդների ատելությունը և հարուցում էր հարևան երկրների ընդհանուր թշնամությունը:

Ք.ճ.ա. VII դարի վերջերին Ասորեստանի փլատակների վրա ստեղծվեց Բաբելոնի Նոր թագավորությունը: Ք.ճ.ա. VII-VI դարերում այն վերածվեց ժամանակի հզորագույն տերության՝ դառնալով կործանված Ասորեստանի ժառանգորդը: Բաբելոն քաղաքում կառուցված հիասքանչ տաճարները, Կախովի այգիները, քաղաքի երկշարք պարիսպները, կամուրջները և այլն, պետության տնտեսական հզորության լավագույն ապացույցն են:

Ներկայացված են Միջագետքի ժողովուրդների ստեղծած մշակութային հիմնական արժեքները՝ կրոնը, սեպագիրը, գրականությունը, արվեստը և բնական գիտությունները, որոնք համաշխարհային մշակույթի անբաժանելի մաս են: Ոչ միայն Միջագետքում, այլև Եգիպտոսում, մաթեմատիկայի և աստղագիտության զարգացման բարձր մակարդակը բացատրվում էր գյուղատնտեսության պահանջներով, օրինակ՝ հեղեղումներից հետո հողաբաժինների մակերեսի վերաբաժանման և գետերի վարարումների ժամանակը հաշվարկելու համար:

§ 9-ում անդրադառնում ենք Փոքր Ասիայի և Արևելյան Միջերկրականի քաղաքակրթություններին: Նախ ներկայացվում են Փոքր Ասիայի աշխարհագրական և բնակլիմայական պայմանները, այստեղ ձևավորված քաղաք-պետությունները, որոնց հետագա միավորմամբ Ք.ճ.ա. XVII դարում առաջ եկավ Առաջավոր Ասիայի հզորագույն պետություններից մեկը՝ Խեթական թագավորությունը: Արժևորվում է Խեթական տերության ունեցած կարևոր դերը ժամանակի տնտեսական կյանքում (մետաղների մշակում, զարգացած զինագործություն, միջազգային առևտուր): Հատուկ ընդգծվում են Խեթական պետության և Հայկական լեռնաշխարհի վաղ պետությունների միջև գոյություն ունեցած առնչությունները: Խեթական պետության ժողովուրդների մշակույթը ներկայացնում են կրոնը, գիրը, արվեստը:

Այս պարագրաֆի վերջում համառոտ ներկայացված է Արևելյան Միջերկրականի երկրների՝ փյունիկյան քաղաք-պետությունների և Հրեական պետություն քաղաքական

պատմությունը: Հատուկ շեշտադրվում է համաշխարհային մշակույթի գանձարանում նրանց կատարած ներդրումը՝ այբբենական գիրը, միաստվածային կրոնը և այլն:

Այբուբենի տարածման պատմությունը ժողովուրդների մշակութային փոխներագրման վառ օրինակ է: Ստեղծվելով փյունիկեցիների կողմից՝ այն ավելի ուշ փոխ առան Փոքր Ասիայի ժողովուրդները, որոնցից էլ այն փոխանցվեց հույներին: Հույներն այն կատարելագործեցին՝ հավելելով ձայնավոր նշանները, ինչը օրինակ ծառայեց այլ այբուբենների ստեղծման համար:

§ 10-ում ներկայացված են Հին Արևելքի քաղաքակրթության երկու ամենահեռավոր կենտրոնները՝ Հնդկաստանը և Չինաստանը:

Հնդկաստանի հնագույն քաղաքակրթությունը երկրի հյուսիս-արևմուտքում Ք.ժ.ա. II հազարամյակում ստեղծված Սոհենջոդարոյի և Խարապպայի մշակույթն էր: Նույն հազարամյակի վերջերին Հնդկաստան ներխուժեցին արիական ցեղերը և ստեղծեցին իրենց պետությունները: Տեղի նվաճված ժողովուրդներին հնագանդության մեջ պահելու նպատակով արիացիները մտցրեցին բնակչության սոցիալական բաժանում (4 վառնաները), ինչն այսօր էլ պահպանվում է Հնդկաստանում: Հնդկական մշակույթին նվիրված մասում շեշտվում են այդ քաղաքակրթության նվաճումները լեզվաբանության, աստղագիտության, մաթեմատիկայի, բժշկության ոլորտներում:

Հին Չինաստանի մասում ներկայացվում են Հուանհե և Յանգզի գետերի հովիտներում Ք.ժ.ա. II հազարամյակի առաջին կեսում կազմավորված պետությունները: Հատուկ ընդգծվում է Չինաստանի կյանքում Ցին կայսրության խաղացած կարևորագույն դերը, որը միավորեց երկիրը մեկ պետության մեջ, հաստատեց վարչատարածքային նոր բաժանում, միատեսակ հարկեր, դրամի, չափի և կշռի ընդհանուր միավորներ և մեծապես խթանեց տնտեսության բոլոր բնագավառների զարգացումը:

Հան կայսրության ժամանակաշրջանում Չինաստանը, Ու-դի կայսեր նվաճումների շնորհիվ, ուղղակի կապ հաստատեց Միջին Ասիայի, Իրանի և Առաջավոր Ասիայի երկրների հետ: Հատուկ ընդգծվում է շուրջ 7000 կմ երկարություն ունեցող «Մետաքսի ճանապարհի» դերը: Հին Չինաստանի մշակույթի բաժնում կարևորվում են տարբեր ոլորտներում չին ժողովրդի տպավորիչ ձեռքբերումները՝ մետաքսի, թղթի, կոդմնացույցի գյուտերը: Չինացիներն աշխարհում առաջինը թելի տերևներն սկսեցին օգտագործել ըմպելիք (թեյ) պատրաստելու համար:

§ 11-ի դասանյութը նվիրված է Աքեմենյան պարսկական տերությանը, որը Հին Արևելքի քաղաքակրթությունների մեծ մասը առաջին անգամ միավորեց միասնական պետության մեջ:

Իրանի տարածքում քաղաքակրթության հնագույն կենտրոնը Էլամն էր, որը գտնվում էր Շումերի հարևանությամբ և որի մշակույթը զգալիորեն ազդվել է շումերականից: Էլամ պետությունը զոյատևեց շուրջ երկու հազարամյակ՝ հանդիսանալով շումերական պետությունների, Աքքադի, Ասորեստանի և Բաբելոնի ժամանակակիցն ու մրցակիցը:

Իրանում արմատական փոփոխություններ սկիզբ առան Ք.ժ.ա. II հազարամյակում՝ արիական ցեղերի ներգաղթի հետևանքով: Արիացիները տարածվեցին ողջ բարձրավանդակում, և արդեն Ք.ժ.ա. IX–VIII դարերում ձևավորվեցին մարերի և պարսիկների ցեղային միությունները:

Մարական ցեղերի միավորմամբ ստեղծվեց Մարաստան պետությունը, որը երկար ժամանակ ենթակա և հարկատու էր Ասորեստանին: Ք.ծ. ա. 625 թ. Կիաքսար արքայի օրոք Մարաստանը անկախացավ Ասորեստանից, ապա Բաբելոնի նոր թագավորության հետ դաշնակցելով՝ կործանեց Ասորեստանը: Բաբելոնն ու Մարաստանը իրար մեջ բաժանեցին Առաջավոր Ասիայի մեծ մասը: Տեղին կլինի հիշատակել այդ գործում Պարույր Սկայորդու դերը:

Պարսկական Աքեմենյան պետության հիմքը դրեց Կյուրոս Մեծը, որին հաջողվեց 20 տարվա ընթացքում նվաճել Հայաստանը, ողջ Փոքր Ասիան և Միջագետքը, իսկ նրա հաջորդներին՝ Եգիպտոսը: Աքեմենյան պետության հետագա հզորացումը կապված է Դարեհ I-ի գործունեության հետ: Զենքի ուժով ստեղծված ոչ մի պետություն երկար գոյատևել չի կարող: Դարեհ I-ի կատարած վարչական և տնտեսական բարեփոխումների նպատակն էր տերության ողջ տարածքում մտցնել կառավարման միասնական համակարգ և տնտեսապես միմյանց կապել լայնածավալ տերության տարբեր մասերը: Դրան էին միտված կայսրության տարածքում լայն ճանապարհաշինությունը, արքայական ու տեղական դրամահատությունը, ինչպես նաև զրադաշտականությունը համապետական կրոն դարձնելու ջանքերը:

Աքեմենյան տերության մշակույթը ներկայացնելիս շեշտվում է այն հանգամանքը, որ յուրացվեցին ու տերության ողջ տարածքում կիրառություն ստացան Միջագետքի, Փոքր Ասիայի, Իրանի և մյուս ժողովուրդների քաղաքակրթական ու մշակութային նվաճումներն ու արժեքները, ինչը արտահայտվել է Դարեհ I-ի կառուցած նոր մայրաքաղաք Պերսեպոլիսում:

Առաջին թեմայի վերջին՝ § 12-ը նախատեսված է թեմատիկ ամփոփման համար: Ամփոփիչ հարցերը ներառում են Հին Եգիպտոսի, Միջագետքի, Փոքր Ասիայի, Արևելյան Միջերկրականի երկրների, Հին Իրանի, Հնդկաստանի և Չինաստանի պատմությունը: Առաջադրվող հարցերին սովորողների տրվելիք պատասխանները կոչված են ապահովելու հետադարձ կապը՝ փաստելու անցած դասանյութերի յուրացման մակարդակը և կարող են հիմք ծառայել աշակերտների քառորդային/կիսամյակային գնահատման համար:

Ամփոփիչ դասի անցկացման մասին աշակերտները պետք է տեղեկացվեն օրեր առաջ: Այդ դասի առաջին 10-15 րոպեն կարելի է հատկացնել ուղղորդված հարցերի միջոցով աշակերտների մեջ թեմայի հիմնական եզրահանգումները թարմացնելուն, ընդ որում՝ օգտակար կլինի, եթե տրվող հարցերը որոշակի կապ ունենան հանձնարարվելիք թեստի հարցերի հետ: Դրանից հետո անհրաժեշտ է աշակերտներին բացատրել թեստի հարցերին պատասխանելու կարգը, թե ինչպես է պետք նշել ընտրովի պատասխաններից ճիշտը, և ինչպես պատասխանել գրավոր շարադրանք պահանջող հարցերին: Ցանկալի է, մինչ ամփոփիչ դասը, աշակերտների համար փորձնական պարապմունք անցկացնել՝ թեստային հարցերին պատասխանելու կարգին վարժվելու համար :

ԹԵՄԱ 2. ԱՆՏԻԿ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ, ՀԻՆ ՀՌՈՍ

Այս թեմայի համեմատաբար մանրամասն ուսումնասիրությունը պայմանավորված է եվրոպական քաղաքակրթության ձևավորման վրա Հին Հունաստանի և Հռոմի ունեցած քաղաքակրթական, գաղափարական և մշակութային բացառիկ ազդեցությամբ: Հին Հունաստանի և Հին Հռոմի պատմությանը դասագրքում հատկացված է յուրաքանչյուրին 10-ական պարագրաֆ

Նախ անդրադառնում ենք հունական քաղաքակրթության սկզբնավորմանը Կրետե կղզում, քաղաք-պետությունների, ապա միասնական պետության ստեղծմանը, դրա յուրօրինակությանը և մեծ ազդեցությանը մայրցամաքային Հունաստանի զարգացման ընթացքի վրա: Կրետեն ուներ ոչ միայն հարուստ բնական պայմաններ, այլև նպաստավոր դիրք՝ ծովային կապեր հին Եգիպտոսի և Առաջավոր Ասիայի քաղաքակրթությունների հետ: Կրետական պետությունը հաճախ անվանում ենք ծովապետություն: «Ծովապետություն» տերմինը վկայում է Կրետեի՝ շրջակա կղզիների և մայրցամաքային Հունաստանի առափնյա բնակավայրերի վրա Ք. ծ.ա. II հազարամյակի կեսերին ունեցած տիրապետող դիրքը:

Կրետեից քաղաքակրթությունը տարածվեց, ընդգրկելով Պելոպոնես թերակղզին և Հունաստանի առափնյա շրջաններն ու կղզիները, ուր Ք.ծ.ա. II հազարամյակի սկզբին հաստատվել էին աքայացիների և հոնիացիների հունական ցեղերը: Այստեղ ևս առաջացան քաղաք-պետություններ՝ Միկենքը, Պիլոսը, Տիրինոսը, Աթենքը և այլն: Հունական նոր ցեղերի՝ դորիացիների և էոլացիների Ք.ծ.ա. II հազարամյակի վերջին ներխուժման հետևանքով կրետե-միկենյան քաղաքակրթության հին օջախները կործանվեցին:

Արիայիկ դարաշրջանում (Ք.ծ.ա. VIII-VI դարեր) որակական կարևոր փոփոխություններ տեղի ունեցան: Դորիացիների և էոլացիների հունական ցեղերի ներխուժման արդյունքը ոչ միայն հունական ցեղերի հետագա տարածումն էր Ատտիկայում, Պելոպոնեսում, Կիպրոսում և Փոքր Ասիայի առափնյա շրջաններում, այլև Հունաստանի ժամանակավոր հետադիմումը:

Հունաստանում քաղաքակրթության նոր օջախներ սկսեցին ձևավորվել Ք.ծ.ա. VIII-VI դարերում: Ավարտին էր մոտենում հույն ժողովրդի կազմավորման և քաղաք-պետությունների առաջացման գործընթացը, ձևավորվում էին ընդհանուր լեզուն, կրոնը և մշակութային ընդհանրությունը: Մակայն համայնական կարգից պետությանը անցման ժամանակաշրջանում սկսվեց նաև հույն ժողովրդի արտագաղթը դեպի հարևան երկրներ: Այդ գործընթացի հետևանքն էր Մեծ գաղութացումը՝ բազմաթիվ հունական պոլիսների հիմնումը օտար ափերին, ինչպես նաև պոլիսների մեծ մասում տիրանիայի (բռնապետության) հաստատումը, որը այդ անցումային փուլում առաջադիմական դեր խաղաց հասարակության կյանքում:

Հույն ժողովրդի կազմավորման գործընթացը լավ ուսումնասիրված է և կարելի է այն աշակերտներին մատուցել համեմատություն կատարելով հայ ժողովրդի կազմավորման հետ: Իրար ազգակից տարբեր ցեղերի մասնակցությունը հույն ժողովրդի կազմավորմանը իհարկե երկարաձգեց այդ գործընթացը ավելի քան երկու հազարամյակ, բայց և արդյունքում ձևավորվեց ինքնատիպ հույն ազգը իր հարուստ մշակույթով:

Սպարտական և Աթենական պոլիսների օրինակով ներկայացված են հունական քաղաք-պետությունների ձևավորման 2 հիմնական տարատեսակները: Բացատրվում է, թե ինչ գործոնների ազդեցությամբ էր հունական պոլիսներում հաստատվում արիստոկրատական (Սպարտա), կամ դեմոկրատական (Աթենք) կառավարման կարգ: Կարևոր է ընդգծել դրանց բնորոշ ընդհանրությունը՝ այն, որ պոլիսը քաղաքացիների միավորումն էր ընդդեմ ոչ քաղաքացիների (հարևան ցեղեր, ստրուկներ, եկվորներ) :

Պետության առաջացումը ուղեկցվում էր գրավոր օրենքների ստեղծումով: Սովորույթային օրենքներն օգտագործելով՝ արիստոկրատները տիրանում էին համայնական լավա-

գույն հողամասերին, և գրավոր օրենքների ընդունումը պետք է օգներ համայնքի հասարակ անդամներին պաշտպանելու իրենց հողաբաժինները զավթումից: Չնայած որ դեմոսի պահանջով ընդունվեցին արքունտ Դրակոնի կազմած օրենքները, որոնք դաժան պատժամիջոցներով պաշտպանում էին ձևավորվող մասնավոր սեփականությունը, հասարակ մարդկանց վիճակը դրանով չբարելավվեց, ինչը ի վերջո ստիպեց Սոլոնին ուղղակի վերացնել պարտաքարերն ու պարտային ստրկությունը:

Աթենական ժողովրդավարության հետագա ծաղկմանը նպաստեցին հույն-պարսկական պատերազմներում հունական պոլիսների, մասնավորապես Աթենքի, տարած հաղթանակները: Պատերազմներից հետո Աթենական պետության տնտեսական և քաղաքական հզորացումը նպաստավոր պայմաններ ստեղծեց դեմոկրատիայի ծաղկման և մշակութային աննախադեպ նվաճումների համար: Կանոնավորապես գործում էին Աթենական պետության կառավարման դեմոկրատական օրգանները, պետության քաղաքացիները բարգավաճում էին, տնտեսությունը և մշակույթը ծաղկում էին ապրում: Աթենքը զարդարվեց բազում գեղեցիկ հասարակական շինություններով և վերածվեց Հունաստանի տնտեսական, գիտական և մշակութային կենտրոնի:

Ք.ճ.ա.V դարի կեսից IV դարի կեսերն ընկած մեկդարյա ժամանակաշրջանը ընդունված է անվանել Դասական դարաշրջան, երբ հունական քաղաքակրթությունը հասավ իր բարձրագույն ծաղկմանը: Պոլիսների ազատ քաղաքացիները բավարար միջոցներ և ազատ ժամանակ ունեին ակտիվ հասարակական կյանք վարելու համար: Իրենց ժամանակի մեծ մասը նրանք անցկացնում էին հասարակական վայրերում, այդ պատճառով էլ տաճարները, ճեմասրահները և հասարակական այլ շենքերը շատ ավելի խնամքով ու ճոխությամբ էին կառուցված, քան բնակելի տները: Տանը իրենց ժամանակն անց էին կացնում միայն կանայք:

Պոլիսներից յուրաքանչյուրը առանձին պետություն էր, բայց բոլոր հույներին միավորում էին ընդհանուր լեզուն, կրոնը, ծեսերն ու համահունական մարզախաղերը: Համառոտ անդրադարձել ենք հին հույների կրոնական պատկերացումներին, ներկայացրել Օլիմպիական աստվածների ընտանիքը: Ոչ միայն հին հունական, այլև հայոց դիցարանին բնորոշ էր աստվածների մարդակերպ (անտրոպոմորֆ) տեսքն ու մարդկային վարքագիծը: Իսկ հունական աստվածները հաճախ նաև խառնվում էին մարդկանց անձնական գործերին:

Հին հույների համար կարևոր էր քաղաքացիների կրթված լինելը, քանի որ նրանց պատկերացմամբ լիարժեք մարդը պետք է լիներ և՛ գրագետ, և՛ ֆիզիկապես առողջ: Պոլիսների քաղաքացիները մեծամասնությունը գրագետ էր, նաև զբաղվում էր սպորտով, քանի որ յուրաքանչյուրը պարտավոր էր ծառայելու բանակում: Մրցախաղերին մասնակցելը համարվում էր ազատ քաղաքացիների մենաշնորհը: Առանձնապես կարևոր էին այդ առումով համահունական Օլիմպիական խաղերը: Պատահական չէ, որ խաղերի ընթացքում անգամ դադարեցվում էին պատերազմները: Նույնիսկ իրենց թվագրությունը հույները հաշվում էին սկսած առաջին օլիմպիադայից: Համահունական միավորիչ դեր ունեին նաև Դելֆյան մրցումները:

Հին հույների կյանքում առանձին կարևորություն ուներ թատրոնը: Ժամանակակից թատրոնի բոլոր հիմնական ուղղությունները ձևավորվել են արդեն իսկ Հին Հունաստանում: Թատերական ներկայացումները հաճախ գրվում էին ժամանակի արդիական թեմաներով և օգնում էին մարդկանց կողմնորոշվել քաղաքական, իրավական և տնտեսական հարցերում:

Համառոտ ներկայացրել ենք նաև հունական առավել հայտնի առասպելները, սակայն ցանկալի է աշակերտներին հանձնարարել լրացուցիչ գրականություն կարդալ և հարցի վերաբերյալ դասարանում քննարկում կազմակերպել:

Հունաստանի տնտեսական, քաղաքական և մշակութային անկումը Ք.ձ.ա. IV դարի ընթացքում պայմանավորված էր Պելոպոնեսյան պատերազմում Սպարտայից Աթենքի կրած պարտությամբ և մեկ պետության մեջ հունական պոլիսները միավորելու փորձի ձախողմամբ: Արդյունքում, պոլիսային կարգը հայտնվեց խոր ճգնաժամի մեջ, Հունաստանը սկսեց տնտեսական և մշակութային անկում ապրել: Վերսկսվեցին պատերազմները պոլիսների միջև, տարածվեց վարձկանությունը, բնակչության արտագաղթը երկրից մեծ չափերի հասավ:

Հունաստանի անկումից օգտվեց հարևան Մակեդոնիան, որը, հզորանալով, հպատակեցրեց Հունաստանը: Մակեդոնիայի և Հունաստանի ուժերի միավորումը հնարավորություն տվեց պայքար սկսելու Պարսկական տերության դեմ նոր տարածքներ ձեռք բերելու համար:

Ալեքսանդր Մակեդոնացին 10 տարի տևած արշավանքի արդյունքում կարողացավ նվաճել Պարսկական տերությունը, հասնել մինչև Հնդկաստան և ստեղծել մի ընդարձակ կայսրություն: Աշակերտներին ուշադրությունը պետք է հրավիրել այն հանգամանքի վրա, որ Ալեքսանդրի արշավանքը օգտակար եղավ հայ ժողովրդի համար: Հայաստանը, ազատվելով պարսկական տիրապետությունից, կարողացավ վերականգնել իր անկախությունը:

Ալեքսանդրի մահից հետո նրա կայսրությունը տրոհվեց, նրա տարածքում ձևավորվեցին բազմաթիվ հելլենիստական պետություններ: Ուսուցչի խնդիրն է աշակերտներին սովորեցնել տարբերակել հունական և հելլենիստական մշակույթը: Դա հարմար է բացատրել հենց Հայաստանի օրինակով, որը թեև Ալեքսանդրի կողմից չէր գրավվել, բայց մեր ազգային մշակույթը որոշակիորեն համեմվել էր հունական մշակույթի տարրերով, իսկ հունարենը կիրառվում էր պաշտոնական գրագրության մեջ:

Ալեքսանդրի նվաճումների արդյունքում սկսվեց հելլենիզմի դարաշրջանը: Եգիպտոսից, Մակեդոնիայից և Մելնկյան տերությունից բացի, ձևավորվեցին տասնյակից ավելի հելլենիստական փոքր պետություններ, այդ թվում Հայաստանը: Բազմազան և անզնահատելի է հելլենիստական նվաճումների ներդրումը համաշխարհային քաղաքակրթության մեջ: Դրանց թվում հիշատակելի են Ալեքսանդրիայի գիտական կենտրոն Մուսեյոնը և Փարոս կղզում կառուցված լուսաշտարակը, Հռոդոսի կոլոսը, Հալիկառնասի դամբարանը, Անտիոքի և Պերգամի հարուստ գրադարանները, գրքեր գրելու նոր միջոցի՝ մագաղաթի պատրաստումը և այլն:

Նկատի ունենալով Հին հունական քաղաքակրթության նվաճումների կարևորությունը, սույն թեմայի § 22-ը ևս նախատեսել ենք որպես միջանկյալ ամփոփիչ թեստ՝ հետադարձ կապի միջոցով ստուգելու սովորողների՝ Հունաստանի վերաբերյալ նյութի ընկալման մակարդակը:

Հին Հռոմի քաղաքակրթությանը անդրադառնալիս, սկզբից նեթ պետք է նշել «Հռոմ» անվան կիրառության երկակի իմաստը.

- Հռոմը որպես քաղաք, որ հիմնադրել են լատին ցեղերը Տիբեր գետի միջին հոսանքում,

- Հռոմը որպես պետություն, որ սկզբում թագավորություն էր, հետո (Ք.ծ.ա. 509-30 թթ.) հանրապետություն, իսկ այնուհետև՝ կայսրություն:

Նախ ներկայացվում է Իտալիայի էթնիկական պատկերը Ք.ծ.ա. I հազարամյակում: Ապա անդրադառնում ենք Հռոմի հիմնադրմանը, պետության կառավարման կարգին և սոցիալական կառուցվածքին թագավորական ժամանակաշրջանում: Հռոմի հիմնադրման ստույգ արձանագրված տարեթիվ գոյություն չունի: Ավանդաբար ընդունված է Ք.ծ. ա. 753 թվականը, ի տարբերություն Երևանի, որի հիմնադրման ժամանակը վկայված է արձանագրությամբ: Այս առումով տեղին կլինի, որ ուսուցիչը աշակերտներին առաջարկի հաշվարկել Հռոմի և Երևանի տարիքը, պարզելու, թե նրանցից որն է «ավելի տարիքով»:

Տեղին է համեմատել Սերվիոս Տուլիոսի և Աթենքում Սոլոնի անցկացրած բարեփոխումները: Այդ բարեփոխումները ծառայում էին նույն նպատակին, ինչը իրականացվեց Սոլոնի բարեփոխումներով՝ քաղաքացիներին դասերի բաժանման հիմքում դրվեց ոչ թե նրանց ծագումը, այլ նրանց ունեցվածքի չափը:

Հռոմեական հանրապետության կազմավորումն ընթանում էր պատրիկների և պլեբեյների սուր պայքարի պրոցեսում: Պայքարը հողի նկատմամբ սեփականության և քաղաքացիական իրավունքների համար էր, ինչից պլեբեյները զրկված էին: Պատրիկների և պլեբեյների 2 դար տևած պայքարն ավարտվեց նրանց իրավունքների հավասարեցմամբ: Այդուհետ պլեբեյները ևս կարող էին ընտրվել ցանկացած պետական պաշտոնում, հողային սեփականություն ունենալ: Ձևավորվեց այն հասարակությունը, որը շատ կոդմերով օրինակելի էր. Հռոմի բոլոր քաղաքացիները, անկախ ծագումից, դիրքից և ունեցվածքից, օրենքի առաջ հավասար էին:

Պատրիկների և պլեբեյների պայքարի արդյունքում ոչ միայն ընդունվեցին առաջին գրավոր օրենքները, այլև վերջնականապես ձևավորվեց Հռոմեական հանրապետության կառավարման կարգը, որը միաժամանակ և՛ արիստոկրատական էր, և՛ դեմոկրատական: Դեմոկրատական էր, քանի որ պետության բարձրագույն մարմինը, որն ընտրում էր բոլոր պաշտոնյաներին, ժողովրդական ժողովն էր: Պետական բոլոր պաշտոնները գույգ էին և հստակ սահմանված ժամկետով, սակայն պաշտոն վարելը անվճար էր և անձնական մեծ ծախսեր էր պահանջվում: Բացի դրանից, մշտապես գործող բարձրագույն պետական մարմինը Սենատն էր, որի անդամ կարող էին լինել նախկինում պետական պաշտոն զբաղեցրած հարուստ նոբիլները: Այս առիթով նպատակահարմար է Հռոմեական հանրապետության կառավարման կարգը համեմատել Աթենական դեմոկրատիայի հետ՝ պարզելու թե նրանցից որն էր ավելի դեմոկրատական:

Թեմայի առանցքային հարցերից է Հռոմի վարած նվաճողական պատերազմների և դրանց հաջողության պատճառների ուսումնասիրությունը: Նվաճված տարածքները հայտարարվում էին «հասարակական հող», որից Հռոմի քաղաքացիներին թույլատրվում էր հողաբաժիններ գնել կամ վարձակալել: Հետևաբար, նոր տարածքների նվաճումը շահավետ էր Հռոմի բոլոր քաղաքացիների համար:

Հռոմի հաջողությունները պետք է բացատրել պետության լավ մտածված ռազմական կազմակերպությամբ, ճկուն դիվանագիտությամբ, հակառակորդների համեմատ Հռոմի բոլոր քաղաքացիների ընդհանուր շահերով և արտակարգ համախմբվածությամբ: Կարթագենի, Մակեդոնիայի, Սելևկյան տերության դեմ տարած հաղթական պատերազմների արդյունքում

ձևավորվեց հռոմեական պրովինցիաների համակարգը և Հռոմը վերածվեց ստրկատիրական հզոր տերության: Դրա բնական հետևանքները եղան մի կողմից՝ ստրուկների խոշոր ապստամբությունները, մյուս կողմից՝ Իտալիայում գյուղացիության հողազրկումը, ինչը հանգեցրեց Հռոմում սոցիալական լարվածության ուժեղացմանը և Գրակքոս եղբայրների ձեռնարկած անհեռանկար բարեփոխումների փորձերին:

Հռոմում աստիճանաբար խորացող հանրապետական կարգի ճգնաժամի պատճառները վերլուծելիս, պետք է աշակերտների ուշադրությունը հրավիրել այն իրողությանը, որ թեև Հռոմը քաղաք-պետությունից վերածվել էր լայնածավալ տերության, պետության կառավարման կարգը մնացել էր նախկինը: Հանրապետական կառավարման ընտրովի մարմինները չէին կարողանում արագ և ճկուն արձագանքել պետությանը սպառնացող ներքին ու արտաքին վտանգներին՝ ազատագրական ելույթներ, թշնամու ներխուժումներ, ստրուկների ապստամբություններ և այլն:

Հռոմում մենիշխանություն հաստատելու առաջին փորձը կատարեց գորավար Կռոնելիոս Մուլլան: Հաղթելով Միհրդատ Եվպատորին, Մուլլան իր բանակով վերադարձավ Իտալիա, գրավեց Հռոմը ինչպես մի թշնամական քաղաք և Ք.ճ.ա. 82 թ. հարկադրեց Մենատին, օրենքը խախտելով, իրեն հռչակել ցմահ դիկտատոր: Նա փոփոխեց պետության կառավարման կարգը. Մենատի կազմը 300-ից հասցվեց 600-ի՝ լրացվելով Մուլլայի կողմնակիցներով, պետական պաշտոնյաների թիվն ավելացավ, բայց իրավունքները կրճատվեցին, ժողովրդական ժողովը և ժողովրդական տրիբունի պաշտոնը դարձան ձևական:

Մուլլայի մահից մի քանի տարի անց Իտալիան ցնցեց ստրուկների հզոր ապստամբությունը Սպարտակի գլխավորությամբ, որը Հռոմը ճնշեց մեծ դժվարությամբ: Դա ավելի ակնհայտ դարձրեց Հռոմում միանձնյա ուժեղ իշխանություն հաստատելու անհրաժեշտությունը:

Քանի որ Հռոմում ծավալված այս և հետագա իրադարձությունները սերտորեն առնչվում են Հայոց պատմությանը, և դա արտացոլված է դասանյութում՝ թե՛ Միհրդատյան պատերազմի, թե՛ Պոմպեոսի, թե՛ Կրասոսի արշավանքի կապակցությամբ, ցանկալի է, որ ուսուցիչը ուշադրություն հրավիրի հայ-հռոմեական առնչությունների ազդեցությանը և Հռոմի ու Հայոց պատմության վրա:

Ք.ճ.ա. I դարի կեսերին Հռոմում միանձնյա իշխանության ձգտում էին 3 հանրահայտ գործիչներ՝ Հռոմի ամենահարուստ մարդ Մարկոս Կրասոսը, Տիգրան Մեծին հաղթած գորավար Գնեոս Պոմպեոսը և Հռոմում մեծ ժողովրդականություն վայելող Հուլիոս Կեսարը: Իրենց ընթացիկ նպատակներին հասնելու համար Կեսարը, Կրասոսը և Պոմպեոսը համաձայնության եկան և Ք.ճ.ա. 60 թ. գաղտնի դաշինք կնքեցին՝ առաջին Եռապետությունը: Մրաշնորհիվ էր, որ յուրաքանչյուրը անձնական բարձր հեղինակություն և մեծ թվով կողմնակիցներ ձեռք բերեց:

Հռոմեական հանրապետությունում մենիշխանություն հաստատելու գործընթացը արտահայտվեց Կրասոսի սպանությանը հաջորդած Պոմպեոսի և Կեսարի բացահայտ հակամարտությամբ: Անհրաժեշտ է ընդգծել, որ, անկախ նրանից, թե կողմերից որը կհաղթեր, հանրապետական կառավարման փոխարինումը Հռոմում միապետական կառավարմամբ արդեն կանխորոշված էր: Դրա վկայությունն է այն, որ, չնայած նոբիլների կողմից Կեսարի սպանությանը, վերադարձ դեպի հանրապետական կարգը տեղի չունեցավ: Հռոմեական

պլեբսը վաղուց անտարբեր էր քաղաքական անցուղարձի նկատմամբ: Նրան պետք էին միայն «հաց և հանդեսներ»:

Հուլիոս Կեսարի իրավահաջորդը դարձավ նրա ազգական և ժառանգորդ, ակնառու քաղաքական գործիչ Օկտավիանոսը, որին դժվարությամբ հաջողվեց հաղթել իր հիմնական մրցակից Անտոնիոսին: Մա առիթ է կրկին անդրադառնալու հայոց պատմության իրադարձություններին՝ դրանք կապելով ժամանակի միջազգային հարաբերությունների հետ:

Օկտավիանոսի հաղթանակով Հռոմեական պետությունում փաստորեն հաստատվեց նրա մենիշխանությունը: Սակայն, հիշելով Կեսարի տխուր ճակատագիրը, նա խուսափեց դիկտատոր կամ թագավոր հռչակվելուց: Աշակերտներին պետք է բացատրել, որ թեև Օկտավիանոսը բացահայտ մեծ իշխանություն չէր ստանձնել և կառավարում էր պետությունը Մենատի ու ժողովրդի անունից, իրականում հռոմեական պետությունում ոչ մի կարևոր հարց առանց նրա համաձայնության չէր լուծվում: Հանրապետական իշխանության բոլոր մարմինները ձևականորեն շարունակում էին գործել: Օկտավիանոսը նույնիսկ դիկտատորի կոչում չստացավ, ինչպես Կեսարը, բայց նա փաստորեն Հռոմի միանձնյա և գերագույն տիրակալն էր: Նա իմպերատոր էր՝ բոլոր լեգեոնների հրամանատարը, բազմիցս ընտրվեց կոնսուլ, ուներ ժողովրդական տրիբունի ցմահ իշխանություն, գերագույն քուրմ էր և այլն: Նրա իշխանության հենարանը ոչ միայն բանակն էր, այլև հռոմեական հասարակության մեծ մասը, որին ձեռնտու էր պետության մեջ ուժեղ իշխանության, կարգ ու կանոնի հաստատումը:

Տրամաբանական ավարտին հասցվեց այն գործընթացը, որը սկսվել էր Սուլլայի օրոք և շարունակվեց Օկտավիանոս-Օգոստոսի կառավարման շրջանում: Պետական հարցերը լուծում էր կայսրը Մենատի օգնությամբ: Հռոմի հասարակ քաղաքացիներն այլևս պետության կառավարմանը չէին մասնակցում:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել Արևելքում Օկտավիանոս-Օգոստոսի վարած արտաքին քաղաքականությանը, որի հիմնական նպատակակետը Հայաստանն էր: Հասկանալով, որ երկիրը պրովինցիայի վերածել հայ ժողովուրդը չի հանդուրժի, Օգոստոսը կարողացավ հաստատել մի կարգ, երբ ամեն հաջորդ հայոց արքա թագադրվելու էր հռոմեական կայսեր կողմից, ուրեմն և Հայաստանը հանդիսանալու էր Հռոմին դաշնակից (իմա՝ կախյալ) պետություն:

Հռոմեական կայսրությունը գոյատևեց ևս 500 տարի: Այդ ժամանակաշրջանի սկզբում՝ Ք.հ. I-II դարերում դեռևս հզոր Հռոմեական կայսրությունը շարունակում էր նվաճողական պատերազմներ վարել, ինչի արդյունքում ձեռք բերված նորանոր ստրուկները ապահովում էին ստրկատիրական տնտեսության պահանջները: Սակայն ստրուկի շահագործման վրա հիմնված տնտեսությունը զարգացման սահմանափակ հնարավորություններ ուներ և չէր կարող լայնորեն օգտագործել տեխնիկական նոր միջոցներ ու աշխատանքի ավելի կատարյալ գործիքներ: Ստրուկը, շահագրգռված չլինելով աշխատել տիրոջ համար, դրանք ուղղակի փչացնում էր կամ էլ կարող էր օգտագործել որպես զենք՝ տիրոջ դեմ:

Աշակերտների ուշադրությունը անհրաժեշտ է հրավիրել այն հանգամանքի վրա, որ երբ հետագա դարերում հռոմեական պետությունը այլևս ի վիճակի չեղավ շարունակելու նվաճողական պատերազմները և նոր ստրուկներ ձեռք բերելու, ստրկատիրական տնտեսությունը թևակոխեց ճգնաժամի փուլը: Դա իր հերթին առաջ բերեց և քաղաքական ճգնաժամ: Կայսրերը իրար էին հաջորդում, սակայն դրությունը ոչ թե լավանում, այլ ավելի էր վատթարանում: III դարի վերջին Դիոկղետիանոս կայսեր կատարած բարեփոխումները ևս չօգնեցին հաղթահարել ճգնաժամը:

Տնտեսական և քաղաքական ճգնաժամն արտահայտվեց նաև գաղափարական ոլորտում: Հին հեթանոսական կրոնը, նախկին հավատալիքները կորցրել էին իրենց նշանակությունը մարդկանց աչքում: Այդ պայմաններում սկսում է տարածվել նոր՝ քրիստոնեական կրոնը: Կոստանդին կայսրը 313 թ. Միլանի էդիկտով քրիստոնյաներին իրենց կրոնն ազատորեն դավանելու իրավունք տվեց, սակայն դա դեռ չէր նշանակում քրիստոնեության պետական կրոն դառնալ: Միայն IV դարի վերջին այն դարձավ Հռոմեական կայսրության պաշտոնական կրոնը: Կայսրերը, քրիստոնեությունը հովանավորելով, փորձում էին այն օգտագործել քայքայվող կայսրության միասնությունը պահպանելու համար: Բացի դրանից, Հռոմը արդեն կորցրել էր կայսրության տնտեսական և քաղաքական կենտրոնի իր դերը, և Կոստանդին կայսրը 330 թ. ծովային ու ցամաքային առևտրական ճանապարհների հատույթում հիմնեց նոր մայրաքաղաք, որը նրա անունով կոչվեց Կոստանդնուպոլիս:

Սակայն, փրկել քայքայվող կայսրությունը կործանումից այլևս անհնար էր: Նորանոր բարբարոսական ցեղեր էին ներխուժում կայսրության տարածքը: 395 թ. Հռոմեական կայսրությունը վերջնականապես բաժանվեց Արևմտյան և Արևելյան մասերի, իսկ 410 թ. վեստգոթերը նույնիսկ գրավեցին և թալանեցին մայրաքաղաք Հռոմը: Արևմտյան կայսրությունը ձևականորեն պահպանվեց մինչև 476 թ., երբ բարբարոս առաջնորդներից մեկը գահընկեց արեց կայսրին՝ վերջ դնելով Արևմտյան Հռոմեական կայսրության գոյությանը:

Հռոմեական քաղաքակրթության ձեռքբերումները, հասարակական և մշակութային կյանքը ներկայացնելիս հատուկ պետք է ընդգծել դրանց օրգանական կապը, բայց և զգալի տարբերությունը հունական քաղաքակրթությունից ու մշակույթից: Մշակույթի և կենցաղային բոլոր հարցերում հռոմեացիները գործնական վերաբերմունք էին դրսևորում: Նրանք կարող էին ուրիշներից (մանավանդ՝ հույներից) յուրացնել և կիրառել այն ամենը, ինչ օգտակար էր, բայց և կարողանում էին ինքնատիպ լուծումներ գտնել, ինչպես, օրինակ, բետոնի գյուտն էր, ակվեդուկների, շատրվանների, սալարկված ճանապարհների կառուցումը և այլն:

Հռոմեական մշակույթի առօրյա գործնական ուղղվածությունը պարզորոշ երևում է թե կրթության և գիտության համակարգում, թե՛ արվեստի բոլոր ճյուղերում: Օրինակ, անհրաժեշտ տեղեկություններ տալով հարևան երկրների բնական հարստությունների, ժողովուրդների բարքերի ու սովորույթների մասին, հռոմեացի գիտնականները դրանով իսկ օգտակար էին լինում Հռոմի պետական գործիչներին ու քաղաքացիներին՝ այդ երկրների հետ իրենց տնտեսական և քաղաքական հարաբերությունները կառուցելիս:

Պետք է նկատի ունենալ նաև Հռոմեական կայսրության քաղաքակրթական տևական դերակատարումը Առաջավոր Ասիայի, Արևմտյան և Հարավային Եվրոպայի ժողովուրդների կյանքում: Կարևոր է ընդգծել և հռոմեական մշակույթի վճռորոշ ազդեցությունը համաեվրո-

պական մշակույթի ձևավորման գործում: Պատահական չէ, որ հռոմեացիները շեշտելու համար Հռոմի առաջատար դերն աշխարհում, ասում էին, որ «Բոլոր ճանապարհները տանում են Հռոմ»: Այդ խոսքերում ոչ միայն հպարտություն կար սեփական պետության հանդեպ, այլև որոշակի մեծամտություն ու կայսերական վերաբերմունք մնացյալ աշխարհի նկատմամբ:

Երկրորդ թեմայի վերջին § 32-ը ևս նախատեսել ենք որպես միջանկյալ ամփոփիչ թեստ՝ հետադարձ կապի միջոցով ստուգելու սովորողների՝ Հին Հռոմի վերաբերյալ դասանյութի ընկալման մակարդակը: Ինչպես և նախորդ դեպքերում, ուսուցիչը կարող է իր հայեցողությամբ փոխարինել թեստի ցանկացած հարցը սույն ձեռնարկում զետեղված թեմատիկ այլ հարցերով:

ԹԵՄԱ 3. ԱՐԵՎՍՈՒՏՔԻ ԵՎ ԱՐԵՎԵԼՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՋՆԱՐԱՐՈՒՄ

Թեմայի դասանյութերը վերաբերում են աշխարհում քաղաքակրթության հետագա ընդլայնմանը միջին դարերի ընթացքում (V-XVII դարեր) և ներառում են քաղաքակրթության ինչպես հին, այնպես էլ նոր ձևավորված օջախների փոխազդեցության ուսումնասիրությունը:

Թեման բաղկացած է 26 պարագրաֆից, որոնցում ներկայացված են Եվրոպայի, Ասիայի և Ամերիկայի հիմնական քաղաքակրթությունների զարգացումը վաղ և զարգացած միջնադարի ընթացքում: Ընդ որում, հատկանշական է, որ այդ ժամանակաշրջանում Արևելքի և Արևմուտքի քաղաքակրթությունները զարգանում էին համահավասար՝ գտնվում էին գրեթե միևնույն մակարդակի վրա:

Ամենից առաջ անդրադառնում ենք «ժողովուրդների մեծ գաղթի» պատճառներին և հետևանքներին: Ապա ներկայացվում են Եվրոպայի ժողովուրդների տեղաշարժերի ընթացքը և դրանց արդյունքում Արևմտյան Հռոմեական կայսրության անկումը: Համառոտ անդրադառնում ենք Արևմտյան Եվրոպայում բարբարոսական նոր պետությունների կազմավորմանը:

Հաջորդ պարագրաֆում ներկայացվում է Կարլոս Մեծի և նրա ստեղծած կայսրության դերը Արևմտյան Եվրոպայի ժողովուրդների միասնականացման գործում, նրանցում Հռոմեական կայսրության քաղաքակրթական ժառանգության ու քրիստոնեական կրոնի տարածման և յուրացման ընթացքն ու հետևանքները:

Անժխտելի է Արևելահռոմեական կայսրության՝ Բյուզանդիայի դերը անտիկ քաղաքակրթությունների գիտակրթական արժեքների պահպանման և Արևելյան Եվրոպայի ժողովուրդների մեջ դրանց տարածման գործում: Համեմատաբար մանրամասն ներկայացված է Հուստինիանոս I-ի օրոք Բյուզանդիայի վարած ներքին ու արտաքին քաղաքականությունը: Հատուկ անդրադարձ է արված Մակեդոնական (Հայկական) արքայատոհմի ժամանակաշրջանում Բյուզանդիայի քաղաքական և մշակութային վերելքին: Ուսուցչի խնդիրն է այս դասանյութը սերտորեն առնչել հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանի դեպքերի և իրադարձությունների հետ, տալ Բյուզանդիայի վարած քաղաքականության գնահատականը:

Միջնադարյան քաղաքակրթության կարևոր օջախներից Արաբական խալիֆայությունը ձևավորվեց VII դարի կեսերին նոր կրոնի՝ Իսլամի շուրջ արաբական ցեղերի միավորումով: Ավելի քան մեկ դար տևած արշավանքների արդյունքում ստեղծվեց հսկայածավալ մի

տերություն, որի սահմանները ձգվում էին Իսպանիայից Հյուսիսային Աֆրիկայով մինչև Հնդկաստան: Խալիֆայության կազմի մեջ էին մտնում զարգացած մշակույթ ունեցող բազում երկրներ՝ Եգիպտոսը, Սիրիան, Միջագետքը, Միջին Ասիան, Հայաստանը և այլն: Արաբները կարողացան յուրացնել, զարգացնել և տարածել այդ ժողովուրդների գիտատեխնիկական նվաճումները խալիֆայության բոլոր երկրներում: Արաբ վաճառականները աշխույժ առևտուր էին վարում Արևմտյան Եվրոպայի, Չինաստանի և Հնդկաստանի միջև:

Տնտեսության վերելքը մեծապես նպաստեց գիտության և մշակույթի զարգացմանը: Խալիֆայության խոշոր քաղաքներում հիմնվում էին բարձրագույն դպրոցներ, զարգանում էին գիտական ուսումնասիրությունները: Արաբերենը դարձավ գիտության և գրականության լեզու: Արաբ մաթեմատիկոսները ստեղծեցին հանրահաշիվը, սկսեցին օգտագործել հնդիկների ստեղծած թվանշանները, որոնք եվրոպացիներին հայտնի դարձան որպես արաբական թվանշաններ: Իսպանիայում ձևավորված Կորդովայի խալիֆայությունը կապող օդակ հանդիսացավ Արևմտյան Եվրոպայի և արաբական աշխարհի միջև

Հաջորդ դասանյութը վերաբերում է Հին Ռուսական պետությանը: Նախ աշակերտներին ներկայացվում է արևելյան սլավոնների բնակության տարածքը, հիմնական զբաղմունքները, նիստուկացը, հարևանների հետ փոխհարաբերությունները: Այնուհետ անդրադարձ է կատարվում պետության առաջացման գործընթացին և առաջին իշխանների քաղաքականությանը պետության ընդարձակման և ամրապնդման ուղղությամբ: Բյուզանդիայի հետ տնտեսական և քաղաքական կապերի հաստատումը նպաստեց Ռուսիայում քրիստոնեության տարածմանը և որպես պետական կրոն ընդունմանը:

X դարում Ռուսիայում ձևավորվեցին ավատատիրական հարաբերություններ, առանձնացավ ազնվատոհմիկների՝ բոյարների խավը: Յարուսլավ Իմաստուն իշխանի օրոք ստեղծվեց նոր իրողություններին համապատասխանող գրավոր օրենքների ժողովածու, որն անվանեցին «Ռուսկայա պրավդա»: Մտցվեցին ընդհանուր օրենքներ պետության ողջ տարածքում, հանցանքների համար սահմանվեցին անարյուն պատիժներ: «Ռուսկայա պրավդա»-ի ստեղծումը վկայում էր հասարակության առաջընթացի մասին՝ ամրապնդվում էր իշխանի և ազնվատոհմիկների իշխանությունը: Յարուսլավի որդիների կառավարման ժամանակաշրջանում ժողովածուն խմբագրվեց և լրացվեց նոր օրենքներով: Ռուսիան կապեր հաստատեց եվրոպական այլ երկրների հետ:

Միջնադարյան Եվրոպայի երկրներում ձևավորված ավատատիրական հասարակարգի կառուցվածքը ներկայացված է § 38-ում: Նախ բացատրվում է ավատ/ֆեոդ հասկացությունը, ապա ներկայացվում է ավատական աստիճանակարգի կառուցվածքը և ենթակայության կարգը՝ ներառելով կաթոլիկ հոգևորականության տեղը և դերը այդ համակարգում: Այդուհետ ներկայացվում է ավատատիրոջ/ֆեոդալի իշխանությունը իրեն պատկանող տարածքում ապրող բնակչության նկատմամբ: Մանրամասն անդրադարձ է արվում ճորտ և համայնական գյուղացիների կարգավիճակի տարբերությանը, ընդգծվում է բնատնտեսության դերը որպես ֆեոդալական մասնատվածության հիմնական պատճառ:

Միջնադարյան քաղաքների առաջացման հիմքում ընկած էր արհեստի և առևտրի զարգացումը և դրանց անջատումը երկրագործությունից: Քաղաքներն առաջացան այն վայրերում, որտեղ հեշտ էր հումք ձեռք բերելը և պատրաստի արտադրանքը վաճառելը: Քաղաքներում բնակվող արհեստավորներն ու վաճառականները միավորվում էին՝ կազմելով

համաքարություններ և գիլդիաներ՝ իրար հետ չմրցակցելու, իրենց շահերն ու իրավունքները պաշտպանելու համար:

Խաչակրաց արշավանքների ընթացքում տեղի ունեցավ Արևմուտքի և Արևելքի միջնադարյան քաղաքակրթությունների առաջին լուրջ բախումը: Մանրամասն ներկայացվում են արշավանքների ներքին և արտաքին հիմնական պատճառները: Արշավանքների գաղափարական կազմակերպիչը և հովանավորը կաթոլիկ եկեղեցին էր, իսկ շարժիչ ուժը՝ արևմտյան Եվրոպայի երկրների աղքատ ասպետությունը: Պաղեստինում ձևավորված խաչակիր պետությունների միջոցով եվրոպական երկրները ծանոթացան Արևելքի քաղաքակրթությունների այնպիսի ձեռքբերումներին, ինչպես օրինակ՝ բաղնիքում լողանալը, պատառաքաղ, թաշկինակ, օձանելիք օգտագործելը, կոկիկ հագնվելը և այլն: Հասանելի դարձան բժշկության, մաթեմատիկայի, աստղագիտության և գիտության այլ ոլորտներում Արևելքի գիտնականների կատարած հայտնագործությունները: Ուսուցչի խնդիրն է աշակերտներին օգնել գնահատելու խաչակրաց արշավանքների թողած ազդեցությունը Կիլիկիայի Հայոց թագավորությունում տեղի ունեցող պատմական դեպքերի և իրադարձությունների վրա:

Արևմուտքի և Արևելքի միջնադարյան քաղաքակրթությունները կրկին իրար բախվեցին XIII դարում՝ մոնղոլ-թաթարական արշավանքների ընթացքում: Այս դասանյութը սկսվում է մոնղոլական ցեղերի շրջանում համայնական կարգի քայքայման և պետության առաջացման գործընթացի ներկայացմամբ: Ապա ներկայացվում են Չինգիզ խանի և նրա հաջորդների օրոք մոնղոլների կատարված լայնածավալ նվաճումները, որոնց արդյունքում ստեղծված Եվրասիական տերության սահմանները ձգվում էին Խաղաղ օվկիանոսից մինչև Ադրիատիկ ծով: 2,5 դար մոնղոլական տիրապետության տակ հայտնվեց Արևելյան Եվրոպայի ողջ տարածքը՝ ռուսական իշխանություններով հանդերձ: Կարճ ժամանակով մոնղոլական տիրապետության տակ էին նաև Լեհաստանը, Սլովակիան, Հունգարիան, հյուսիս-բալկանյան երկրները:

Գտնվելով զարգացման ավելի ցածր մակարդակի վրա, քան իրենց նվաճած երկրները, մոնղոլներն ի վիճակի չէրան երկար ժամանակ պահպանելու իրենց ստեղծած Եվրասիական պետությունը: Սակայն մեկ պետության մեջ բազմաթիվ երկրների միավորումը, ընդհանուր առմամբ, նպաստեց համաշխարհային քաղաքակրթության առաջընթացին: Տարբեր երկրների ձեռքբերումները և տեխնիկական նվաճումները տարածվեցին և հասանելի դարձան կայսրության կազմի մեջ մտնող բազմաթիվ ժողովուրդների: Դրա դրսևորումներից մեկը կարելի է համարել Կիլիկիայի հայկական թագավորության Մոնղոլական տերության հետ կնքած ռազմա-առևտրական դաշինքը, ինչի շնորհիվ հայ վաճառականները լայն առևտուր ծավալեցին Արևելքի և Արևմուտքի երկրների միջև: Արդյունքում Արևմտյան Եվրոպայում կիրառություն ստացան գրատպությունը, կողմնացույցը, վառողը, տարածվեց հրագենի կիրառությունը և այլն:

Արևմտյան Եվրոպայի հետագա զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ 100-ամյա պատերազմը Անգլիայի և Ֆրանսիայի միջև: Սկսվելով 1337 թ.□ այն փոփոխակի հաջողությամբ և ընդհատումներով շարունակվեց մինչև 1453 թ.: Առաջին անգամ այդ պատերազմում Եվրոպայում սկսեց կիրառվել հրետանին, իսկ ասպետական հեծելազորը աստիճանաբար անցավ պատմության գիրկը: Պատերազմը նպաստեց ֆրանսիացի ժողովրդի ազգային ինքնագիտակցության ձևավորմանը, ֆեոդալական մասնատվածության հաղթահարմանը և արդյունքում միավորված ազգային պետության կազմավորմանը:

Հարյուրամյա պատերազմի ավարտը համընկավ թուրքերի կողմից 1453 թ. Կոստանդնուպոլսի գրավման և Բյուզանդիայի տեղում Օսմանյան կայսրության ձևավորման հետ: Դեռ 1299 թ. Փոքր Ասիայում ստեղծվել էր թուրքական ոչ մեծ իշխանություն Օսմանի գլխավորությամբ, ում անունով այդ թուրքերին մյուսներից տարբերելու համար սկսեցին անվանել թուրք-օսմաններ: Եվրոպայում և Ասիայում Բյուզանդիայից տարածքներ գրավելով՝ իշխանությունն ընդարձակվեց և XIV դարում վերածվեց ընդարձակ ուժեղ պետության, իսկ նրա տիրակալներն ընդունեցին սուլթանի՝ կայսեր տիտղոս: Կոստանդնուպոլիսը գրավելուց հետո Օսմանյան կայսրությունն ավելի ընդարձակվեց՝ գրավելով գրեթե բոլոր արաբական երկրները, Հարավային Կովկասը և ողջ հարավ-արևելյան Եվրոպայի երկրները՝ տարածվելով 3 մայրցամաքների վրա: Օսմանյան սուլթանը հռչակվեց նաև խալիֆ՝ բոլոր մահմեդականների հոգևոր առաջնորդ: Թուրքական տիրապետությունը երկար ժամանակով արգելակեց հպատակեցված ժողովուրդների տնտեսական և մշակութային զարգացումը:

Վաղ և զարգացած միջնադարում քաղաքակրթության կարևոր օջախներից էր Իրանը: Այն զգալի ներդրում է կատարել և արժանի տեղ է զբաղեցնում համաշխարհային քաղաքակրթության զարգացման պատմության մեջ:

Արդեն III-IV դդ. Իրանում ձևավորվում էին ավատատիրական հարաբերությունները: III դարի սկզբին, տապալելով Պարթև Արշակունի արքայատոհմը, Իրանում հաստատվեց Մասանյան հարստությունը: Մասանյան տերությունն ի սկզբանե պայքարի մեջ մտավ Բյուզանդիայի հետ Առաջավոր Ասիայում գերիշխանության համար: Մրցապայքարի կիզակետում էր Հայաստանը, որը պայքարում էր հզոր հարևաններից իր անկախությունը պաշտպանելու համար: Տերությունների մրցապայքարի ընթացքում Հայաստանը կորցրեց իր անկախությունը, նրա տարածքը երկու անգամ բաժանվեց նրանց միջև:

VII դ. սկզբին Մասանյան Պարսկաստանը նվաճեց արաբները, Իրանի տարածքը ներառվեց Արաբական խալիֆայության մեջ, իսկ բնակչությունը բռնությամբ իսլամացվեց: XI դ. Իրանը գրավեցին սելջուկ թուրքերը, ապա XIII դ. կեսին Իրանը նվաճեցին մոնղոլ-թաթարները, որոնց տիրապետությունը շարունակվեց մինչև XIV դ. կեսերը: XIV դ. վերջին Իրանը կարճ ժամանակով մտավ Լանկ Թեմուրի տերության կազմի մեջ, իսկ XV դարում Իրանի տարածքում ձևավորվեցին թուրքմենական, քրդական, աֆղանական վաչկատուն ցեղերի իշխանություններ:

1502 թ. Իրանը միավորվեց պարսկական Սեֆյան հարստության ներքո, որն իշխեց մինչև XVIII դ. սկիզբը: Սեֆյանները գրավեցին նաև Հարավային Կովկասը և Միջագետքը: Իրանի միավորումը և հզորացումը անհանգստացրեց Օսմանյան տերությանը, որը ևս հավակնում էր այդ տարածքներին: Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև պատերազմները փոփոխակի հաջողությամբ և ընդհատումներով շարունակվեցին մինչև XVII դարի կեսերը: Հայաստանի տարածքը ևս 2 անգամ բաժանվեց հարևան այդ պետությունների միջև, և հայ բնակչության մի ստվար զանգված հերթական անգամ տեղահանվեց և վերաբնակեցվեց Իրանում:

Վաղ միջնադարում Հնդկաստանում պահպանվում էր վառնայական կարգը, երկիրը տրոհված էր մրցակցող ինքնուրույն իշխանությունների: VIII դարից սկսած արաբական ներխուժումների արդյունքում արևմտյան Հնդկաստանի բնակչության հիմնական կրոն դարձավ իսլամը, և Ինդոս գետի հովտում կազմավորվեցին մի շարք մահմեդական

պետություններ: XIII դ. սկզբին հյուսիսային Հնդկաստանում կազմավորվեց Դելիի սուլթանությունը, որը գոյատևեց մոտ 300 տարի: Դելիի սուլթանությունը ավատատիրական պետություն էր՝ ավագանին սուլթանից կալվածքներ էր ստանում որպես պայմանական սեփականություն՝ պետական կամ ռազմական ծառայություն կատարելու դիմաց: Սուլթանները իրենց մերձավորներին, մզկիթներին, տաճարներին երբեմն կալվածքներ էին նվիրում՝ որպես ժառանգական սեփականություն: Արդեն XV դ. վերջին պայմանական սեփականության կալվածքները վերածվեցին ժառանգական սեփականության, սկիզբ առան ավատատերերի երկպառակչական պատերազմները, սուլթանի իշխանությունը դարձավ լրիվ ձևական:

1526 թ. Դելիի սուլթանությունը գրավեց Քաբուլի տիրակալ Բաբուրը: Հնդկաստանի հյուսիսում առաջացավ մի նոր պետություն, որը կարողացավ միավորել Հնդկաստանի մեծ մասը, և որին եվրոպացիներն ավանեցին Մեծ Մոնղոլների կայսրություն: Երկպառակչական պատերազմները դադարեցին, զարգացան արհեստներն ու առևտուրը: Հնդկաստանի ծովափնյա քաղաքները վերածվեցին միջազգային առևտրի կենտրոնների: Հնդկական մշակույթի ծաղկումը դրսևորվեց հատկապես ճարտարապետության, աստղագիտության, մաթեմատիկայի, բժշկության, մանրանկարչության և այլ բնագավառներում:

Վաղ միջնադարում Չինաստանում ստրկատիրական կարգը աստիճանաբար վերացավ և արդեն V-VI դարերում Չինաստանում սկսեց ձևավորվել ավատատիրական կարգը:

Համաշինական Տան կայսրության օրոք (VII-IX դդ.) վերականգնվեցին չինական ավանդույթները՝ մտցվեց պետության կառավարման կենտրոնացված համակարգ, երկիրը բաժանվեց նահանգների, շրջանների և գավառների: Կազմվեց օրենքների միասնական ժողովածու, ստեղծվեց պրոֆեսիոնալ վարձու բանակ: Գլխավոր ճանապարհների վրա բացվեցին փոստակայաններ և իջևանատներ: Առևտրի զարգացման համար պետությունը հատում էր կլոր անցքով պղնձյա դրամներ: Առաջին թղթադրամները նույնպես թողարկվեցին Չինաստանում:

Ֆեոդալական աստիճանակարգությունը Չինաստանում դրսևորվեց յուրահատուկ ձևով: Աստիճանակարգությանը ենթակա էին հասարակության բոլոր խավերը՝ ժառանգական ավատատերերը, գյուղացիները, արհեստավորներն ու առևտրականները: Ամեն խավ պարտավոր էր որոշակի գույնի և տեսակի հագուստ կրել, վարքագծի հատուկ կանոններ պահպանել: Բոլոր պետական պաշտոնյաները պետությունից ծառայողական կալվածք էին ստանում վրան ապրող գյուղացիներով, այդպիսով հանդիսանում էին իշխող վերնախավի ներկայացուցիչներ: Պետական պաշտոն զբաղեցնելու համար պետք էր ծառայողի աստիճան ստանալու քննություն հանձնել: Պաշտոնի բարձրացման համար պետք էր նոր քննություն հանձնել: Գործում էին պետական ծառայողներ պատրաստող դպրոցներ ու վարժարաններ:

XIII դարում Չինաստանը նվաճեցին մոնղոլները: Նրանց ստեղծած Յուան կայսրությունը գոյատևեց մոտ մեկ դար: Մոնղոլներին վտարելով, XIV դ. կեսին Չինաստանում ստեղծվեց Մին կայսրությունը, որը երկիրը կառավարեց մինչև XVII դարի կեսը: Չինաստանի միջնադարյան քաղաքակրթությունը մեծ նվաճումների հասավ՝ վառողի, թնդանոթի, կողմնացույցի, տպագրության և այլ գյուտերը դարձան համայն մարդկության սեփականությունը:

Ի տարբերություն Չինաստանի, Ճապոնական քաղաքակրթությունը սկզբնավորվեց վաղ միջնադարում: Ճապոնական ցեղերը սկզբնապես ապրում էին տոհմական համայնքներով, տիրապետում էին երկաթյա գործիքների, զբաղվում էին երկրագործությամբ և անասնա-

պահույթամբ: III-IV դարերում ձևավորվեցին մրցակցող ցեղային միություններ: IV դ. կեսին Յամատո ցեղապետությունը սկիզբ դրեց ճապոնական պետությանը: Յամատոյի ցեղապետը հռչակվեց կայսր: Երկրում արմատական բարեփոխումներ իրականացվեցին՝ մտցվեց կառավարման կենտրոնացված համակարգ, ճապոնիան բաժանվեց մարզերի և շրջանների, բոլոր մշակովի հողերը հայտարարվեցին կայսեր սեփականությունը: Տոհմական ավագանու հզորությունը թուլացավ: Տոհմավագները վերածվեցին պալատական պաշտոնյաների, որոնք պետությունից ստանում էին խոշոր կալվածքներ՝ պայմանական օգտագործման իրավունքով:

Ավատատիրական կարգի զարգացման հետևանքով կայսեր իշխանությունը գնալով թուլացավ: Արդեն VIII դարում մարզերի և շրջանների կառավարիչների տիրույթները և պաշտոնները սկսեցին վերածվել ժառանգական սեփականության, իսկ դրանց տերերը՝ ավատատերերի: Իրենց իշխանությունը պաշտպանելու և նոր տիրույթներ գավթելու համար նրանք պահում էին մշտական զինված ջոկատներ, որոնք կազմված էին արհեստավարժ ռազմիկներից՝ սամուրայներից: XIII դարի վերջին ճապոնիան թևակոխեց ավատատիրական մասնատվածության ժամանակաշրջանը:

XIV-XVI դդ. ճապոնիայում ձևավորվեցին մի քանի տասնյակ ավատատիրական իշխանություններ: Մանր և միջին ավատատերերը կախման մեջ ընկան խոշոր իշխաններից: Իշխանական նստավայրերի և խոշոր տաճարների շուրջը սկսեցին առաջանալ միջնադարյան քաղաքներ, զարգացան արհեստները և ներքին առևտուրը: Տնտեսական և սոցիալական պայմաններ առաջացան երկրի վերամիավորման համար: XVI դարի կեսերից ճապոնիա մուտք գործեցին իսպանացի վաճառականները: Կաթոլիկ քարոզիչները սկսեցին քրիստոնեություն տարածել: Եվրոպական նվաճման վտանգը արագացրեց ճապոնիայի միավորման գործընթացը:

Միավորման գործընթացը սկսեց իշխան Օդա Նոբունագան, իսկ ավարտին հասցրեց նրա զինակից տաղանդավոր զորավար Տոյետոմի Խիդեյեսին: Խիդեյեսիի մահից հետո իշխանության համար պայքարում մրցակիցներին հաղթելով՝ Տոկուգավա Իեյասուն 1603 թ. դարձավ երկրի միանձնյա տիրակալը: Նա ընդունեց սյոգունի տիտղոսը, նստավայր դարձրեց Էդո՝ ներկայիս Տոկիո քաղաքը: Տոկուգավա տոհմի սյուգունատը դարձավ ժառանգական: Ի դեմս Եվրոպացի առևտրականների և կաթոլիկ քարոզիչների լուրջ վտանգ տեսնելով՝ սյոգունը արգելեց քրիստոնեական կրոնը: Ճապոնիան «փակվեց» օտարերկրացիների համար գրեթե 2,5 դար:

Ամերիկա մայրցամաքի բնիկ քաղաքակրթությունները Եվրոպացիներին հայտնի դարձան միայն ուշ միջնադարում՝ իսպանացի նվաճողների կողմից մայրցամաքի գաղութացման ընթացքում: Ամերիկայի բնիկ ժողովուրդներին Եվրոպացիները անվանեցին «հնդկացիներ», որովհետև ըստ Կոլումբոսի՝ իր հայտնագործած երկիրը Հնդկաստանն էր:

Ամերիկայի որոշ ժողովուրդներ արդեն ծանոթ էին երկրագործությանը: Աճեցնում էին Եվրոպայում դեռևս անհայտ բույսեր՝ եգիպտացորեն, կարտոֆիլ, արևածաղիկ, լոլիկ, կակաո, ծխախոտ: Մայրցամաքի բնակիչների մեծ մասը ծանոթ չէր անասնապահությանը, քանի որ ընտելացնելու համար համապատասխան կենդանիներ գրեթե չկային: Միայն հյուսիսում ընտելացրել էին շներ, իսկ Հարավային Ամերիկայում լամաներ՝ ուղտի նման չափերով փոքր կենդանի: Ընտելացրել էին նաև հնդկահավեր ու բադեր: Ամերիկայի բնիկ ժողովուրդներից XVI դ. քաղաքակրթության մակարդակի հասել էին միայն մայաները, ացտեկները և ինկերը:

Մայա ժողովուրդը բնակվում էր Կենտրոնական Ամերիկայի խիտ ջունգլիներով ծածկված Յուկատան թերակղզում: Ք.ժ.ա I հազարամյակի վերջին մայաների շրջանում արդեն առաջացել էին քաղաք-պետություններ: Մայաների հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր: Մաքրելով ջունգլիները՝ աճեցնում էին եգիպտացորեն, պտուղներ և բանջարեղեն:

Երկրագործությամբ զբաղվելու համար անհրաժեշտ է օրացույց: Մայաների ստեղծած օրացույցը հին ժողովուրդների ամենաճշգրիտ օրացույցն էր: Մայաների քաղաքներում կային աստղադիտարաններ: Քրմերը կարողանում էին հաշվարկել մոլորակների պտույտի ժամանակը Արեգակի շուրջը և կանխագուշակում էին արևի ու լուսնի խավարումները: Օրացույցի հետ էր կապված և մաթեմատիկայի զարգացումը: Մայաները աշխարհում առաջինը սկսեցին օգտագործել զրո թվանշանը: Նրանք ստեղծել էին իրենց գիրը, որը պատկերագիր էր, նման եգիպտական հիերոգլիֆներին: Կառուցում էին աստիճանավոր բուրգի ձևով պալատներ և տաճարներ, շինությունները զարդարում էին աստվածների արձաններով և բարձրաքանդակներով:

Ացտեկների քաղաքակրթությունը ձևավորվել էր XIII դարում Մեքսիկայի կենտրոնական բարձրավանդակի բարեբեր հովտում: Ացտեկները ռազմատենչ ժողովուրդ էին: Տևական պատերազմների արդյունքում նրանք նվաճեցին Մեքսիկայի ողջ տարածքը, և շրջակա գրեթե բոլոր ցեղերին իրենց հարկատու դարձրին: Տնտեսական գործունեությամբ ացտեկները գրեթե չէին զբաղվում, ապրում էին հպատակ ցեղերից ստացվող հարկերի հաշվին: Պատերազմներում գերված ստրուկների աշխատանքով կառուցում էին ճանապարհներ, պալատներ և տաճարներ: Պետության գլուխ կանգնած էր ժառանգական տիրակալը: Պետական պաշտոնների նշանակվում էին ավագանու անդամները: Նրանք կայսրից ծառայության դիմաց ստանում էին կալվածքներ և ենթակա գյուղերից գանձում էին իրենց անհրաժեշտ կենսամթերքը և ապրանքները: Ացտեկների պետությունը իր հզորությանը հասավ Մոնթեսումա կայսեր (1502-1520) օրոք:

Հարավային Ամերիկայի արևմուտքով ձգվող Անդյան լեռներում XII դարում ձևավորվեց Ինկերի պետությունը: XIII-XIV դարերի ընթացքում ինկերը աստիճանաբար նվաճեցին հարևան երկրները և հպատակեցրին այնտեղ բնակվող ցեղերին: XV դարի սկզբին կազմավորվեց ինկերի լայնածավալ կայսրությունը: Մայրաքաղաք դարձավ Կուսկո քաղաքը: Պետության գլուխ կանգնած էր Գերագույն Ինկան, անսահմանափակ իշխանությամբ: Ինկերի ցեղը պետության ավագանին էր. բարձրագույն վարչական և կրոնական պաշտոնները վարում էին ինկերը: Նրանք իրենց անվանում էին «Արևի որդիներ»: Արևի տաճարներ կառուցված էին բոլոր մարզերում:

Ինկերը հմուտ էին ջուլհակության, խեցեգործության և մետաղաձուլության մեջ: Պատրաստում էին գեղեցիկ զարդանախշ սափորներ, ոսկյա, արծաթյա և բրոնզե զարդեր: Ինկերը նաև հմուտ շինարարներ էին, կառուցել էին սալարկված ճանապարհներ, որոնք երկու կողմից ամրացված էին եզրաքարերով, գետերի և անդունդների վրա զգված էին կախովի կամուրջներ: Ճանապարհներին, իրարից որոշակի հեռավորության վրա, կառուցված էին փոստային կայաններ: Բնակչության հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր: Նրանք Ամերիկայի միակ անասնապահ ժողովուրդն էին, ընտելացրել էին լամաներին, որոնց օգտագործում էին ոչ ծանր բեռներ տեղափոխելու համար, նրանցից

ստանում էին, կաթ, բուրդ և միս: Սակայն լաման թույլ էր որպես լծկան կամ հեծնելու կենդանի օգտագործելու համար:

XVI դարում իսպանացի նվաճողները անողորքաբար ոչնչացրին Ամերիկայի բնիկ քաղաքակրթությունները, իսկ ժողովուրդներին բռնությամբ պարտադրեցին կաթոլիկություն ընդունել և խոսել իսպաներեն:

Երրորդ թեմայի վերջին՝ § 48-ը նախատեսված է որպես թեմատիկ ամփոփում: Ամփոփիչ հարցերը ներառում են վաղ և զարգացած միջնադարի ժամանակաշրջանն ընդգրկող թեմայի բոլոր դասանյութերը: Առաջադրվող հարցերին սովորողների գրավոր պատասխանները կոչված են ապահովելու հետադարձ կապը՝ փաստելու անցած նյութի յուրացման մակարդակը և կարող են հիմք ծառայել աշակերտների քառորդային/կիսամյակային գնահատման համար:

ԹԵՄԱ 4. ՄԻՋՆԱԴԱՐԻ ԱՎԱՐՏՐ. ՓՈՓՈԽՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագրքի այս վերջին թեման բաղկացած է ընդամենը 10 պարագրաֆից (§§ 49-58), որոնց դասանյութը ներառում է բացառապես Արևմտյան Եվրոպայի երկրներում տեղ գտած դեպքերի և իրադարձությունների շարադրանքը: Եթե Ասիայի և Եվրոպայի քաղաքակրթության հին ու նոր օջախների զարգացումը նախորդ դարաշրջաններում ընթանում էր գրեթե համահավասար և իրար վրա փոխազդեցությունը առավելապես նպաստում էր յուրաքանչյուրի հետագա առաջընթացին, ապա իրավիճակը արմատապես փոխվեց միջնադարի ավարտին: Զարգացման ներքին ու արտաքին, օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների ազդեցությամբ, Արևմտյան Եվրոպայի հասարակությունները որակապես փոխակերպվեցին տնտեսական ու քաղաքական առումով և զարգացման տեմպերով առաջ անցան քաղաքակրթության բոլոր մյուս օջախներից:

Թեմայի ուսումնասիրությունը սկսվում է Եվրոպայի ավանդական հասարակության փոխակերպումը իմաստավորելով:

XIV դ. Եվրոպայի բնակչությունը համաճարակների, սովի և պատերազմների հետևանքով կտրուկ պակասեց, կրճատվեց հացամթերքի արտադրությունը: Արևմտյան Եվրոպան ցնցվում էր գյուղացիական ապստամբություններից: Ավատատերերը չէին համարձակվում ավելացնել հարկերը և տուրքերը, արագացնում էին փրկագնով ճորտությունից ազատելը: XV դարում Արևմտյան Եվրոպայի երկրներում ճորտ գյուղացի գրեթե չմնաց:

Ազատ գյուղացիների վարած տնտեսությունները շատ արագ դարձան եկամտաբեր: Ավատատերերը սկսեցին տերունական հողերը վարձակալության հանձնել գյուղացիներին, սակայն ռենտան՝ հողավարձը, պահանջել դրամով: Գյուղացին հարկադրված էր իր գյուղմթերքը վաճառել քաղաքում, որ դրամ ունենա ռենտան վճարելու: Գյուղի և քաղաքի միջև առևտուրն ընդլայնվեց, սկսեց ձևավորվել առևտրի ներքին շուկան:

Գյուղացիությունը շերտավորվում էր: Որոշ գյուղացիներ հաջողության էին հասնում, նրանց տնտեսությունը բարգավաճում էր: Ունեզրկված գյուղացիների մի մասը գյուղում վերածվում էր վարձու բատրակների, մի մասն էլ տեղափոխվում էր քաղաքներ և վերածվում վարձու բանվորների: Վարձու աշխատանքը տարածում ստացավ և՛ գյուղում, և՛ քաղաքում: Այս փոփոխությունների արդյունքում գյուղացիությունը սկսեց ձևավորվել որպես առանձին դաս:

Արևմտյան Եվրոպայի քաղաքները վերելք ապրեցին խաչակրաց արշավանքների շրջանում: Ջենքի և ռազմական հանդերձանքի պահանջարկը նպաստեց արհեստների զարգացմանը: Ապրանքների՝ գնալով աճող պահանջարկի և ունեզրկված գյուղացիների մեծ հոսքի շնորհիվ քաղաքային կյանքը սկսեց արագ զարգանալ: Առևտրականներից և արհեստավոր վարպետներից ձևավորվեց քաղաքացիների դասը:

Քաղաքները պայքարում էին ինքնավարության համար: Թագավորական իշխանությունը հովանավորում էր քաղաքներին, հրովարտակներով հաստատում քաղաքների ինքնավարությունը: Արդեն XV դարում Արևմտյան Եվրոպայի շատ երկրներում քաղաքային ինքնավարությունը լայն տարածում ստացավ և հիմք ծառայեց կենտրոնացված պետությունների կազմավորման համար:

Հասարակության կյանքում տեղի ունեցող փոփոխությունները նպաստում էին երկրի մասնատվածության հաղթահարմանը և պետական իշխանության կենտրոնացմանը: Դրան զուգահեռ մեծանում էր ազնվականների, հոգևորականների և քաղաքացիների ակտիվությունը՝ պաշտպանելու իրենց իրավունքները: XIV-XVI դդ. Եվրոպայի գրեթե բոլոր երկրներում ձևավորվեցին այդ դասերի շահերը ներկայացնող մարմիններ:

Շատ երկրներում սկսում են գործել դասերի ներկայացուցիչների ժողովներ, որոնց հետ միապետները հաշվի էին նստում կարևոր պետական հարցեր լուծելու, նոր օրենքներ կամ հարկեր սահմանելու ժամանակ: Ավատատիրական միապետությանը փոխարինելու էր գալիս պետության կառավարման մի նոր ձև՝ դասային միապետությունը:

Հաջորդ դասակարգը վերաբերում է աշխարհագրական Մեծ հայտնագործություններին: Կարևոր է նախ մանրամասն վերլուծել հայտնագործությունների պատճառները:

XV դ. կեսից խզվել էր Արևելքի և Արևմուտքի միջև ավանդական առևտուրը: Օսմանյան տերության ծավալումը խոչընդոտում էր միջազգային առևտրի զարգացմանը: Հնդկաստանի ու Չինաստանի հետ ուղիղ առևտրական կապեր հաստատելու, ոսկու և արծաթի նոր պաշարների տիրանալու ձգտումը Արևմտյան Եվրոպայի համար դարձավ հրամայական անհրաժեշտություն:

Ապա աշակերտներին ներկայացվում են Վասկո դա Գամայի, Քրիստափոր Կոլումբոսի և Ֆերնան Մագելանի արշավախմբերի ընթացքը և հայտնագործությունների արդյունքները:

Աշխարհագրական Մեծ հայտնագործությունները հանգեցրին նոր երկրների ու մայրցամաքների հայտնաբերմանը: Միջազգային առևտրի գլխավոր ուղիները այժմ անցնում էին օվկիանոսներով: Ատլանտյան օվկիանոսով առևտրի մեջ ներքաշվեցին նորահայտ Ամերիկայի երկրները: Աֆրիկյան շրջանցող ծովային ուղիով եվրոպական երկրները կապ հաստատեցին Հնդկաստանի, իսկ Խաղաղ օվկիանոսով՝ Չինաստանի ու Ճապոնիայի հետ: Մեծ նշանակություն ձեռք բերեցին ծովափնյա քաղաքներ Լոնդոնը, Լիսաբոնը, Համբուրգը և այլն: Համաեվրոպական առևտրի գլխավոր կենտրոն դարձավ Նիդերլանդների Անտվերպեն քաղաքը, որտեղ կարելի էր գնել Եվրոպա ներմուծվող բոլոր տեսակների համեմունքները: Այս առումով արժե հարց ուղղել աշակերտներին, առաջարկելով թվարկել իրենց հայտնի համեմունքները:

Աշխարհագրական Մեծ հայտնագործությունների ընթացքում սկսվեց նորահայտ երկրների նվաճման ու գաղութացման գործընթացը: Գաղութացված երկրների բնիկների զանգվածային մահացության պատճառով սկսեցին Աֆրիկայից նեգր ստրուկներ տեղափոխել Ամե-

րիկա: 1500-1900 թթ. ընթացքում Աֆրիկայից 12 միլիոն ստրուկ է տարվել Ամերիկա, որից 1,8 միլիոնը, փոխադրման անմարդկային պայմանների պատճառով, մահացել է հիվանդությունից և սովից:

Գաղութային նվաճումներին ակտիվ մասնակցություն ուներ կաթոլիկ եկեղեցին: Նոր նվաճված ժողովուրդներին քրիստոնյա դարձնելու համար քահանաներն ու վանականները կիրառում էին տանջանքներ և մահապատիժներ, անխնա ոչնչացնում էին տեղաբնիկների մշակույթը: Կաթոլիկ եկեղեցին նոր հետևորդներ էր ձեռք բերում:

Տնտեսական համակարգի փոփոխությունները Արևմտյան Եվրոպայի երկրներում ավանդական հասարակության փոխակերպման և աշխարհագրական հայտնագործությունների առավել կարևոր հետևանքներն էին:

Արտադրության մեջ սկսեց լայնորեն կիրառվել թափվող ջրի ուժով աշխատող ջրանիվը: Մետաղաձուլության ոլորտում XIV դ.սկսեցին կառուցել դոմնաներ՝ ձուլման փակ վառարաններ, որոնցում բարձր ջերմաստիճանի շնորհիվ հանքանյութը հալվում էր և ստացվում էր հեղուկ թուջ (չուգուն): Թուջը կրկնակի տաքացնելով և կոփելով ջրանիվի ուժով աշխատող 1 տոննա կշռող մուրճերով՝ ստանում էին բարձրորակ պողպատ:

Նավաշինարարները արդեն XV դարում կառուցում էին կարավելլաներ, որոնք դիմանում էին փոթորկին և կարող էին ծովային հեռավոր նավարկություն կատարել: Կատարելագործվեցին առագաստանավերը, սկսեցին օգտագործել կողմնացույցներ և նավագնացական այլ սարքեր:

Ապրանքա-դրամական հարաբերությունների զարգացումը տնտեսապես իրար էր կապում երկրի տարբեր մարզերը: Եվրոպական երկրներում ձևավորվում էր առևտրի ներքին շուկա: Շուկայի ձևավորմանը նպաստեց ձեռներեցների ստեղծած մանուֆակտուրային արտադրությունը: Մանուֆակտուրայում կիրառվում էր աշխատանքի բաժանում, ինչի շնորհիվ լավորակ և քանակով շատ ավելի ապրանք էր արտադրվում, քան արհեստավորների արհեստանոցներում: Մանուֆակտուրային արտադրանքի վաճառքը Եվրոպայում գնալով աճում էր և մեծ շահույթ էր բերում:

XVI դ.ընթացքում ձևավորվում էին և համաշխարհային առևտրի արտաքին շուկաները: Գործարար/ձեռներեց մարդիկ միավորվելով՝ կազմակերպում էին առևտրական ընկերություններ, որոնք հովանավորվում էին իրենց պետությունների կողմից: Այդ ընկերություններն էին իրականացնում իրենց երկրների առևտուրը Արևելքի և Ամերիկայի երկրների հետ:

Առևտրի աճող կարիքների համար եվրոպական երկրներում լայն տարածում ստացավ դրամահատությունը: Ապրանքա-դրամական հարաբերությունների զարգացման արդյունքում ծնունդ առան տոնավաճառները, բանկերը և բորսաները:

Այսպիսով, ավանդական ավատատիրական հասարակության ընդերքում ապրանքա-դրամական հարաբերությունների ձևավորման ու աստիճանական զարգացման հետևանքով առաջանում էին կապիտալիստական նոր կացութաձևի սաղմերը:

Փոփոխությունները հասարակական և մշակութային կյանքում հետևանք էին Արևմտյան Եվրոպայի երկրներում ընթացող տնտեսական համակարգի փոփոխությունների:

Միջնադարյան հասարակությունը արագորեն կերպարանափոխվում էր՝ հարստության չափանիշ էր դառնում ոչ թե հողային սեփականությունը, այլ փողի քանակը: Գյուղում վերանում էր բնատնտեսությունը, տարածվում էր վարձու աշխատանքը: Քաղաքներում

քայքայվում էր համաքարային կարգը, առաջանում էին մանուֆակտուրաներ: Արտադրության մեջ մանուֆակտուրայի տարածումը հանգեցրեց նոր դասերի՝ դրամատերերի՝ բուրժուազիայի, և վարձու բանվորների առաջացմանը:

Նոր ձևով տնտեսություն վարող որոշ ավատատերեր, որոնց սկսեցին անվանել նոր ազնվականներ, հիմնադրեցին գործվածքային, կաշեգործական և այլ մանուֆակտուրաներ, առևտրականների հետ մասնակցում էին ծովային և ցամաքային առևտրին: Գյուղացիների որոշ մասին հաջողվեց եկամտաբեր տնտեսություն ստեղծել, դառնալ ազարակատեր՝ ֆերմեր, գյուղատնտեսական ապրանքներ արտադրել շուկայում վաճառքի համար:

Կապիտալիստական արտադրության զարգացումը նպաստեց գիտության հետագա զարգացմանը: Աստվածակենտրոն մտածողությունը աստիճանաբար տեղը զիջում էր մարդակենտրոն մտածողությանը: Թուլանում էր եկեղեցու ազդեցությունը մարդկանց մտածողության վրա: Գիտնականների և մշակույթի գործիչների ուշադրության կենտրոնում էին հայտնվում մարդը և նրա գործերը: Եվրոպայում ստեղծվեցին առաջին թանգարանները, կենդանաբանական և բուսաբանական այգիները, հանքաքարերի և բույսերի հավաքածուները:

Անցյալ էր դառնում կաթոլիկ եկեղեցու մենաշնորհը կրթության և գիտության բնագավառում, առաջանում էին աշխարհիկ գիտելիքներ ուսուցանող դպրոցներ և համալսարաններ: XV դ. Եվրոպայի երկրներում արդեն գործում էին 65 համալսարան: Գնալով ավելանում էր կրթված մարդկանց թիվը, ձևավորվում էին աշխարհիկ գիտությունը և մտավորականությունը: Տեղին կլինի, որ ուսուցիչը հարցերի միջոցով վերհանի աշակերտների գիտելիքները նաև հայոց միջնադարյան համալսարանների և բարձրագույն դպրոցների վերաբերյալ:

Արևմտյան Եվրոպայի երկրներում տնտեսական, հասարակական և մշակութային կյանքում տեղի ունեցող փոփոխությունները վառ արտահայտություն գտան Վերածննդի մշակույթի մեջ:

Անհրաժեշտ է նախ աշակերտներին պարզաբանել «Վերածնունդ» (ֆրանսերեն՝ Ռենեսանս) արտահայտության նշանակությունը, որպես XIV-XVI դարերում Իտալիայում սկսված մշակույթի աննախադեպ վերելք, որը արմատապես վերափոխեց մարդկանց աշխարհայացքը: Ապա պետք է բացատրել, թե ինչու Իտալիայում, ավելի վաղ, քան Եվրոպայի այլ երկրներում, առաջացան տոնավաճառներ, մանուֆակտուրաներ և բանկեր, ինչը փոխեց մարդկանց վերաբերմունքը առօրյա կյանքի, ֆիզիկական և հոգևոր պահանջմունքների նկատմամբ:

Սկիզբ առնելով Ֆլորենցիայում՝ Վերածնունդն առաջ քաշեց բազմաթիվ տաղանդավոր գրողների, գիտնականների, նկարիչների, քանդակագործների, ճարտարապետների: Դրանից հետո պետք է բացատրել, թե Վերածննդի նորարարական գաղափարները կոնկրետ որ գործիչների որ ստեղծագործությունների միջոցով արտահայտվեցին գրականության, գեղանկարչության և ճարտարապետության մեջ:

Բարձր Վերածննդի մեծագույն գործիչների՝ Լեոնարդո դա Վինչիի, Ռաֆայել Սանտիի, Միքելանջելո Բուոնարոտիի ստեղծագործությունները ցուցադրելով՝ կարելի է աշակերտներին ակնառու պատկերացում տալ նրանց բացառիկ, բազմակողմանի տաղանդի մասին:

XVI դարի կեսերից Իտալիայի տնտեսությունը աստիճանաբար սկսեց հետադիմել: Օսման թուրքերի նվաճումների հետևանքով կտրվեցին առևտրական կապերը Արևելքի

երկրների հետ: Իտալիայում սկսեցին փակվել մանուֆակտուրաները, առևտուրը անկում ապրեց: Վերածննդի մշակույթը հետագա զարգացում չստացավ և աստիճանաբար մարեց:

Իտալական Վերածնունդը մեծ ազդեցություն գործեց Եվրոպական մյուս երկրների մշակույթի զարգացման վրա, սկիզբ դրեց եվրոպական նոր մշակույթի ձևավորմանը: Այնտեղ նույնպես տարածվեցին մարդակենտրոն, աշխարհիկ մտածողությունը, գիտական գաղափարները, բնության ուսումնասիրությունը: Յուրացնելով իտալական վարպետների նվաճումները՝ Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Հոլանդիայի արվեստագետները համաշխարհային մշակույթի նոր արժեքավոր գործեր ստեղծեցին, ինչը ընդունված է անվանել «Հյուսիսային Վերածնունդ»: Այն իր հերթին նպաստեց կաթոլիկ եկեղեցու գերիշխանության դեմ այդ երկրներում սկսված ռեֆորմացիոն պայքարի ծավալմանը:

Ռեֆորմացիան Եվրոպայի երկրներում կաթոլիկ եկեղեցին բարեփոխելու, նրա գաղափարական և քաղաքական ազդեցությունը թուլացնելուն միտված շարժում էր:

Ռեֆորմացիայի սկիզբ հանդիսացավ Գերմանիայի Վիտենբերգ քաղաքի համալսարանի աստվածաբանության պրոֆեսոր Մարտին Լյութերի ելույթը, որում նա կոչ էր անում արգելել ինդուլգենցիաների վաճառքը, իսկ պապին և կաթոլիկ հոգևորականներին անվանում էր խաբեբաներ: Եկեղեցու բարեփոխման պայքարին մասնակցեցին գերմանական հասարակության բոլոր խավերը՝ գյուղացիները, քաղաքացիները, ասպետները և իշխանների մի մասը: Այսուհետև ռեֆորմացիայի բոլոր հետևորդներին սկսեցին անվանել բողոքականներ: Ժողովրդական շարժումը Գերմանիայում արագորեն վերաճեց գյուղացիական պատերազմի Թոմաս Մյունցերի գլխավորությամբ, որը ճնշվեց մեծ դժվարությամբ:

Կաթոլիկ եկեղեցին սկսեց կորցնել իր ազդեցությունը, փոխարենը քրիստոնեության մեջ առաջացավ մի նոր ուղղություն՝ բողոքական եկեղեցին, որտեղ ժամասացությունը կատարվում էր ազգային լեզուներով: Վերացվեցին կրոնական ճոխ ծիսակատարությունները, հավատացյալներից հոգուտ եկեղեցու գումարներ գանձելը: Գերմանիայի բողոքական եկեղեցին սկսեցին կոչել Լյութերական եկեղեցի:

Շվեյցարիայում եկեղեցու բարեփոխման համար պայքարը գլխավորեց Ժան Կալվինը, որը ստանալով Ժնև քաղաքի դրամատերերի աջակցությունը, իրականացրեց ռեֆորմացիայի ավելի արմատական տարբերակը: Հավատի միակ աղբյուր Կալվինը հայտարարեց Աստվածաշունչը. նրանք, ովքեր հավատում են Աստծուն և ջանասիրաբար աշխատելով կարողանում են հարստանալ՝ ընտրյալներ են, նրանց ճանապարհը դեպի դրախտ ապահոված է: Կալվինի ուսմունքը արագորեն տարածվեց նաև Հոլանդիայում, Շոտլանդիայում և հարավային Ֆրանսիայում: Այդ երկրների բողոքական եկեղեցիները կոչվեցին կալվինական եկեղեցի:

Ռեֆորմացիայի հարվածներից ուշքի գալով՝ կաթոլիկ եկեղեցին հակառեֆորմացիա սկսեց: Նպատակն էր ամրապնդել կաթոլիկ եկեղեցու հետևորդների հավատն ու նվիրվածությունը, կանխել եկեղեցուց նրանց հեռանալը, պայքարել բողոքականների դեմ: Ստեղծվեց ինկվիզիցիան՝ հավատաքննության դատարանը՝ դատելու և եկեղեցու գիրկը վերադարձնելու անհավատներին: Կաթոլիկ եկեղեցին և նրա ուսմունքը քննադատող գրքերը տպագրել և կարդալ արգելվեց: Հրապարակվեց «Արգելված գրքերի ինդեքսը»՝ նշված գրքերը հավաքում և այրում էին:

Բողոքականության դեմ պայքարում կաթոլիկ եկեղեցին դիմում էր և հակառակորդների ֆիզիկական ոչնչացմանը: Ֆրանսիայում կաթոլիկները բողոքականների մասսայական

կոտորած կազմակերպեցին, որը հայտնի է «Բարդուղիմեոսյան գիշեր» անվանումով: Բացի դրանից, 1540 թ. ստեղծվեց «Հիսուսի միաբանությունը»՝ ճիզվիտների օրդենը: Եթե որևէ իշխանավոր դեմ էր կանգնում նրանց նպատակին, ճիզվիտները գործի էին դնում դաշույնն ու թույնը:

Կաթոլիկ եկեղեցուն հաջողվեց ճնշել ռեֆորմացիան Ֆրանսիայում, Լեհաստանում, Իտալիայում և Հարավային Գերմանիայում: Այն երկրներում, որտեղ կաթոլիկ եկեղեցին հաղթանակեց, ավատատիրական կարգն ամրապնդվեց և երկար պահպանվեց: Այնուամենայնիվ, կաթոլիկ եկեղեցին հարկադրված էր հաշտվել իր մենիշխանության կորստի և բողոքական եկեղեցիների գոյության փաստի հետ:

Ուսուցչի նախընտրությամբ, կարելի է այս դասանյութը անցնելիս աշակերտներին առաջարկել վերհիշել հայոց եկեղեցու դեմ ուղղված շարժումների հիմնական գաղափարներն ու պահանջները, դրանց դեմ եկեղեցու պայքարի մեթոդները Հայաստանում և Բյուզանդիայում:

XVI-XVIII դդ. Եվրոպայի երկրներում հաստատվեց պետության կառավարման մի նոր ձև՝ բացարձակ միապետությունը (լատիներեն՝ «աբսոլյուտիզմ»): Աբսոլյուտիզմի պայմաններում միապետի ձեռքում էր կենտրոնանում պետական ողջ իշխանությունը: Նա էր սահմանում օրենքները, հաստատում հարկերը և տնօրինում պետության ֆինանսները: Դա հնարավորություն էր տալիս պահելու մշտական բանակ և նավատորմ: Վերացվում էր ավատատերերի նախկին ինքնուրույնությունը, դասային ներկայացուցչական մարմինները կորցնում էին նշանակությունը:

Աբսոլյուտիզմը հենվում էր մի կողմից՝ նախկին եկամուտներից զրկված մանր և միջին ազնվականության վրա, որը ապրուստ էր գտնում թագավորական բանակում ծառայության անցնելով, իսկ տնտեսական և ֆինանսական հարցերում՝ ձևավորվող բուրժուազիայի վրա, որը պետության պատվերով և հովանավորությամբ կազմակերպում էր արքայական բանակին անհրաժեշտ զենքի, զինամթերքի, թնդանոթների, վառոդի և այլնի արտադրությունը:

Կախված ներքին և արտաքին հանգամանքներից, աբսոլյուտիզմի հաստատումը առանձին երկրներում նպաստեց ազգային պետությունների ձևավորմանը, տնտեսության վերելքին, իսկ որոշ երկրներում էլ հանգեցրեց տնտեսական և քաղաքական անկման:

Անգլիայում աբսոլյուտիզմը հաստատվեց Թյուդորների արքայատոհմի կառավարման շրջանում: Հենրիի VIII-ի (1509-1547) և Էլիզաբեթ I-ի (1558-1603) վարած նոր ազնվականության և ձևավորվող բուրժուազիայի շահերից բխող արտաքին և ներքին քաղաքականության արդյունքում աբսոլյուտիզմը նպաստեց երկրի տնտեսական և քաղաքական առաջընթացին: Մեկ դար անց Անգլիան դարձավ Եվրոպայի տնտեսապես առաջատար պետությունը:

Իսպանիայում տեղի ունեցավ հակառակը: XVI դ. սկզբին Իսպանիան Եվրոպայի ռազմական առումով հզոր և տնտեսապես առաջատար պետությունն էր: Սակայն Կառլ V-ի (1516-1556) օրոք, ամերիկյան նորահայտ գաղութներից բերվող ոսկին և արծաթը ոչ թե ներդրվեցին տնտեսության զարգացման մեջ, այլ ծախսվեցին երկրից դուրս՝ Գերմանիայում, Իտալիայում և Ֆրանսիայում Իսպանիայի վարած պատերազմները ֆինանսավորելու վրա: Ավելի անհեռանկար և վնասակար էր Ֆիլիպ II-ի (1556-1598) վարած ներքին ու արտաքին քաղաքականությունը: Իսպանական աբսոլյուտիզմը հենվում էր բացառապես միայն ազնվականության վրա: Մոլեռանդ կաթոլիկ արքան տարված էր բողոքականությունը ոչնչացնելու,

ամենուր կաթոլիկությունը տարածելու մոլուցքով: Իսպանիայում նա հետապնդում և երկրից վտարում էր բնակչության գործարար խավերը, բարձրացնում առևտրի և արտադրության վրա դրվող հարկերը: Նման քաղաքականության արդյունքում երբեմնի հզոր, տնտեսապես զարգացած Իսպանիան մեկ դար անց վերածվեց տնտեսապես թուլացող և հետամնաց պետության:

Աբսոլյուտիզմի հիմնական գծերը առավել ցայտուն դրսևորվեցին Ֆրանսիայում: Կարդինալ Ռիշելիեի և Լյուդովիկոս XIV-ի (1643-1715) վարած ազնվականության և հարուստ քաղաքացիների շահերից բխող քաղաքականության շնորհիվ երկիրը բարգավաճեց: Աբսոլյուտիզմը նպաստեց երկրի քաղաքական և տնտեսական միավորմանը, ձեռներեց մարդկանց շրջանում կապիտալի նախասկզբնական կուտակմանը, միևնույն ժամանակ միասնական ներքին շուկայի ու միասնական լեզվի ձևավորմանը: XVII - XVIII դդ. Ֆրանսիան դարձավ Եվրոպայի ռազմական առումով ամենահզոր պետությունը և թելադրում էր միջազգային հարաբերությունների ընթացքը:

Նիդերլանդական հեղափոխությունը Արևմտյան Եվրոպայում ավատատիրական կարգի դեմ առաջին հաղթական բուրժուական հեղափոխությունն էր:

Նիդերլանդները Արևմտյան Եվրոպայի ամենահարուստ երկրներից էր, բաղկացած էր 17 ինքնավար նահանգներից, ուներ 300 քաղաք և 6500 գյուղ: Այստեղ լայնորեն կիրառվում էր վարձու աշխատանքը, գործում էին մանուֆակտուրաներ: Զարգացած տնտեսություն, հարուստ առևտրականներ ու ձեռներեցներ ունեցող երկիրը XVI դ. գտնվում էր Իսպանիայի տիրապետության տակ, որը հարստահարում էր երկիրը, խախտում էր նահանգների ինքնավարությունը, խիստ օրենքներով արգելակում էր արտադրության և առևտրի զարգացումը: Երկիրը հարստահարում էր և կաթոլիկ եկեղեցին, որը, տասանորդից բացի, բարձր տուրքեր էր գանձում բնակչությունից: Նիդերլանդների բնակչության բոլոր խավերը դժգոհ էին Իսպանիայի տիրապետությունից: Պատահական չէ, որ Նիդերլանդներում լայնորեն տարածվել էր բողոքականությունը:

Իրավիճակը երկրում խիստ սրվեց, երբ Իսպանիայի թագավոր Ֆիլիպ II-ը Նիդերլանդներում ինկվիզիցիա մտցրեց: Իսպանական տիրապետության դեմ համաժողովրդական գայրույթը գնալով ուժգնացավ, և 1566 թ. աշնանը Նիդերլանդներում ապստամբություն բռնկվեց: Ապստամբները հարձակվեցին կաթոլիկ եկեղեցիների վրա և սկսեցին կործանել դրանք: Կառավարական ուժերը ճնշեցին ապստամբությունը, սակայն Ֆիլիպ II-ը «խռովարարներին» պատժելու համար Նիդերլանդներ իսպանական զորք ուղարկեց դուքս Ալբրայի գլխավորությամբ:

Ալբրայի դաժանությունները չկոտրեցին նիդերլանդական ժողովրդի պայքարի կամքը: Գյուղացիները և արհեստավորները հեռանում էին անտառները կամ դեպի ծով և դիմում պարտիզանական պատերազմի: Իսպանացիները նրանց անվանեցին անտառային գյոգեր՝ թափառաշրջիկներ: Առավել վտանգավոր էին ծովային գյոգերը, որոնք ծովում գրավում և խորտակում էին իսպանական նավերը:

1572 թ. Նիդերլանդներում իսպանական տիրապետության դեմ նոր ապստամբություն սկսվեց, որի կենտրոն դարձան երկրի հյուսիսային նահանգները: Ապստամբները հաշվեհարդար էին տեսնում իսպանացի պաշտոնյաների և հոգևորականների հետ: Մարդիկ դադարեցին կաթոլիկ եկեղեցուն տասանորդ վճարել ու պարհակներ կատարելը, բռնագրավում

էին եկեղեցու հողային տիրույթները, ավերում էին իսպանական թագավորի կողմնակից ազնվականների կալվածքները: Ապստամբությունը Նիդերլանդներում վերածվեց հեղափոխության:

Իսպանական զորքերի անօրինությունները և վայրագությունները զայրույթի համաժողովրդական ալիք բարձրացրին Նիդերլանդներում, ապստամբությունն ընդգրկեց նաև երկրի հարավային նահանգները: Քաղաքներում իշխանությունն իրենց ձեռքը վերցրին հասարակ մարդիկ, ավատատերերի դեմ ոտքի ելան գյուղացիները: Ժողովրդի ցասումից վախեցած, հարավային նահանգների ազնվականները անցան թագավորի կողմը: Հեղափոխությունը երկրի հարավում ճնշվեց, հարավային Նիդերլանդները մնաց Իսպանիայի տիրապետության տակ:

Հյուսիսային նահանգները հրաժարվեցին Ֆիլիպ II-ին իրենց թագավորը ճանաչելուց: 1579 թ. Նիդերլանդների հյուսիսային 7 նահանգներ Ուտրեխտ քաղաքում Իսպանիայի դեմ համատեղ պայքարի դաշինք կնքեցին, միավորվեցին կազմելով հանրապետություն, որը ամենից մեծ նահանգի անունով հաճախ կոչում են Հոլանդիա: Նորաստեղծ հանրապետությունը ստիպված էր ևս 30 տարի պատերազմել Իսպանիայի դեմ, մինչև որ 1609 թ. Իսպանիան հարկադրված ճանաչեց Հոլանդիայի անկախությունը:

Հեղափոխության հաղթանակը ճանապարհ բացեց երկրում ազատ շուկայական տնտեսության զարգացման համար: Ստեղծվեցին նոր մանուֆակտուրաներ, կառուցվում էին ծովային մեծ նավեր, ծավալվեց ներքին և արտաքին առևտուրը: Ամստերդամ քաղաքը դարձավ համաշխարհային առևտրի գլխավոր կենտրոնը: Այստեղ ստեղծվեց Եվրոպայում ապրանքների մեծածախ առևտրի առաջին բորսան:

Քաղաքական փոփոխությունները Եվրոպայում ուշ միջնադարում հետևանք էին մինչ այդ տեղի ունեցած սոցիալ-տնտեսական և սոցիալ-քաղաքական տեղաշարժերի.

- երկրների մի մասում արդեն ձևավորվել էին միասնական ազգային պետություններ, իսկ մյուսներում միասնական պետություններ դեռ չէին ձևավորվել,
- առանձին երկրներում արդեն ձևավորվում էին կապիտալիստական հարաբերություններ, մինչդեռ երկրներից շատերում դեռևս ամուր պահպանվում էր ֆեոդալական կարգը,
- որոշ երկրներ տիրել էին գաղութների, մենաշնորհի առևտուր էին վարում Ամերիկայի և Արևելքի երկրների հետ, արգելակում էին զարգացող երկրների առևտուրը դրանց հետ,
- Արևելյան Եվրոպայում ձևավորվել էին բազմազգ տերություններ (Օսմանյան և Ռուսական կայսրությունները, Ռեչ Պոսպոլիտան), որոնք տարածքային հավակնություններ ունեին հարևանների և միմյանց նկատմամբ,

Վերոնշյալ հանգամանքները ավելի էին խորացնում եվրոպական պետությունների միջև առաջացող հակասությունները՝ հանգեցնելով տևական մրցապայքարի և պատերազմների:

Հակամարտություններից առաջնայինը անգլո-իսպանական մրցապայքարն էր: Աշխարհագրական մեծ հայտնագործություններից հետո Իսպանիան դարձել էր հզոր ծովային տերություն: Ամերիկայում Իսպանիայի գաղութներից մեծ քանակությամբ ոսկի և արծաթ էր բերվում Իսպանիա, ինչը սակայն չէր ներդրվում երկրի տնտեսության զարգացման մեջ:

Մինչդեռ բողոքական կրոն ընդունած Անգլիայում արագ զարգանում էր կապիտալիստական արտադրությունը: Մանուֆակտուրաներում արտադրվում էին տարատեսակ ապրանքներ, որոնք մեծ պահանջարկ ունեին և հաջողությամբ վաճառվում էին Եվրոպայի երկրներում ու իսպանական գաղութներում: Անգլիական ծովահենները հանդուգն արշավանքներ էին կատարում, զավթում Ամերիկայից ոսկի և արծաթ տեղափոխող իսպանական նավերը:

Ծովահենների զավթումներին վերջ տալու և կաթոլիկությունը Անգլիայում վերականգնելու նպատակով՝ Իսպանիայի արքա Ֆիլիպ II-ը որոշեց նպատակին հասնել Անգլիաներիխուժելով: Հաղթանակին վստահ լինելով՝ նա իր նավատորմն անվանեց «Անպարտելի արմադա»: Այդ նավատորմի անփառունակ վախճանը 1588 թ. խարխլեց Իսպանիայի ծովային հզորությունը: Ծովերում գերիշխանությունը անցավ Անգլիային, որը շուտով վերածվեց ծովային հզոր տերության:

Մյուս տևական հակամարտությունը Լեհաստանի և Ռուսաստանի միջև էր: Իվան IV Ահեղի որդի Ֆյոդորի (1584-1598) մահով սպառվեց Ռյուրիկովիչների արքայատոհմը: Ռուսական գահն անցավ ցարի աներորդի Բորիս Գոդունովին, որի ջանքերով Ռուսաստանում Պատրիարքություն ստեղծվեց: Նրա մահից հետո, XVII դ. սկզբին Ռուսաստանում խառնակություններ սկսվեցին: Ռուսական գահին, Լեհաստանի աջակցությամբ, փորձեցին տիրանալ տարբեր ինքնակոչ մարդիկ: Լեհական զորքերը գրավեցին Մոսկվան, իսկ շվեդները՝ Նովգորոդը և հարակից շրջանները:

Անկախության կորստի սպառնալիքը ոտքի հանեց ռուս ժողովրդին: Նիժնի Նովգորոդի երկրամասային ավագ Կուզմա Մինինի նախաձեռնությամբ ստեղծվեց «Համերկրյա խորհուրդ», որը ժամանակավոր կառավարության դեր կատարեց: Նրա կոչով կազմված աշխարհագործ իշխան Դմիտրի Պոժարսկու ղեկավարությամբ 1612 թ. ազատագրեց Մոսկվան:

Խաթարված պետական իշխանությունը վերականգնելու նպատակով 1613 թ. Մոսկվայում Ջեմստվոյական՝ համերկրյա ժողով գումարվեց, որը նոր ցար ընտրեց 16-ամյա Միխայիլ Ռոմանովին: Ռոմանովների արքայատոհմը կառավարեց Ռուսաստանը մինչև 1917 թ.:

Համաեվրոպական ամենից տևական հակամարտությունը ծավալվեց XVII դ. սկզբին Գերմանիայի միավորման խնդրի շուրջ, որտեղ ռեֆորմացիայից արդյունքում ձևավորվել էին ինչպես բողոքական, այնպես էլ կաթոլիկ մի քանի տասնյակ իշխանություններ:

Գերմանիայի կայսեր տիտղոսը կրող ավստրիական Հաբսբուրգների արքայատոհմը, որի տիրապետության տակ էին, Ավստրիայից բացի, նաև Հունգարիան, Չեխիան և Հյուսիսային Իտալիան, ձգտում էր իր իշխանության ներքո իրապես միավորել ողջ Գերմանիան և երկրում վերականգնել կաթոլիկությունը: Նրան դաշնակցում էին Գերմանիայի կաթոլիկ իշխանները, Իսպանիան, Լեհաստանը և Հռոմի պապը:

Գերմանիայի միավորումն ու հզորացումը վտանգ էր Ֆրանսիայի, Դանիայի, Շվեդիայի և անկախության համար պայքարող Հոլանդիայի համար: Հաբսբուրգների հզորացման և կաթոլիկ Լեհաստանի դեմ թշնամաբար էին տրամադրված հարևան Օսմանյան տերությունը և Ռուսաստանը :

Համաեվրոպական այս հակասությունները ի վերջո հանգեցրին բացահայտ ռազմական բախման, որը պատմության մեջ մտավ «Երեսնամյա պատերազմ» (1618-1648) անունով: Այն ավարտվեց Վեսֆալյան հաշտության պայմանագրով: Եվրոպայի քաղաքական քարտեզում

զգալի փոփոխություններ կատարվեցին: Անկախ պետություններ ճանաչվեցին Հոլանդիան և Շվեյցարիան: Հյուսիսային Գերմանիայի Բալթիկ ծովի առափնյա տարածքները անցան Շվեդիային: Գերմանիայի Էլզաս երկրամասը բաժին հասավ Ֆրանսիային: Ռուսաստանը հետ վերադարձրեց Լեհաստանի կողմից նախկինում զավթված ռուսական որոշ տարածքներ:

Գերմանիայի տնտեսական և քաղաքական մասնատվածությունը Երեսնամյա պատերազմի հետևանքով ավելի խորացավ: Գերմանական մանր իշխանությունները ճանաչվեցին անկախ պետություններ: Վեստֆալյան հաշտությամբ Եվրոպայում աշխարհաքաղաքական նոր իրավիճակ հաստատվեց, բայց տևական խաղաղություն այն չբերեց: Եվրոպան շարունակեց մնալ հակասությունների և ռազմական նոր բախումների կենտրոն:

Թեմայի վերջին § 58-ը կազմված է հետադարձ կապ ապահովող թեմատիկ թեստի ձևով: Այն ընդգրկում է տվյալ թեմայի դասանյութերում ներկայացված պատմական առավել կարևոր և հիշարժան իրադարձությունների իմացությանը վերաբերող հարցեր: Թեստից ստացած գնահատականները կարող են օգտագործվել աշակերտների ավարտական գնահատման համար:

6. ԽԻԿ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴԱՍԱՊՐՈՑԵՍՈՒՄ

Վերջին տասնամյակների ընթացքում ԿԳՄՍ նախարարության հովանավորությամբ ՀՀ դպրոցների բազմաթիվ ուսուցիչներ վերապատրաստվել են «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով» (ՔՄԶԿԳ) ծրագրով: ԱՄՆ-ում և ԵՄ երկրներում կիրառվող այդ ծրագրի հիմքում դրված է դասավանդման ԽԻԿ ռազմավարությունը: Այդ կերպ դասի պլանավորումը և անցկացումը նպաստում են սովորողների ակտիվ ներգրավմանը դասապրոցեստում և նրանց որակյալ կրթության իրականացմանը: Պատմություն դասավանդող այն ուսուցիչների համար, որոնք ծանոթ չեն ԽԻԿ ռազմավարությանը, ստորև համառոտ ներկայացնենք այդ համակարգի հիմնական մոտեցումները:

ԴԱՍԱՊՐՈՑԵՄԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ԽԻԿ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ

- Խթանում (մինչև դասանյութի ընթերցումը կամ ուսուցչի դասախոսությունը անցկացվող քննարկում)
 - խմբային մտավոր գրոհ (որն է մեր այսօրվա թեման՝ որոշակի սահմանել այն),
 - մտավոր գրոհի արդյունքում ստացված տեղեկության գրառում (ինչ գիտենք այդ հարցի մասին, կազմել գիտեցածի ցուցակ գրատախտակին),
 - դասակարգել ստացված տեղեկությունը ցուցակի մի կեսում.

ա) ինչ ենք ակնկալում կամ ցանկանում սովորել (լրացնել ցուցակի մյուս կեսում),
բ) ինչու ունենք դա սովորելու կարիք (ձեզ դա ի՞նչ կտա):
- Իմաստի ընկալում (դասանյութի ընթերցումը կամ դասախոսությունը անցկացնել 2-3 առանձին բաժնեմասերով. սովորողը ինքնուրույն է անցնում այս փուլով)

Սովորողները կարդում ու հետևյալ կերպ նշումներ են անում գրքում /տետրում.

V = այդ գիտեի,
+ = չգիտեի, նորություն է ինձ համար,
- = ես այլ բան էի կարծում, դա հակասում է իմ մտածածին,
? = անհասկանալի է կամ շփոթեցնող:
- Կշռադատում (կարդալուց կամ լսելուց հետո անցկացվող հետտեքստային քննարկում)
 - սովորողները առանձին կամ խմբերով կազմում են նոր տեղեկությունների ցուցակը ըստ իրենց արած նշումների (ինչ նոր բան հայտնաբերեցիք),
 - սովորողները ներկայացնում են իրենց կարծիքները նոր սովորածի մասին (կարևոր տեղեկությունը վեր հանելու նպատակով ուսուցիչն առաջարկում է հուշող հարցեր, պատասխաններին արձագանքում է. «Ինչո՞ւ ես այդպես կարծում»),
 - այս ամենից հետո առաջարկեք սովորողներին թեմայի վերաբերյալ գրավոր շարադրել իրենց կարծիքը, պատկերացումը, մտքերը:

ԽԻԿ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ ՀԱՄԱՐ

- ԲԱԶՄԸՆԹԱՑ ՀԱՐՑՈՒՄ (ըստ Սանդերսի -Բյուսի աղյուսակի ՔՄԶԿԳ պրակ II, էջ 29)

ա) հիշողության հարցեր - տեղեկության բացահայտում և վերհիշում,
բ) գնահատման հարցեր – (Reading the lines, between the lines, beyond the lines)
դատողություններ լավի ու վատի, ճշտի ու սխալի մասին,

- զ) վերլուծության հարցեր – (անալիզ) հարցի գիտակցական բաժանում ենթամասերի և դրանց վերլուծական քննարկում,
- դ) համադրության հարցեր - (սինթեզ) առանձին փաստերի և դրվագների համադրության միջոցով նոր եզրակացությունների հանգում,
- ե) մեկնաբանության հարցեր – գաղափարների, փաստերի և արժեքների միջև նոր կապերի և հարաբերությունների հայտնաբերում,
- զ) կիրառում – փորձարկված նոր գիտելիքի և հմտության յուրացում՝ հետագայում կիրառելու համար:
2. ՉՈՐՄ ՄԱՍԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆԿԱԼՄԱՆ ՄՈՂԵԼ (նոր բովանդակության ընկալման 4 մակարդակների մասին) (ՔՄԶԿԳ պրակ II, 33)
- ա) գլոբալ ընկալում – թեմայի կամ նրա բովանդակության մասին ընդհանուր պատկերացում կազմելը,
- բ) մեկնաբանական ընկալում – քննարկել թաքնված իմաստը՝ բացահայտել հարաբերությունները, կապել բովանդակային տարբեր հասկացություններն ու մտքերը,
- գ) անձնական ընկալում – նոր գիտելիքի ըմբռնումը սովորողի անձնական փորձառության և մտածողության համատեքստում,
- դ) քննադատական ընկալում – թույլ է տալիս մի քայլ հեռանալ բովանդակությունից, վերլուծել այն և մտածել դրա համեմատական արժեքի, իրավացիության, կիրառելիության և նշանակության մասին՝ ունեցած գիտելիքների, պատկերացումների և ըմբռնումների լույսի ներքո:
3. ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՃԻ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԸ (ՔՄԶԿԳ պրակ IV, էջ 2-3)
- ա) անձնականից հասարակական,
- բ) հետերոնիմից ավտոնոմ,
- գ) ինտուիտիվից տրամաբանական,
- դ) մեկ տեսանկյունից մի քանիսին անցնելու:
4. ԸՆԴՀԱՏՎԱԾ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ (ՔՄԶԿԳ պր. III, 16) «Ամերիկայի հայտնագործումը»
- ա) ներածական բացատրություն, թե ինչի մասին է խոսելու,
- բ) 4-5 բոպե զույգերով գրել, թե ինչ է բերվել Ամերիկայից և ինչ է տարվել,
- գ) դասախոսության առաջին մասը,
- դ) 1-2 բոպե հարցեր՝ ինչ գիտեինք և ինչ իմացանք,
- ե) 3-4 բոպե զույգերով գրել, թե անձնական ինչ հասկություններ ուներ Կոլումբոսը,
- զ) դասախոսության երկրորդ մասը,
- է) ինչ գիտեինք և ինչ իմացանք,
- ը) կշռադատումն ամփոփող վարժություն,
- 5-բոպեանոց շարադրություն՝ այժմ ինչ կարծիք ունեք Կոլումբոսի մասին,
 - ի՞նչ էր նրա արածը՝ հերոսություն, թե՞ արկածախնդրություն,
 - պատասխանել երկիմաստ հարցի՝ նրա հայտնագործությունը լավ էր, թե վատ,

- գրեք, թե ինչ հարց ձեզ համար մնաց անպատասխան:

5. ՋԻԳՍՈ – I (ՔՄՁԿԳ պրակ V, 55)

- համագործակցային խմբեր (նյութի հանձնարարում),
- փորձագիտական խմբեր (ուսումնասիրում և պատրաստվում են),
- վերադարձ համագործակցային խմբեր (ուսուցում և ստուգում):

6. ՋԻԳՍՈ – II (ՔՄՁԿԳ պրակ V, 57)

- համագործակցային խմբեր (նյութի հանձնարարում ըստ բաժինների՝ 1-4),
- փորձագիտական խմբեր (N 2- ները համատեղ ուսումնասիրում են նյութը և պատրաստվում),
- վերադարձ համագործակցային խմբեր (ուսուցում և ստուգում),
- անհատական և խմբային հաշվետվություններ:

7. ԿԱՐՈՒՄԵԼ՝ մեկը մնում է, 3-ը շրջում են:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԿՈՆԿՐԵՏ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մտքերի փոխանակություն՝ ընդհանուր հարց ու պատասխանի վրա հիմնված քննարկում (ՔՄՁԿԳ պրակ IV, 14):
2. Քննարկման ցանց՝ առաջադրել մեկ հարց, քննարկել դրա «այո» կամ «ոչ» պատասխանները, սկզբում՝ զույգով, հետո 4-ով և այլն:
3. ԻՈՒՍ աղյուսակ (ՔՄՁԿԳ պրակ IV, 21).

<u>ինչ գիտենք</u>	<u>ուզում ենք իմանալ</u>	<u>ինչ սովորեցինք</u>
-------------------	--------------------------	-----------------------

4. Համագործակցային թիմախաղեր (ԿՎՆ), (ՔՄՁԿԳ պրակ V, 33):
5. Շրջագայություն պատկերասրահում (ՔՄՁԿԳ պրակ V, 39):
6. Գրել ամենակարևոր միտքը մեկ նախադասությամբ (ՔՄՁԿԳ պրակ II, 59):
7. Շարել ըստ հերթականության:
8. Վերարտադրել սեփական բառերով:

ԿՇՈՒԱԴԱՏՄԱՆ ԿՈՆԿՐԵՏ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Անդրադարձ հիմնական արտահայտություններին:
2. Մտածիր, զուգորդիր, մտքեր փոխանակիր:
3. 5-րդ պեանոց շարադրանք (ամփոփել թեմայի շուրջ իր մտքերը):
4. T -աձև աղյուսակ:
5. Վեննի դիագրամ:

7. ԴԱՍԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՄՈՒՇԱՅԻՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ստորև ներկայացվող դասերի պլանավորման և անցկացման նմուշային օրինակները կազմված են սույն դասագրքի նյութերի հիման վրա՝ ԽԻԿ ռազմավարության կիրառմամբ:

Պարագրաֆ 1. ՄՈՒՏՔԻ ԴԱՍ

ԴԱՍԻ ՊԼԱՆ

ԴԱՍԱՆՅՈՒԹԸ՝ § 1. Քաղաքակրթության սկզբնավորումը

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 2 դասաժամ՝ 45 + 45 րոպե

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ Համակցված դաս

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ՝

ԻՄԱՆԱ՝

- «Քաղաքակրթություն» հասկացությունը՝ ուշադրություն դարձնելով դրա բազմիմաստությանը և՛ որպես պատմական զարգացման գործընթաց, և՛ որպես լոկալ հասարակական-մշակութային ընդհանրություն:
- Որքանով են միմյանց հետ առնչվում քաղաքակրթություն-քաղաք-տնտեսություն-մշակույթ բառերը:
- Քաղաքակրթության սկզբնավորման տնտեսական և սոցիալական նախադրյալները:
- Քաղաքակրթության տարբեր օջախների առաջացման պատճառներն ու անհրաժեշտ պայմանները:
- Պետություն հասկացությունը:

ԿԱՐՈՂԱՆԱ՝

- Տարբերակել քաղաքակրթություն և մշակույթ հասկացությունները:
- Բացատրել հասարակության զարգացմանը նպաստող գործոնները (աշխարհագրական դիրքից, բնակլիմայական պայմաններից մինչև պետություն):
- Բացատրել միասնական պետությունների կազմավորումը՝ որպես քաղաքակրթության ձևավորման արդյունք:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ «Գաղափարների քարտեզագրում», «Կարճ դասախոսություն», «Մտածի՛ր, աշխատի՛ր զույգիդ հետ, ներկայացրու՛ մտքերդ»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝ դասագիրք, տետր, կպչուն գունավոր թղթեր՝ խթանման փուլում տարբեր հարցերի պատասխանները առանձնացնելու համար:

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ՝

Աշխարհագրություն – Քաղաքակրթությունների զարգացման բնական պայմանների և աշխարհագրական միջավայրի ազդեցությունը:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ


(այս և հաջորդ բոլոր դասերի ուսուցումը կազմակերպվում է ԽԻԿ համակարգով)

I ԴԱՍԱԺԱՄ (45 րոպե)

ԽԹԱՆՈՒՄ: Ուսուցման գործընթացում, հիմնվելով աշակերտների նախկին փորձառության և արդեն իսկ ունեցած նախնական գիտելիքների վրա, մտադրոհի միջոցով թարմացնել նրանց հիշողությունը «պատմություն» հասկացության և ժամանակի միավորների հաշվարկման

շուրջ՝ առաջնահերթությունը տալով «դար», «Ք.ճ.ա.» և «Ք.ճ.հ.» հասկացությունների ըմբռնմանը: Այս առաջարկել կպչուն թերթիկների վրա պատասխանել՝ «ի՞նչ է պատմությունը և ի՞նչ է այն ուսումնասիրում» հարցերի պատասխաններն ու փակցնել գրատախտակի մի անկյունում: Ուսուցիչը աչքի է անցկացնում պատասխաններն ու սաների օգնությամբ առանձնացնում առավել ամբողջական և ճիշտ պատասխանները: Քանի որ ճիշտ պատասխաններն առանձնացված են, պարզաբանման կարիք ունի ևս մեկ հարց. «Ի՞նչ է ուսումնասիրում Համաշխարհային պատմությունը, և ինչպե՞ս է մեր ազգային պատմությունը առնչվում դրա հետ»: Կրկին աշակերտների օգնությամբ առանձնացնել առավել ամբողջական ու ճիշտ պատասխանները:

Այս կրկնողությունից հետո տեղեկացնել նոր թեմայի ուսուցումը սկսելու մասին: Ուսուցիչը գրատախտակին գրում է «Քաղաքակրթություն» բառը և կազմակերպում մտազրույց:



Ճյուղավորումների քանակը և բազմազանությունը կախված են նյութի ուսումնասիրության խորությունից, հետաքրքրությունների շրջանակից: Յուրաքանչյուր բառ գծիկով միանում է առանցքային բառի հետ, իսկ միևնույն «ծագումն» ունեցող բառերը վերցվում են մի շրջանի մեջ որպես ուսումնասիրման մեկ ոլորտ: Այնուհետև սովորողներին հանձնարարել մտազրույցի հետևանքով առաջացած կապերով (բառերով) և «Քաղաքակրթություն» բառով ձևակերպել սեփական սահմանման իրենց տարբերակը՝ ինչ է քաղաքակրթությունը (գրավոր կամ բանավոր):

Այս ուսուցիչը «Կարճ դասախոսության» մեթոդով ներկայացնում է թեմայի առանձնահատկությունները և նշանակությունը: Շատ կարևոր է, որ ուսուցիչը սաների ուշադրությունը հրավիրի քաղաքակրթություն և մշակույթ հասկացությունների միջև եղած տարբերությունների վրա (այն, որ անցումը քաղաքակրթության տեղի է ունեցել նախնադարյան հասարակարգի ավարտին), և դրանով իսկ ապահովի անցումը իմաստի ընկալման փուլին:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Այս փուլում սովորողների կողմից կատարվում է թեմայի յուրացում՝ նոր տեղեկությունների և փաստերի յուրացման միջոցով: Այս բոլորը հնարավոր է սովորողներին կատարել տալ նոր թեման ինքնուրույն սովորելու և ներկայացնելու միջոցով:

Նոր նյութի յուրացման նպատակով ուսուցիչը դասարանը բաժանում է 2-հոգանոց խմբերի՝ փոխգործուն աշխատանք կատարելու համար: Աշակերտներին հանձնարարվում է կարդալ դասագրքի «Քաղաքակրթության սկզբնավորման տնտեսական նախադրյալները» ենթավերնագիրը՝ կիրառելով «Մտածի՛ր, աշխատի՛ր գույզիդ հետ, ներկայացրու՛ մտքերդ» վարժությունը:

Մա արագ կատարվող համատեղ ուսումնառության վարժություն է, որն օգնում է աշակերտներին մտածել, կշռադատել կարդացած նյութը և ընկերների օգնությամբ հստակեցնել, ձևակերպել իրենց մտքերը: Յուրաքանչյուրն ինքնուրույն կարդում է հանձնարարված նյութը, մի քանի րոպե մտածում թեմայի շուրջ: Նյութը կարդալուց հետո սովորողները զույգեր են կազմում և միմյանց հետ մտքեր փոխանակում կարդացածի վերաբերյալ՝ փորձելով գտնել այն պատասխանը, որն ամբողջացնում է իրենց երկուսի՝ թեմայից ստացած նոր գիտելիքը: Այնուհետև զուգընկերները պետք է միմյանց հետ փոխանակեն իրենց եզրակացությունները սովորած նյութի վերաբերյալ: Ուսուցչի նախապես առաջադրած հարցը պետք է կապված լինի տնտեսական նախադրյալների դուրս բերման հետ:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ: Սահմանված ժամանակի ավարտից հետո զույգերից յուրաքանչյուրը ներկայացնում է իրենց առանձնացրած տնտեսական նախադրյալներից որևէ մեկը, մյուսները ուշադիր լսում են, ապա շարունակում նախորդ զույգին: Այս մեթոդի՝ «Ներկայացրո՛ւ՝ մտքերդ» մասն ունի ներկայացնելու տարբեր ձևեր, որոնց առաջիկա դասերի պլանավորման մեջ նույնպես կանդրադառնանք: Ուսուցիչը զույգերից մի քանիսին հարցնում է, թե ինչ սովորեցին իրենց քննարկումների ընթացքում: Որպես յուրացում կհանձնարարվի Դաս 1-ի երկու ենթավերնագրերն ու տետրում դուրս գրել նոր հասկացությունները, ծանոթանալ QR կոդով ներկայացված լրացուցիչ նյութերին:


ԱՆԴՐԱԴԱՐՁ: Հարցերի միջոցով կընդհանրացվի յուրացրածը՝ պարզելու, թե ինչ անհասկանալի հարցեր են մնացել, ո՞րն էր իրենց համար ամենամեծ բացահայտումը այս դասից, ի՞նչը մնաց անհասկանալի:

ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ: Հանձնարարել դասը պատմել սովորել (§1, առաջին 2 ենթավերնագրերը), պատմության տետրում դուրս գրել նոր հասկացությունները իրենց բացատրություններով, լրացուցիչ նյութ՝ QR 1.1-1.5:

§ 1. II ԴԱՍԱԺԱՄ (45 րոպե) (I դասաժամի շարունակությունը)

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ «Պրիզմա», «Կարճ դասախոսություն», «Մտածի՛ր, աշխատի՛ր զույգիդ հետ, ներկայացրո՛ւ մտքերդ», Ֆրայերի մոդել:

ԽԹԱՆՈՒՄ: Այս թեմայի ուսուցման հիմնական նպատակն է օգնել սովորողներին հասկանալու պետության առաջացման օրինաչափ ընթացքը, պետությունը՝ որպես հասարակական կազմակերպման հատուկ: Ուստի խթանման փուլում կառաջադրվի «Պրիզմա» (կամ բազմանիստ) մեթոդով դուրս բերել «Պետություն» բառի վերաբերյալ ունեցած նախնական գիտելիքները:




Վարժության ավարտից հետո սովորողներին առաջարկվում է բազմանիստի սկզբնաբառով (պետություն) և վերջնաբառով կազմել մեկ նախադասություն (1.5 բառ): Աշակերտներից մի քանիսը կներկայացնեն իրենց կազմած նախադասությունները: Շատ արդյունավետ կլինի, եթե դասի վերջում ուսուցիչը նորից անդրադառնա «Բազմանիստ»-ին:

Նախապատրաստելով աշակերտների մուտքը նոր նյութի մատուցմանը՝ ուսուցիչը սահուն կերպով անցնում է դասի հաջորդ փուլին:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Այս փուլում, ինչպես Դաս 1-ի ժամանակ, կարելի է կրկին կիրառել գույգերով աշխատելու սկզբունքը (Տե՛ս Դաս 1): Այս անգամ առաջադրանքը կլինի պետություն հասկացության սահմանումն ու ձևավորման նախադրյալների դուրս բերումը: Երբ սովորողները կներկայացնեն իրենց յուրացրածը, ուսուցիչը կարճ դասախոսությամբ շեշտադրումը կտանի դեպի երկրների առաջացման աշխարհագրությունը (Արևելքը՝ որպես քաղաքակրթության առաջացման գլխավոր սկզբնակետ, ցուցադրելով դասի վերջում եղած քարտեզը):

ԿՇՌԱԴՏՈՒՄ: Թեմայի յուրացումից հետո հանձնարարվում է գույգերով կամ արդեն քառյակներով լրացնել Ֆրայերի մոդելը՝ կենտրոնում հիմնական թեման է կամ եզրույթը (այս դասի համար՝ պետություն), տերմինը, բառը, հասկացությունը, իսկ նրա շուրջը չորս վանդակներ են, որոնցից առաջինում անհրաժեշտ է սահմանել տվյալ տերմինը, հասկացությունը, երկրորդ վանդակում գրվում են դրան բնութագրող կողմերը, երրորդ վանդակը օրինակների համար է, իսկ չորրորդում նշվում են այն դեպքերը, որոնք տվյալ հասկացության համար օրինակ չեն կարող ծառայել:



Սահմանում	Այս վանդակում սովորողը սահմանում է տվյալ թեման, հակիրճ բացատրում է տվյալ կանոնը, հասկացությունը: Սովորողը կարող է բառերով սահմանել, նկարել, գծել տվյալ երևույթը և այլն:
Բնութագրական գծեր	Այստեղ սովորողը առավել ընդարձակում է իր ասելիքը տվյալ երևույթի, հասկացության շուրջ: Նրանք ընդարձակորեն բնութագրում են տվյալ երևույթին բնորոշ բոլոր կողմերը:
Օրինակ են	Այս վանդակում սովորողը գրում է թեմային, եզրույթին համապատասխան օրինակներ, կարող է նշել դրա կիրառության ոլորտները:
Օրինակ չեն	Օգտակար է, որ սովորողը կարողանա նշել այն դեպքերը, որոնք դիտարկվող թեմային, եզրույթին կամ հասկացությանը չեն առնչվում:

ԱՆԴՐԱԴԱՐՁ: Հարցերի միջոցով կընդհանրացվի յուրացրածը՝ պարզելու, թե ինչ անհասկանալի հարցեր են մնացել, արդյոք որն էր իրենց համար ամենամեծ բացահայտումը այս դասից: Կհանձնարարվի դասի երկրորդ մասն ու տեսրում շարունակել դուրս բերել նոր հասկացությունները, ծանոթանալ QR կոդով տրված լրացուցիչ նյութերին:

ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ: Հանձնարարել պատմել սովորել §1-ի շարունակությունը, պատմության տեսրում դուրս գրել նոր հասկացությունները իրենց բացատրություններով, լրացուցիչ նյութ՝ QR 1.1-1.5; լրացուցիչ նյութ՝ QR1.6-1.7: (Լրացուցիչ՝ հանձնարարել սովորողներին՝ եթե որևէ մեկը եղել է Եզիպտոսում կամ որևէ հետաքրքիր տեղեկություն գիտի այդ երկրի մասին, նախապատրաստվեն պատմելու հաջորդ դասին):

Պարագրաֆ 2

ԴԱՄԻ ՊԼԱՆ

ԴԱՍԱՆՅՈՒԹԸ՝ § 2. Հին Եգիպտոսի քաղաքակրթության արշավույսը
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 1 դասաժամ (45 րոպե)

ԴԱՄԻ ՏԻՊԸ՝ Նոր նյութի յուրացման դաս

ԴԱՄԻ ՆՊԱՏԱԿԸ՝

ԻՄԱՆԱ՝

- Հին Եգիպտոսի աշխարհագրական դիրքը
- Եգիպտոսը՝ որպես «Նեղոսի պարզև» արտահայտության ծագումն ու իմաստը
- «Հին և Միջին Եգիպտոսներ» հասկացությունները
- Բուրգերի և սֆինքսի՝ որպես մշակութային ժառանգության վկայություն
- Հիքսոսների հետ երկարատև պատերազմի մասին

ԿԱՐՈՂԱՆԱ՝

- Քարտեզի վրա գտնել Եգիպտոսը, Նեղոսը, դելտան
- Ներկայացնել փարավոնների գործունեության կարևոր դրվագները

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ «Նախնական կազմակերպիչ», «Փոխգործուն գրառումների համակարգ», «Ֆրայերի մոդել»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝ դասագիրք, Եգիպտոսի քարտեզ, գծապատկերներ, նշագրիչներ, նկարներ՝ բուրգերի, սֆինքսի, որևէ փարավոնի, մումիայի:

ԴԱՄԻ ԸՆԹԱՑՔԸ

Քանի որ նախորդ երկու դասերի ընթացքում նպատակը եղել է քաղաքակրթություններից մինչև պետության առաջացումը հասկանալը, ապա այժմ անցում ենք կատարում կոնկրետ Հին Արևելքի երկրների ուսումնասիրությանը: Այստեղ հնարավոր են դասապլանների կառուցվածքային նմանություն (իհարկե, տարբեր մեթոդների կիրառմամբ): Շատ կարևոր և առաջնային է դասի նպատակների հստակեցումը:

Ստուգում ենք տնային առաջադրանքները, եթե կան, և անցում կատարում նոր նյութի ուսուցմանը:

ԽԹԱՆՈՒՄ՝ «Նախնական կազմակերպիչ» մեթոդը շատ արդյունավետ է խթանման փուլում սովորողների հետաքրքրությունը շարժելու համար: Մեթոդի էությունը հետևյալն է. սովորողների ուշադրությունը կենտրոնացնելու և հետաքրքրություն առաջացնելու նպատակով ուսուցիչը նախապես ընտրում է թեմայի հետ կապված նկարներ (եգիպտական բուրգեր, սֆինքս, փարավոն, մումիա), կազմակերպում է դիտում, որից հետո անցկացնում է փոքրիկ քննարկում: Հարց ենք ուղղում դասարանին. Ո՞ր երկրի ուսումնասիրությանն են վերաբերում այս նկարները:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Դասի այս փուլում սովորողները ինքնուրույն ուսումնասիրում են դասանյութը «Փոխներգործուն գրառումների համակարգ» մեթոդի կիրառմամբ: Այս

մեթոդի էությունն այն է, որ կարդալիս տեսրում կամ գրքի վրա մատիտով արվում են փոխգործուն գրառումներ՝ հետևյալ նշաններով.

- V - գիտեմ
- - իմ իմացածին հակասում է
- + - նոր տեղեկություն է
- ? - անհասկանալի է, շփոթեցնող
- ! - հետաքրքիր է, կարելի է քննարկել

Սովորողներին հանձնարարում ենք անհատապես ընթերցել դասանյութը: Կարդալու ընթացքում հարկավոր է գրքի լուսանցքում մատիտով տեղադրել այդ նշանները՝ ըստ իրենց իմացության և պատկերացման: Կարիք չկա բոլոր տողերում նշաններ անելու: Ընդհանուր առմամբ՝ այս գրառումները արտացոլում են տեքստի հետ սովորողի հարաբերությունները: Կարդալու ընթացքում արված նշումները ծառայում են որպես հարմար տեղեկատու՝ հաստատված կամ հերքված պատկերացումներն ի հայտ բերելու համար: Ընթերցումից ստացված տեղեկությունը դասակարգելու համար աշակերտները կազմում են կատարած նշումների իրենց անհատական աղյուսակը՝ հետևյալ ձևով.

V	-	+	?	!

Դասի յուրացումն ավարտելուց հետո, եթե կան «անհասկանալի է, շփոթեցնող, կամ հետաքրքիր է, կարելի է քննարկել» նշումները, ապա պետք է պարզաբանվեն այդ հարցերը՝ էլնելով նյութից, ու քննարկվեն՝ թեմայի ընկալումը լիարժեք դարձնելու նպատակով:

Քննարկման և մտքերի փոխանակման ընթացքում ուսուցիչը լրացնում է բացթողումները՝ ամբողջացնելով թեման:

ԿՇՈՒՄԴՍՈՒՄ: Թեմայի յուրացումից հետո հանձնարարվում է լրացնել Ֆրայերի մոդելը (Տե՛ս դաս 1-ի պլանում):

ԱՆԴՐԱԴԱՐՁ: Առաջարկվում է պատասխանել այն հարցերին, որոնք գրվում են գրատախտակին, այդ թվում՝ էլեկտրոնային կամ քարտերի վրա. «Ո՞ր հարցն է եղել ամենաբարդը, ի՞նչն էր քեզ համար բացահայտում, ի՞նչն էս լավ հասկացել: Ի՞նչը չէս հասկացել»:

Եթե ժամանակ մնում է, ապա կարելի է լսել այս հարցերի պատասխանները, իսկ եթե ոչ, ապա հաջորդ դասին կքննարկվի:

Պարագրաֆ 3

ԴԱՍԻ ՊԼԱՆ

ԴԱՍԱՆՅՈՒԹԸ՝ § 3. Եզիպտոսի հզորությունն ու անկումը (45 բուպե)

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ Համակցված դաս:

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ՝

ԻՄԱՆԱ՝

- Հիքսոսների տիրապետությունից Եզիպտոսի ազատագրության մասին
- Եզիպտոսի տնտեսության մեջ կատարված կարևոր ձեռքբերումների մասին (շադուֆի կիրառումը, գործիքների կատարելագործումը...)
- Աքեմենյան Պարսկաստանի կողմից Եզիպտոսի գրավման մասին

ԿԱՐՈՂԱՆԱ՝

- Բացատրել հիքսոսներից կրած պարտության հետևանքները
- Ներկայացնել այն կարևոր փոփոխությունները, որ կատարվել էին Նոր թագավորության շրջանում Եզիպտոսի տնտեսության մեջ
- Ներկայացնել այն կարևոր փոփոխությունները, որ կատարվել էին Նոր թագավորության շրջանում Եզիպտոսի ռազմաքաղաքական կյանքում
- Բացատրել, թե ինչու Եզիպտոսը թուլացավ և անկում ապրեց:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ «Բլից հարցում», խմբային աշխատանք, «Ամփոփում մեկ նախադասությամբ»

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝ դասագիրք, Եզիպտոսի քարտեզ, գծապատկերներ, նշագրիչներ, տեքստեր՝ փարավոնների և նրանց գործունեության վերաբերյալ, խաղային գառ, ավագե ժամացույց, պաստառներ Ա 3, գունավոր ֆլումաստերներ կամ մատիտներ:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Քանի որ Հին Եզիպտոսի պատմության ուսումնասիրումը շարունակվում է, ուստի առաջարկվում է նախորդ դասի ստուգում կազմակերպել «Բլից հարցումներով», պարզելու համար՝ ինչ թերացումներ կամ դժվարություններ են եղել, որից հետո խմբային աշխատանքով, ինչպես նախորդ դասին, շարունակել նոր դասի յուրացումը: Խմբերի բաժանումը ամեն դասին կարելի է տարբեր կերպ կազմակերպել (ըստ կենտ և զույգ համարների, ըստ գույների...): Նոր դասը խմբերին հասվածաբար բաժանելուց առաջ այդ խմբերին տալ նոր դասում հանդիպող փարավոնների անուններ, այդ կերպ նրանք նաև պատասխանատվություն կկրեն՝ առավել հետաքրքրությամբ ներկայացնելու տվյալ փարավոնին: Նախապես ուսուցիչը պետք է պատրաստած լինի փոքրիկ տեքստեր նրանց մասին, օրինակ՝ Յահմոս I, Թուրմոս I, Թուրմոս III, Ռամզես II:

Բլից հարցումը հետաքրքիր է կազմակերպել խաղային տարբերակով. ուսուցիչը նախապես կազմում է նախորդ դասի վերաբերյալ հարցեր (քանակը պայմանավորված է դասարանում ձևավորվելիք խմբերի քանակով, որ յուրաքանչյուր խումբ առնվազն 2 հարցի

հնարավորություն ունենա): Խաղային գառը նետում է խմբից որևէ մեկը, և ընկած թվին համապատասխան ուսուցիչը հնչեցնում է կարճ հարցը՝ տալով պատասխանի համար 10 վայրկյան ժամանակ: Չկարողանալու դեպքում պատասխանի հնարավորությունը փոխանցել մյուս խմբին: Այս տարբերակով հարցումը կարելի է կազմակերպել ինչպես նախորդ՝ կոնկրետ մեկ դասը ստուգելու համար (առավելագույնը 10 րոպե, այնպես էլ ամփոփիչ դասերի ժամանակ՝ ընդգրկելով հարցերի առավել մեծ շրջանակ, նույնիսկ հարցերը կարելի է խմբավորել երկաստիճան տարբերակով, օրինակ՝ 1-3 թվերի ընկնելու դեպքում՝ համեմատաբար հեշտ ու կարճ պատասխանով հարցեր, իսկ 4-6 թվերի ընկնելու դեպքում՝ համեմատաբար ծավալուն հարցեր, հետևաբար միավորներն էլ տարբեր կլինեն իրենց կշռով): Նմանատիպ խաղային տարբերակով ստուգումները շատ ժամանակ չեն խլի, եթե պարբերաբար դրանք կիրառվեն, և սովորողներն էլ կտվորեն արագ ինքնակազմակերպվել, կվարժվեն նաև թիմային աշխատանքին ու համագործակցելուն:

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼ՝ մտազրոհի միջոցով հարցեր ուղղել խմբերին՝ արդյոք ինչ գիտեն իրենց խմբի անվան մասին, եթե անունները իրենց ոչինչ չեն հուշում, ապա կարելի է ընդհանուր հարցեր տալ, օրինակ՝ հայտնի եգիպտական փարավոնների մասին, որոնց անունը գիտեն, այդ թվում՝ նաև կին փարավոնների: Եթե սովորողները կարող են հիշել Կլեոպատրա, Նեֆերտիտի, Թուֆանհամոն անունները, ապա առաջարկել նրանց QR կոդով կից լրացուցիչ նյութերը կարդալ հաջորդ դասի համար: Իսկ այս դասին ուսումնասիրենք նրանցից մի քանիսին:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ՝ խմբերից յուրաքանչյուրին հանձնարարել դասին ծանոթանալուց հետո Ա3-ի վրա պատկերել Հին Եգիպտոսը և հարևան այն երկրները, որոնց հետ պատերազմել կամ որևէ առնչություն է ունեցել (որպես օգնություն առաջարկեք օգտվել §2-ում տրված Եգիպտոսի քարտեզից կամ §5-ում եղած քարտեզից, որտեղ երևում են նաև հարևան երկրները): Հիմնական ժամանակի ավարտից հետո խմբերը պետք է հաջորդաբար ներկայացնեն իրենց պատասառը: Այստեղ կարևոր է, որ խմբերի անունները համընկնեն իրենց բաժին հասած փարավոնի գործունեության հետ, այդ կերպ կներկայացնեն նաև հավելյալ տեղեկությունը, որ պատրաստել էր ուսուցիչը:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ՝ հարցերի միջոցով ուսուցիչը ամփոփում է նոր նյութը, կատարում գնահատում:

ԱՆԴԱԴԱՏՁ՝ ամփոփում մեկ նախադասությամբ, սաներին առաջարկել շարունակել նախադասությունը՝ սկսելով գրատախտակին գրված (երբ սաներն աշխատում էին խմբերով) կամ քարտի վրա նշված արտահայտություններից որևէ մեկից, օրինակ՝

1.	Այսօր ես իմացա.....
2.	Հետաքրքիրն այն էր, որ.....
3.	Ինձ համար դժվար էր.....

4.	Ես հասկացա, որ.....
5.	Այժմ ես կարող եմ....
6.	Ինձ զարմացրեց...
7.	Ես սովորեցի...
8.	Ես ձեռք բերեցի...

Որպես տնային աշխատանք՝ հանձնարարել կազմել աղյուսակ և լրացնել թագավորներին ու նրանց կատարած ամենակարևորը գործը Եգիպտոսի համար: Գրել փոքրիկ շարադրություն՝

1. «Մեկ օր փարավոնի կյանքից» կամ 2. «Մեկ օր եգիպտացի հողագործի կյանքից» (օգտակար տեղեկություն QR 3.2):

Պարագրաֆ 4.

ԴԱՍԻ ՊԼԱՆ

ԴԱՍԱՆՅՈՒԹԸ՝ § 4 Հին Եգիպտոսի քաղաքակրթության ազդեցությունը (45 ընթաց)

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ Համակցված դաս:

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ՝

ԻՄԱՆԱ՝

- Ինչպիսի ազդեցություն է ունեցել Հին Եգիպտոսի քաղաքակրթությունը հետագա սերունդների ու քաղաքակրթությունների վրա
- Հիերոգլիֆի և պապիրուսի ծագման և կիրառման մասին, տասնորդական համակարգի ստեղծման մասին:

ԿԱՐՈՂԱՆԱ՝

- Բացատրել Եգիպտոսից մնացած (և առհասարակ) մշակութային կարևոր ժառանգության պահպանման կարևորությունը

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ մտազրոհ տեսանյութի ցուցադրությամբ, խմբային աշխատանք, «5-րդ դարից շարադրանք»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝ դասագիրք, համակարգիչ կամ պրոյեկտոր, նշագրիչներ, գունավոր ֆլումաստերներ, ԱՅ պաստառներ:

ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ՝ կարողությունների և հմտությունների ցուցադրման դաս:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Այս դասի համար շատ ավելի արդյունավետ կլինի օգտագործել էլեկտրոնային որևէ միջոց, քանի որ բավականին նյութեր կան ցուցադրության համար, որոնց օգտագործումը ոչ միայն կլիթանի սովորողների հետաքրքրությունը, այլև կդարձնի հիշվող: Այս դասը շատ հարմար պահ է սովորողների ուշադրությունը ևս մեկ անգամ սևեռելու «քաղաքակրթություն» և «մշակույթ» հասկացությունների վրա (հիշենք առաջին դասը):

ԽԹԱՆՄԱՆ ՓՈԻԼ՝ ցուցադրել կարճ տեսանյութ կամ սահիկաշար Եգիպտոսի մշակույթի կամ առնվազն Շամպոլիոնի վերաբերյալ, որն առաջինը կարդաց եգիպտական գիրը: (<https://infourok.ru/kultura-drevnego-egipta-5-klass-4788251.html>)

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ՝ դասարանը բաժանել 4 խմբի՝ տրամադրելով մեկական ԱՅ պաստառ և հանձնարարել ուսումնասիրել դասանյութի մեկ ենթաբաժին ու պատկերավոր արտահայտել թղթի վրա (նախապես պատրաստել նաև լրացուցիչ նյութերը նկարների և տեքստի միջոցով, որոնք առաջադրված են դասագրքում QR-ով 4.2, 4.3, 4.4, 4.6):

I ԽՈՒՄԲ Ուսումնասիրեք եգիպտական գիրը և գրականությունը (QR-4.1,4.2,4.3) և պատասխանեք առաջադրված հարցերին. 1. Ի՞նչ է հիերոգլիֆը, պապիրուսը (հորինեք հիերոգլիֆով գրված տեքստի ձեր օրինակը պաստառի վրա՝ հանդես գալով որպես Շամպոլիոն):

II ԽՈՒՄԲ Ուսումնասիրեք Հին Եգիպտոսի կրոնը և պատասխանեք տրված հարցերին. 1. Ինչո՞ւ է հենց արևի աստվածը համարվել գլխավոր աստված, 2. Ինչո՞ւ էին աստվածներին պատկերում մարդու մարմնով և կենդանու գլխով (ցույց տվեք որևէ օրինակ պաստառի վրա) (QR-4.4.,4.5):

III ԽՈՒՄԲ Ուսումնասիրեք «Հին Եգիպտոսի գիտությունը» ենթավերնագիրը և պատասխանեք տրված հարցերին. 1. Ինչո՞ւ էր անհրաժեշտություն առաջացել աստղագիտության զարգացման համար, 2. Ո՞ր գիտությունն էր զարգանում տաճարների և բուրգերի կառուցման համար, 3. Մումիաների պատրաստումը գիտության ո՞ր ճյուղի զարգացմանն էր նպաստում: (QR-2.3) Պաստառի վրա պատկերեք գիտության զարգացման արդյունքում ստեղծված հին եգիպտական որևէ վկայություն:

IV ԽՈՒՄԲ Ուսումնասիրեք Հին Եգիպտոսի ճարտարապետությունն ու արվեստը և պատասխանեք տրված հարցերին. 1. Ու՞մ պատվին էին կառուցվում շքեղ տաճարները, բուրգերը: 2. Ի՞նչ նշանավոր հուշարձանների օրինակներ գիտեք: Պատկերեք որևէ մեկը (կամ հորինեք եգիպտական ոճով) պաստառի վրա: (QR-4.,4.2,4.3):

Աշխատանքի կատարման համար հատկացված ժամանակը լրանալուց հետո յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի իր պաստառը: Ուսուցիչը կատարում է լրացումներ՝ ըստ անհրաժեշտության:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ՝ «5-րդպետնոց շարադրանք»: Մաներին հանձնարարել գրել՝ «Ինչո՞ւ է կարևոր պահպանել մշակութային արժեքները» հարցի պատասխանը, ապա ժամանակով պայմանավորված մի քանի հոգի կարդան իրենց գրածը:

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ սաներին առաջարկել ասել այն ամենահետաքրքիր նոր հասկացությունը կամ անունը, որ սովորեց այսօր:

Որպես յուրացում հանձնարարել կազմել խաչքառ, որի հարցերը կվերաբերեն միայն եգիպտական մշակույթին:

Պարագրաֆ 5

ԴԱՄԻ ՊԼԱՆ

ԴԱՍԱՆՅՈՒԹԸ՝ § 5. Հին Միջագետքի քաղաքակրթության արշավույսը
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 1 դասաժամ (45 րոպե)

ԴԱՄԻ ՏԻՊԸ՝ Նոր նյութի յուրացման և նախնական գիտելիքների ամրապնդման դաս /
«դաս- ուղևորություն»

ԴԱՄԻ ՆՊԱՏԱԿԸ՝

ԻՄԱՆԱ՝

- Միջագետք և «Մեսոպոտամիա» հասկացությունները
- Միջագետքի բնական պայմանները, տնտեսության առաջացման համար նրա նպաստավոր պայմանները
- Քաղաք-պետություն հասկացությունը
- Պետականությունների առաջացման նախադրյալները

ԿԱՐՈՂԱՆԱ՝

- քարտեզի վրա գտնել Եփրատ և Տիգրիս գետերը, նրանց ակունքները
- ներկայացնել Միջագետքի հնագույն բնակիչներին
- բացատրել քաղաք-պետությունների միավորման անհրաժեշտությունը մեկ միասնական պետության մեջ և դրանում Սարգոն Աքքադացու դերը
- համեմատական եզրեր գտնել Հին Եգիպտոսի և Հին Միջագետքի քաղաքակրթությունների միջև

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ «Ֆրոնտալ հարցում», ընդհատված դասախոսություն, խմբային աշխատանք, «Վենի դիագրամ»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝ դասագիրք, Հին Արևելքի քարտեզ, Միջագետքի քարտեզ, դասանյութին կից էլեկտրոնային տեղեկատվությունը, Ա4 թղթեր:

ԴԱՄԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ՝ նոր նյութի յուրացման դաս:

ԴԱՄԻ ԸՆԹԱՑՔԸ

Ստուգում ենք տնային առաջադրանքները, կարելի է քարտային աշխատանք նախապատրաստել Հին Եգիպտոսի վերաբերյալ և՛ ամփոփիչ, և՛ վերհիշող հարցեր (հարցերը կազմելիս հաշվի առնել այն հանգամանքը, որ դրանք պետք է օգնեն սովորողներին նոր դասի յուրացմանը զուգընթաց համեմատություններ տանել Միջագետքի հետ: Հարցերը ներկայացված են իմաստի ընկալման փուլում): Պատասխանները սովորողները կտան խմբերի բաժանվելուց հետո, ապա անցում կատարել նոր նյութի ուսուցմանը:

ԽԹԱՆՈՒՄ: Մի անգամ ճամփորդները Եգիպտոսից ուղևորվեցին դեպի հյուսիս-արևելք: Ավագուտներով անցնող ճանապարհը ի վերջո նրանց հասցրեց ջրառատ Եփրատ

գետին: Նայելով գետի հոսող ջրերին՝ զարմանքից բացականչեցին. «Չի կարող պատահել, ախր այս գետը հակառակ է հոսում»: Այստեղ ուսուցիչը հանձնարարում է ուսումնասիրել Հին Արևելքի քարտեզն ու պատասխանել տրված հարցին՝ ինչո՞ւ ճամփորդները այդպես մտածեցին (ուսումնասիրում են քարտեզը):



ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ:

Խմբերին հանձնարարել կարդալ դասի առաջին ենթավերնագիրը և պատասխանել տրված հարցերին.

1. Ո՞ր գետերն են ձևավորել Միջագետքը:
2. Որտեղի՞ց են սկիզբ առնում և որտեղ են թափվում:
3. Ինչպիսի՞ կլիմա ուներ Միջագետքը:
4. Ի՞նչն էր ծառայում որպես հիմնական շինանյութ:

Սահմանված ժամանակի ավարտից հետո խմբերին հանձնարարել ուսումնասիրել առանձին ենթավերնագրերը՝ Շումերի քաղաք-պետությունը, Աքքադի պետությունը, Շումերա-Աքքադական Ուրի թագավորությունը:

Սահմանված ժամանակի ավարտից հետո յուրաքանչյուր խումբ շատ կարճ ներկայացնի իր ուսումնասիրած քաղաք-պետությունը ըստ առաջադրված հարցերի.

ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ

1. Որտե՞ղ են գտնվում ձեր ուսումնասիրած քաղաք-պետությունները (նշեք մի քանիսը):
2. Ո՞րն էր տեղի բնակչության հիմնական զբաղմունքը:
3. Ո՞րն էր նրանց միջև հաճախակի կրկնվող պատերազմների պատճառը:

ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ

1. Որտե՞ղ է գտնվում ձեր ուսումնասիրած քաղաք-պետությունը:
2. Ո՞վ էր նրա ամենահայտնի արքան:
3. Ի՞նչ կարևոր քայլեր կատարեց նա երկրի ամրապնդման համար:

ԵՐՐՈՐԴ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ

1. Որտե՞ղ է գտնվում ձեր ուսումնասիրած քաղաք-պետությունը:
2. Ո՞վ էր նրա ամենահայտնի արքան:
3. Ինչպիսի՞ իշխանություն ուներ արքան:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ: Դասանյութի հիմնական մասը ներկայացնելուց հետո հանձնարարվում է լրացնել Վենի դիագրամը (հիշեցնելով, որ դասի սկզբում կրկնել էին «Հին Եգիպտոսը», այժմ փորձեն համեմատական գուգահեռներ անցկացնել ըստ տրված հարցերի):

1. Ո՞ր գետերի հովտում են առաջացել այս քաղաքակրթությունները:
2. Ինչպիսի՞ բնական պայմաններ ունեին:
3. Ոռոգման ինչպիսի՞ համակարգ էին օգտագործում:
4. Ի՞նչն էր ծառայում որպես շինանյութ:
5. Բնակչության կազմը (մոտեթնիկը թե խառը):
6. Քաղաք-պետությունների առկայությունը:
7. Միասնական պետության առաջացման ճանապարհին ի՞նչ քայլեր արվեցին:

ԱՆԴՐԱԴԱՐՁ: Առաջարկվում է շարունակել ուսուցչի սկսած նախադասությունը՝ «Այսօրվա դասից ինձ համար ամենահետաքրքիրը.....»:

Պարագրաֆ 9.

ԴԱՍԻ ՊԼԱՆ

ԴԱՍԱՆՅՈՒԹԸ՝ § 9. Հին Փոքր Ասիան և Արևելյան Միջերկրականը (45 բուպե)

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ Համակցված դաս:

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ՝

ԻՄԱՆԱ՝

- Փոքր Ասիա և Արևելյան Միջերկրական աշխարհագրական հասկացությունները
- Հին Արևելքի նշանավոր քաղաքակրթությունները, որ առաջացել են այստեղ, և ինչպես են կոչվում այժմ այդ երկրները (որ երկրների տարածքն են ընդգրկում՝ Ասորիք-Սիրիա, Փյունիկիա-Լիբանան...)
- Ի՞նչ ներդրում են ունեցել այդ քաղաքակրթությունները մարդկության հետագա պատմության մեջ

ԿԱՐՈՂԱՆԱ՝

- քարտեզի վրա ցույց տալ այդ քաղաքակրթությունները՝ նշելով դրանց ժամանակակից անվանումները
- Ներկայացնել այդ երկրների նշանավոր արքաներին ու նրանց գործերը

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊ՝ Աշխարհագրություն, Հայոց պատմություն, Եկեղեցու պատմություն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ մտազրոհ, դասախոսություն, խմբային աշխատանք, քարտային աշխատանք, ամփոփում մեկ նախադասությամբ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝ դասագիրք, Փոքր Ասիայի և Միջերկրածովյան արևելքի քարտեզներ, համակարգիչ կամ պրոյեկտոր (եթե դասախոսությունն ընթանալու է սահիկաշարի տարբերակով) կամ թեմային առնչվող նկարներ:

ԴԱՍԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ՝ համակցված դաս:

Քանի որ դասանյութը ծավալուն է և միաժամանակ մի քանի տարբեր երկրների ուսումնասիրությանն է վերաբերում, ուստի նախընտրելի է սահիկաշարի ցուցադրության (կամ համապատասխան նկարների) և դասախոսության միջոցով:

ԴԱՍԻ ԸՆԹԱՅՔԸ

ԽԹԱՆՈՒՄ: Մտազրոհի միջոցով վեր հանել սովորողների գիտելիքները Հայոց պատմությունից՝ որտեղ են հանդիպել «Խեթական թագավորություն» արտահայտությանը, իսկ Եգիպտոս թեման ուսումնասիրելիս, Աստվածաշնչյան պատմություններից ի՞նչ գիտեն Սողոմոն Իմաստունի մասին, գիտեն՞ արդյոք, թե որտեղ են գտնվում Սիրիան ու Լիբանանը, իսկ գիտեն՞ արդյոք, որ այդ երկրները հնում այլ անվանումներ են ունեցել:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Դասախոսության ընթացքում օգտագործել համապատասխան քարտեզներ (դասագիրք կամ QR 9.1) և նկարներ (կից տրված են նկարներ, որոնցից էլ կարելի է ստեղծել սահիկաշարք): Նյութը ներկայացնելիս շեշտադրում անել այն փաստի վրա, որ Խեթական թագավորության մասին տեղեկությունները, ի տարբերություն Միջերկրածովյան մյուս երկրների, շատ ավելի ուշ են բացահայտվել (ընդամենը նախորդ դարի կեսերին), և հենց այդ պատճառով էլ ուսումնասիրողները խեթերին կոչել են «մոռացված ժողովուրդ»: Անդրադարձնալ նաև Սողոմոն Իմաստունին, որ երկրից էր նա (հիշեցնել աստվածաշնչյան առակը նրա անվան հետ կապված՝ որպես դատավորի), ինչպես նաև մի քանի մանրամասներ աշխարհում առաջին հնչյունային գրի ստեղծման, փյունիկյան արավենուց դիմացկուն նավեր ստեղծելու... պետք չէ ներկայացնել ամենայն մանրամասնությամբ, այլ թողնել խմբային աշխատանքի ընթացքում կարդալով գտնեն և առանձնացնեն գլխավոր տեղեկությունը, որոնք պետք է կատարեն կշռադատման փուլում:

ՆԿԱՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ



АССИРИЙСКОЕ ЦАРСТВО

В X в до н.э. на территории Ассирии начали широко использовать железо

Воины были вооружены железными мечами, боевыми топорами, круглыми щитами, остроконечными шлемами, панцирями, луками

ПРИЧИНЫ ПОБЕД АССИРИИ

Использование железного оружия

Армия ассирийцев

Впервые стали широко использовать конницу

АССИРИЙСКОЕ ЦАРСТВО





Ассирийцы были воинственным народом. Они часто нападали на соседние земли. Ежегодно мощное ассирийское войско отправлялось покорять новые земли. Покорённые народы платили огромную дань правителю Ассирии.

ФИНИКИЯ И ПАЛЕСТИНА

К'	⊗	Չ	Ք
Տ	Ն	Կ	Տ
Լ	Կ	Փ	Ղ
Ը	Լ	Ղ	Ղ
Յ	Մ	Մ	Մ
Կ	Ղ	Ղ	Ղ
Ը	Տ	Տ	Տ
Ը	Օ		

Многие народы мира благодарны финикийцам за бесценный подарок - почти все существующие сегодня алфавиты имеют финикийское происхождение. В X в. до н.э. в Финикии был создан алфавит, состоявший из 22 согласных букв. Алфавит - письменность, созданная финикийцами.





Փյունիկյան առևտրանավ

Փյունիկյան ռազմանավ

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ: Այս փուլի համար օգտագործել նախապես պատրաստված քարտերը (4 կամ 5 փաթեթով՝ պայմանավորված խմբերի քանակով): Հանձնարարել դասագրքից օգտվելով խմբավորել տվյալ երկրին առնչվող քարտերը և ապա ներկայացնել ըստ տրված հարցերի հաջորդականության: Կից տրված է քարտերի տեղեկությունը, որը պետք է նախապես կտրատել և խառնել.

ԽՆԹԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	ՄԻՏԱՆՆԻ	ՓՅՈՒՆԻԿԻԱ	ՊԱՂԵՍՏԻՆ	Երկիր
Փոքր Ասիայի կենտրոնական և հարավ-արևելյան մասում	Միջերկրական ծովի արևելյան ափ	Միջերկրական ծովի արևելյան ափ	Միջերկրական ծովի արևելյան ափ	Որտե՞ղ
Խաթուսաս	Վաշուկանի	Բիբլոս, Սիդոն Տյուրոս Կարթագեն**	Երուսաղեմ	Գլխավոր քաղաք / գաղութ
Լարբանա Մուրսիլիս I			Դավիթ Սողոմոն Իմաստուն	Նշանավոր արքաներ
Բաբելոնի գրավում Բ.ձ.ա.1595թ. Արշավաք Հայաստանի դեմ*	Եգիպտոսի հետ			Նվաճումներ / պատերազմներ
Ք.ձ.ա. XVIII-XIII դդ.	Ք.ձ.ա. XVI-XIV դդ.	Ք.ձ.ա. II հզ.	Ք.ձ.ա. XIII դ. վերջ	Ժամանակաշրջան
Հնուտ առևտրականներ,	Զիաբուծություն	Աշխարհում առաջին այբուբենի	Միաստվածության	Ինչո՞վ էին

շինարարներ		ստեղծում, Լավագույն նավա- շինարարներ**	առաջացում	հայտնի
------------	--	--	-----------	--------

* Ղասանյություն այս մասին չկա, տեղեկությունը հայտնել դասախոսության ժամանակ՝ հղում կատարելով QR 9.1 տեքստին:

** QR 9.2

ԱՆԴՐԱԴԱՐՁ: Ամփոփում մեկ նախադասությամբ. սաներին առաջարկել մտածել և ներկայացնել մեկ միտք՝ «Այս դասին ինձ համար ամենահետաքրքիր նորությունը...»:

Պարագրաֆ 11.

ԴԱՄԻ ՊԼԱՆ

ԴԱՍԱՆՅՈՒԹԸ՝ § 11 Հին Հնդկաստանը և Չինաստանը (45 բույե)

ԴԱՄԻ ՏԻՊԸ՝ Նոր նյութի յուրացման դաս:

ԴԱՄԻ ՆՊԱՏԱԿԸ՝

ԻՄԱՆԱ՝

- Ինչպես են զարգացել Հին Հնդկաստանն ու Չինաստանը
- Ինչպիսի բնակլիմայական պայմաններ են նպաստել այստեղ քաղաքակրթության առաջացման համար
- Ինչպիսի հայտնագործություններ են արել հին հնդիկներն ու չինացիները
- Ինչպիսի ժառանգություն են թողել հետագա սերունդներին
- Նոր հասկացությունների և տերմինների բացատրությունները

ԿԱՐՈՂԱՆԱ՝

- Քարտեզի վրա ցույց տալ Հին Հնդկաստանն ու Չինաստանը
- Անվանել և ցույց տալ այն գետերը, որոնց շուրջը ձևավորվել են հնագույն այդ քաղաքակրթությունները
- Համեմատել հնագույն այդ երկու քաղաքակրթությունները

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: Մտագրոհ, «շրջագայություն պատկերասրահում», «սինկվեյն կամ հնգատող»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ: Դասագիրք, քարտեզ, թեմային համապատասխան նկարներ, հնարավորության դեպքում նաև էլեկտրոնային տարբերակով (Բուդդայի, Կոնֆուցիոսի, հնդկական և չինական տաճարների, հիերոգլիֆներ, մետաքս, հախճապակի, անգամ 1-9 թվերը...), նշագրիչներ, գունավոր ֆլումաստերներ, ԱՅ պաստառներ:

ԴԱՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Կարողությունների և հմտությունների ցուցադրման դաս, կզարգացնեն համագործակցային հմտությունները, տեքստի հետ աշխատելու հմտությունները:

ԴԱՄԻ ԸՆԹԱՑՔԸ

ԽԹԱՆՈՒՄ: Նկարներով կամ էլեկտրոնային որևէ տարբերակով ցուցադրել նկարներ (տե՛ս ուսումնական նյութերի մեջ) և մտագրոհով պարզել՝ տեղյա՞կ են արդյոք, թե որտեղ են դրանք ստեղծվել կամ հորինվել, ովքեր են Բուդդան, Կոնֆուցիոսը, ի՞նչ գիտեն նրանց մասին: Պատասխանները լսելուց հետո ներկայացնել մի քանի հայտնի և իմաստուն խոսքեր՝ ցույց տալով դրանք համեմատության մեջ (կարելի է զուգահեռներ անցկացնել քրիստոնեության հետ), ինչպես օրինակ՝

Կոնֆուցիոս	Բուդդա (Միթհարտա Գուտամա Շակիա Մունի Տատխագարդա)
Մի՛ գրկիր ուրիշին կյանքից	Մի՛ վարվիր ուրիշների հետ այնպես, ինչպես չես ցանկանա, որ քեզ հետ վարվեն
Մուտ մի՛ խոսիր	Միսալ է միայն այն, ինչը հնարավոր չէ ուղղել
Մի՛ վերցրու այն, ինչը քոնը չէ	Չկան բառեր առանց հետևանքի, չկա բարություն առանց երախտիքի

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Դասարանը բաժանել 5 խմբի՝ տրամադրելով մեկական Ա3 պաստառ և հանձնարարել ուսումնասիրել դասանյութի մեկ ենթաբաժինն ու պատկերավոր արտահայտել թղթի վրա (կարելի է նաև գծապատկեր տարբերակը):

I ԽՈՒՄԲ

Ուսումնասիրեք հնդկական քաղաքակրթության սկզբնավորումը, օգտվեք նաև QR 11.1 հավելյալ նյութից և փորձեք պատկերել պաստառի վրա:

II ԽՈՒՄԲ

Ուսումնասիրեք Հին Հնդկաստանի Մաուրյան կայսրությունը, օգտվեք նաև QR-11.2-ից և պատկերավոր արտահայտեք թղթի վրա (կարելի է նաև գծապատկեր տարբերակը):

III ԽՈՒՄԲ

Ուսումնասիրեք Չինական քաղաքակրթության սկզբնավորումը և պատկերավոր արտահայտեք թղթի վրա (կարելի է նաև գծապատկեր տարբերակը):


IV ԽՈՒՄԲ

Ուսումնասիրեք «Համաչինական Ցին կայսրությունը» բաժինը, օգտվեք նաև QR-11.3 և 11.4-ից և փորձեք պատկերավոր արտահայտել թղթի վրա (կարելի է նաև գծապատկեր տարբերակը):

V ԽՈՒՄԲ

Ուսումնասիրեք Հին Հնդկաստանի և Չինաստանի քաղաքակրթությունների ազդեցությունը ենթաբաժինը և կազմեք համեմատական աղյուսակ (QR-11.5; 11.6):

Խմբերի անդամների թիվը կարող է լինել 4 կամ 5 հոգի՝ պայմանավորված դասարանում սովորողների թվով և նյութի ծավալով: Այդ դեպքում նյութի բաշխումը պետք է վերանայել: Պատրաստի աշխատանքները փակցվում են պատերին՝ ստեղծելով պատկերասրահ: Խմբերի ներսում աշակերտները հաշվում են մինչև 5-ը, կազմում 5 նոր խումբ՝ ըստ իրենց համարների: Աշակերտներից յուրաքանչյուրը պետք է կարողանա տեսնել իր խմբի բոլոր անդամներին, ինչպես արված է ներքևի նկարում: Այս նոր խմբերը շրջում են պատկերասրահում՝ կանգ առնելով յուրաքանչյուր ցուցանմուշի մոտ, և տվյալ խմբի այն անդամը, որը մասնակցել է այդ ցուցանմուշի ստեղծմանը, մանրամասնորեն ներկայացնում է աշխատանքը, պատասխանում հարցերին և մասնակիցների առաջարկությունների համաձայն՝ կատարում լրացումներ կամ ուղղումներ:



Շրջագայությունն ավարտվում է, երբ բոլոր խմբերը ծանոթանում են բոլոր աշխատանքներին: Մրանից հետո բոլոր հիմնական խմբերն իրենց աշխատանքները նորից քննության են ենթարկում՝ այս անգամ արդեն համեմատելով մյուս աշխատանքների հետ և վերլուծելով առաջացած հարցերը:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ: «Sinqwein կամ հնգատող»: Սովորողները վերադառնում են իրենց հիմնական խմբերը և հանձնարարվում է կազմել հնգատողը հետևյալ հաջորդականությամբ.

- 1-ին տող՝ 1 գոյական (օրվա սովորածներից),
- 2-րդ տող՝ 2 հատկանիշ ցույց տվող բառ,
- 3-րդ տող՝ 3 գործողություն ցույց տվող բառ,
- 4-րդ տող՝ 4-բառանոց արտահայտություն, որը կընդգծի նախորդ երկու տողերը,
- 5-րդ տող՝ 1 հունանիշ առաջին բառին կամ որպես համապատասխան արդյունք :

ԱՆԴՐԱԴԱՐՁ: Սովորողներին առաջարկել ասել այն ամենահետաքրքիր նոր հասկացությունը կամ անունը, որ սովորեցին այսօր:

Որպես յուրացում հանձնարարել կազմել խաչբառ, որի հարցերը կվերաբերեն ամբողջ անցած դասերին՝ առանցքում բանալի բառ ունենալով «ՊԵՏՈՒԹՅՈՒՆ»-ը:

Պարագրաֆ 18.

ԴԱՍԻ ՊԼԱՆ

ԴԱՍԱՆՅՈՒԹԸ՝ § 18. Դասական դարաշրջանի Հունաստանի հասարակական կյանքը

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 1 դասաժամ (45 րոպե)

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ Դաս-խաղ՝ սովորում ենք հարց ձևակերպել

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ՝

ԻՄԱՆԱ՝

- «Դասական դարաշրջան» արտահայտության բացատրությունը,
- Ինչպիսի՞ն էր հույների հասարակական կյանքը «դասական դարաշրջանում»,
- Ի՞նչ հասկացություններ են փոխանցվել մեզ «դասական դարաշրջանից»:

ԿԱՐՈՂԱՆԱ՝

- Ճիշտ հարցադրումներ անել,
- Հստակ ձևակերպել հարցադրման պատասխանը և ներկայացնել լսարանին:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: Մտագրոհ, «Բլումի երիցուկ»:


ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ: Դասագիրք, դասանյութին կից էլեկտրոնային տեղեկատվություն, «Բլումի երիցուկի» համար 6 գունավոր թերթիկ, կպչուն թերթիկներ, սկոտչ կամ մագնիսներ:

ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Դաս-խաղ-հարցազրույց, հարցեր կազմելու հմտության զարգացում, հաղորդակցական հմտությունների զարգացման դաս, քննադատական միտքը զարգացնող դաս:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

ԽԹԱՆՈՒՄ: Մտագրոհի միջոցով հարցնել սովորողներին՝ ինչպե՞ս են հասկանում «Ճանաչի՛ր ինքդ քեզ» կամ «Ամեն բան չափի մեջ է գեղեցիկ» հունական ասացվածքները:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: ա) Գրատախտակին փակցվում է «Բլումի երիցուկը», որի կենտրոնում գրվում է ուսումնասիրվող թեման, այս դեպքում՝ «Հասարակական կյանքը Հին Հունաստանում»:



Այս նկարում ներկայացված ծաղկի վեց թերթիկները ենթադրում են վեց տարբեր բնույթի հարցեր, այսպես՝

Փաստացի հարցեր: Ակնկալում են կոնկրետ փաստերով պատասխաններ:

Ճշտող հարցեր: Սովորաբար սկսվում են հետևյալ բառերով. «Այսինքն, ուզում ես ասել, որ...», «Ես ճիշտ հասկացա, որ...»: Այսպիսի հարցերը նպատակ ունեն ճշտելու այն փաստերը, որոնք այս կամ այն պատճառով չէին բարձրաձայնվել:

Բացատրություն պահանջող հարցեր: Սովորաբար սկսվում են «Ինչո՞ւ» հարցով: Որոշ դեպքերում (վերևում եղավ մասնակի անդրադարձ) դրանք կարող են ընկալվել բացասաբար՝ որպես արդարացման պարտադրանք, այդ դեպքում դրանք ուղղված են պատճառահետևանքային կապի բացահայտմանը, օրինակ՝ «Ինչո՞ւ էր Տիգրան Մեծը խուսափում բաց դաշտում ճակատամարտ տալուց», կամ՝ «Ինչո՞ւ են տերևները դեղնում աշնանը» (հարց բնագիտությունից): Եթե այսպիսի հարցի պատասխանը հայտնի է, ապա այն պարզաբանում պահանջող հարցից «վերածվում է» փակ հարցի: Հետևաբար այսպիսի հարցն «աշխատում է» այն ժամանակ, երբ պարունակում է սովորողի ինքնուրույնության տարր:

Ստեղծարար հարց (կամ կանխատեսող հարց): Սովորաբար սկսվում է՝ «Ի՞նչ կլիներ (կամ կպատահեր), եթե...» բառերով: Օրինակ՝ «Ի՞նչ կլիներ, եթե Տիգրան Մեծը որպես պատանդ Միհրդատ VI-ին հանձներ Հռոմին», կամ՝ «Ի՞նչ կլինի երկրագնդի հետ, եթե բոլոր սառցադաշտերը հալվեն»...

Արժևորող հարցեր: Մրանք անհրաժեշտ են որևէ իրադարձության կարևորությունը բացահայտելու համար, օրինակ՝ «Ինչո՞ւ է կարևորվում կոնֆլիկտային հարցերը բանակցային ճանապարհով լուծելը», կամ՝ «Ինչո՞ւ է օտար լեզուների իմացությունը այսօր կարևորվում»: Օգտագործե՛ք նաև այն ժամանակ, երբ կնկատեք, որ սովորողներից որևէ մեկը ընկերոջը անհամաձայնություն կամ գոհունակություն կհայտնի դասարանում ընթացող գործընթացի վերաբերյալ:

Գործնական հարցեր: Սրանք նպատակ ունեն միմյանց կապելու տեսականն ու գործնականը («Ինչպե՞ս կվարվեիք դուք...», «Ինչպե՞ս կարող եմք...», օրինակ՝ «Ինչպե՞ս կարելի է վերացնել Սառը պատերազմի հետևանքները», կամ՝ «Ինչպե՞ս ցանել սերմերը» (հարց բնագիտությունից):

Ներկայացված հնարը համապատասխանում է Բլումի աստիճանակարգի առանցքային պահանջներին.

Վերարտադրում	Փակ հարցեր	Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ, ո՞վ, ինչպե՞ս
Գիտակցում	Ճշտող հարցեր	Արդյո՞ք ճիշտ հասկացա, որ
Կիրառում	Գործնական հարցեր	Ինչպե՞ս կարելի է կիրառել... Ի՞նչ կարելի է անել.....ից
Վերլուծում	Բացատրություն պահանջող հարցեր	Ինչո՞ւ
Համադրում	Ստեղծագործական հարցեր	Ի՞նչ կլինի (կլիներ), եթե...
Գնահատում	Արժևորող հարցեր	Ինչպե՞ս եք վերաբերվում...

բ) Դասարանը բաժանվում է 6 խմբի՝ ծաղկի թերթիկների թվին համապատասխան, որտեղ յուրաքանչյուր անդամ ստանձնում է կոնկրետ դեր՝ նյութը կարդացող, ժամապահ, հարցերը գրանցող, դեսպան, որն էլ կներկայացնի իր խմբի շահերը քննարկումների ժամանակ: Ի դեպ, դերերը կարող են հորինվել ըստ պահանջի և խմբում ներառված անդամների թվի:

գ) Խմբերից յուրաքանչյուրին տրվում է Բլումի հարցերից որևէ մեկը և հանձնարարվում է կարդալ նյութն ու կազմել հարցեր կոնկրետ իրենց բաժնի վերաբերյալ, հարցերը կարող են շատ լինել, սակայն իրենց ընտրությամբ պետք է առանձնացվի միայն մեկը՝ ամենահաջողվածը (15 րոպե):

դ) Ընտրած հարցը գրի են առնում կաշուն թերթիկի վրա, և խմբի «դեսպանը» բարձրաձայն կարդալուց հետո այն փակցնում է գրատախտակին՝ երիցուկի համապատասխան թերթիկի վրա:

ե) Եթե չեն համաձայնում հնչեցրած պատասխանին, ներկայացնում են իրենց պատրաստած պատասխանը: Հաջորդաբար հնչում են բոլոր վեց հարցերն ու դրանց պատասխանները:

Այս դասի մեջ, քանի որ ենթաբաժինները մի քանի ուղղվածություն ունեն, ուստի կարելի է առաջարկել, որ յուրաքանչյուր բաժնի համար կազմեն մեկական հարց, և ոչ թե ամբողջ դասից մեկ հարց՝ ըստ իրենց Բլումի հարցաթերթիկի պահանջի, այսինքն՝ ամեն թերթիկ բաղկացած կլինի 4-ական հարցից (4 ենթավերնագրերից):

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ : Այս փուլում ուսուցիչը իր դիտարկումներով ամփոփում է սաների ներկայացրած հարցադրումներն ու հնչեցրած պատասխանները, եթե եղել են այնպիսի տերմիններ կամ հասկացություններ, որոնք երեխաների ուշադրությունից դուրս են մնացել, բացատրվում են և գովաբանվում ճիշտ ձևակերպված հարցադրումների համար:

ԱՆԴՐԱԴԱՐՁ: Ձևակերպված հարցերը կհեշտացնեն ուսուցչի գործը՝ թեմայի ավարտից հետո ամփոփիչ թեստ կազմելու համար: Այսինքն՝ ամեն դասի վերջում հանձնարարեք աշակերտներին տանը կազմել երեքական հարց՝ իրենց պատասխաններով (ա, բ, գ), հավաքեք դրանք, ընտրեք հաջողվածները, հղկե՛ք, և դուք կունենաք պատրաստի թեստ առաջիկա թեմատիկ աշխատանքի համար:

Պարագրաֆ 19.

ԴԱՄԻ ՊԼԱՆ

ԴԱՍԱՆՅՈՒԹԸ՝ § 19. Դասական դարաշրջանի հունական մշակույթի ազդեցությունը

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 1 դասաժամ (45 րոպե)

ԴԱՄԻ ՏԻՊԸ՝ Նոր նյութի յուրացման և նախնական գիտելիքների ամրապնդման դաս:

ԴԱՄԻ ՆՊԱՏԱԿԸ՝

ԻՄԱՆԱ՝

- Ինչ առանձնահատկություններ է ունեցել դասական հունական մշակույթը:
- Համաշխարհային մշակույթի վրա ի՞նչ ազդեցություն է ունեցել անտիկ շրջանի մշակույթը:
- Ի՞նչ վկայություններ կան այսօր հունական մշակույթի մասին փաստող:

ԿԱՐՈՂԱՆԱ՝

- Բացատրել նոր հասկացությունները (օլիմպիական աստվածներ, արգոնավորդներ, ակադեմիա, լիկեոն, թատրոն, ճեմարան, փիլիսոփայություն...):
- Զուգահեռներ/ընդհանրություններ գտնել հունական և հայկական մշակույթների միջև:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: Մտագրոհ, «դերային խաղ»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ: Դասագիրք, Հին Հունաստանի քարտեզ, դասանյութին կից էլեկտրոնային տեղեկատվություն, ԱՅ պաստառներ, թեմատիկ նկարներ:

ԴԱՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Նոր նյութի յուրացման դաս, սոցիալական կարողությունների և հաղորդակցական հմտությունների զարգացման դաս, գեղագիտական ճաշակի զարգացմանը նպաստող դաս:

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱՅԱԿԱՆ ԿԱՊԸ: Հայոց պատմություն, Աշխարհագրություն, Արվեստ:

ԴԱՄԻ ԸՆԹԱՑՔԸ

ԽԹԱՆՈՒՄ: Մտագրոհի միջոցով վեր հանել սովորողների գիտելիքները մշակույթի վերաբերյալ, հետաքրքրություն առաջացնել նոր նյութի շուրջ. ի՞նչ է մշակույթը, ինչո՞ւ են 4 տարին մեկ անգամ անցկացվող սպորտային խաղերը կոչվում օլիմպիական, գիտե՞ք արդյոք, թե որտեղից են ծագել անզլերեն սքուլ կամ շկոլա բառերը, ի՞նչ է փիլիսոփայությունը...

Շատ ավելի լավ կլիներ, եթե նախորդ դասին դասարանը բաժանված լիներ խմբերի և ծանուցված լինեին, թե ինչ պարագաներ կարող էին իրենց հետ բերել (օրինակ՝ թղթից պատրաստել աստվածների բնորոշող խորհրդանշական իրերը՝ եռաժանի, կայծակ, բերել ուրախ և տխուր դիմակներ...) կամ էլ այդ ամենը նախապատրաստի ուսուցիչը և տա դասի ժամանակ:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Դասարանը բաժանել 5 խմբի, տրամադրել նյութերը՝ տեքստը և նկարները (հնարավորության դեպքում՝ առարկայական խաղալիք տարբերակով, իսկ տեքստերը շատ համառոտ պատրաստել նախապես), և հանձնարարել ուսումնասիրել մշակույթի մեկ ենթաբաժին ու ներկայացնել դերային խաղով (կարելի է նաև օգտագործել Ա3 պաստառը, եթե կարիք լինի ինչ-որ բան նկարելու կամ պատկերելու):

I ԽՈՒՄԲ՝

Ուսումնասիրեք «Հին հունական կրոնը» ենթաբաժինը, օգտվեք նաև QR 19.1 հավելյալ նյութից և փորձեք թատերականացված ներկայացնել հունական դիցաբանության գլխավոր աստվածներից (կախված խմբում առկա սաների թվից, կարող են ներկայացնել 2-ական աստվածների. Ջևս, Հերա, Պոսեյդոն Ապոլոն, Աֆրոդիտե, Աթենաս) մի քանիսին՝ իրենց համապատասխան խորհրդանիշով, խոսքի մեջ կարևոր է ներկայացնել՝

- ա) տվյալ աստծուն ըստ իր գործառույթի,
 - բ) որն է նրան բնորոշ առարկան,
 - գ) ինչ է նա տվել մարդկությանը:
- Օրինակ՝



Ջևս



Հերա



Պոսեյդոն

II ԽՈՒՄԲ՝


Ուսումնասիրեք «Հին հունական առասպելները» ենթաբաժինը, օգտվեք նաև QR 19.2 հավելյալ նյութից և փորձեք թատերականացված ներկայացնել հունական արգոնավորողների մասին առասպելը (հիշենք նաև կապը հայոց պատմության հետ՝ «Ավանդազրույցներ հայ ժողովրդի ծագման մասին» դասը)



Ոսկե գեղմ



Կովկաս



Հերոդոտոս

III ԽՈՒՄԲ

Ուսումնասիրեք «Հին հունական գիտությունը» ենթաբաժինը, օգտվեք նաև ուսուցչի պատրաստած հավելյալ նյութից և փորձեք թատերականացված ներկայացնել հույն այս իմաստուններին առաջին դեմքով՝ ներկայացնելով նրանց անվան հետ կապված ամենահայտնի որևէ արտահայտություն, օրինակ՝ Սոկրատես. «Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ», Արիստոտել. «Պլատոնն իմ բարեկամն է, բայց ճշմարտությունն ավելի թանկ է», Պլատոն. «Երջանիկ են այն թագավորությունները, որտեղ իմաստասերները արքաներ են, իսկ արքաները՝ իմաստասեր»:


Կարելի է այդ ամենը պատկերել պաստառի վրա և հետո ներկայացնել:



Արիստոտել




Պլատոնի ակադեմիան



Սոկրատես

IV ԽՈՒՄԲ

Ուսումնասիրեք «Հին հունական գրականությունը և թատրոնը» ենթաբաժինը, օգտվեք նաև QR 19.3 հավելյալ նյութից և փորձեք թատերականացված ներկայացնել հունական թատրոնը՝ հանդես գալով որպես տրագեդիա կամ կոմեդիա ներկայացնող դերասան, և կամ հեղինակ, որը կպատմի նաև թատրոնի մասին (հիշենք նաև հայոց Արտավազդ 2-րդ արքային, որը գրել էր պիեսներ հունարեն):



Հումերոս



կոմեդիա



տրագեդիա

V ԽՈՒՄԲ

Ուսումնասիրեք «Հին հունական արվեստը» ենթաբաժինը, օգտվեք նաև QR 19.4 և 19.5 հավելյալ նյութից և փորձեք թատերականացված ներկայացնել հունական արվեստը՝ հիշատակելով Ֆիդիասին, ուղղորդել, որ կապեն կրոնը ներկայացնող խմբի նյութին:



Աթենասի արձանը



Ֆիդիաս



Ջևսի արձանը Օլիմպոսում

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ : Խթանման փուլում տրված հարցերը նորից հնչեցնել, այս անգամ պահանջելով պատասխանները տալ ըստ օրվա սովորածի:

ԱՆԴԱԴԱՄՈՒՄ: Քանի որ դասը ընթացավ դերային խաղով, ապա առաջարկել սովորողներին քվեարկել դերասանների վարպետությունը՝ ըստ ներկայացրած գիտելիքի մատչելիության և ստացած տպավորության: Քանի որ խմբերը 5-ն էին, ուստի կարելի է կամ հինգ գույնի գունավոր կաշուն թղթեր նախապատրաստել, համարակալել 1-5-ը և այդպես նույն գույնի թերթիկները փակցնել գրատախտակին, ապա հաշվելով որոշել լավագույն խմբին: Թղթերի փոխարեն կարելի է օգտագործել գունավոր մոզաիկայի քարեր:

Որպես յուրացում հանձնարարել կազմել խաչքառ, որի հարցերը կվերաբերեն դասի մեջ հանդիպած տերմիններին:

Պարագրաֆ 28.

ԴԱՄԻ ՊԼԱՆ

ԴԱՍԱՆՅՈՒԹԸ՝ § 28. Կայսրության հաստատումը Հռոմում

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 1 դասաժամ (45 րոպե):

ԴԱՄԻ ՏԻՊԸ՝ Համակցված դաս:

ԴԱՄԻ ՆՊԱՏԱԿԸ՝

ԻՄԱՆԱ՝

- Ինչ փոփոխությունների և հետևանքների կարող է հանգեցնել իշխանության համար պայքարը երկրի ներսում:
- Ինչպիսին էր ներքաղաքական իրադրությունը Հռոմում:
- Ինչպիսին էր Հռոմի արտաքին քաղաքականությունը, մասնավորապես Հայաստանի նկատմամբ:

ԿԱՐՈՂԱՆԱ՝

- Բացատրել պրինցիպատ, կայսր (միանձնյա կառավարում), քողարկված միապետություն հասկացությունները:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: Մտազրոհ, «Փոխներգործուն գրառումների համակարգ», աշխատանք զույգերով:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ: Դասագիրք, դասանյութին կից էլեկտրոնային տեղեկատվություն:

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԸ: Հայոց պատմություն:

ԴԱՄԻ ԸՆԹԱՑՔԸ

ԽԹԱՆՈՒՄ: Դասանյութում օգտագործված մի քանի բանալի բառերը գրել գրատախտակին կամ բանավոր հնչեցնել, և մտազրոհի միջոցով սովորողների մեջ հետաքրքրություն առաջացնել՝ կանխագուշակելու, թե ինչի մասին է լինելու այսօրվա թեման: Դրանք կարող են լինել արդեն իսկ նախորդ դասերից ծանոթ «եռապետություն, կայսրություն, հանրապետություն, միանձնյա կառավարում, հայ-հռոմեական պայմանագիր» բառերն ու արտահայտությունները:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Քանի որ «Հայոց պատմությունից» արդեն իսկ ծանոթ են Արտաշեսյան արքայատոհմի արքաների՝ Հռոմի հետ ունեցած հարաբերություններին, ուստի այս փուլում կարող են աշխատել անհատական, ապա անհասկանալի կամ անծանոթ հատվածները քննարկել զույգի հետ և ի վերջո ամփոփել քննարկումը ուսուցչի հետ: Դրա համար հանձնարարել ինքնուրույն կարդալ դասանյութը՝ օգտագործելով փոխներգործուն նշանների համակարգը («+» նշանով սովորողները հաստատում են իրենց նախնական գիտելիքները, «-» նշանով՝ այն հատվածները, որոնք պարունակում

են իրենց անձանոթ տեղեկություն): Տեքստի բովանդակությանը ծանոթանալուց հետո կողքին նստածի հետ քննարկում են այն հատվածները, որոնք հաստատում են իրենց իմացածը, ապա այն հատվածները, որոնք նոր սովորեցին: Անհասկանալի և բացատրության կարիք ունեցող հատվածները քննարկվում են ուսուցչի հետ, որն էլ կարող է դա անել հարցը փոխանցելով մյուս մասնակիցներին, որոնք ընկալել են տվյալ հատվածի իմաստը և կարող են այն բացատրել:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ: Հարցերի միջոցով ուսուցիչն ամփոփում է դասանյութը, հատկապես կարևորվում է կապը հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանի իրադարձությունների հետ:

ԱՆԴՐԱԴԱՐՁ: Սովորողներին հանձնարարվում է մեկ նախադասությամբ ներկայացնել իրենց համար ամենադժվար հասկացությունը կամ միտքը: Դա հնարավորություն կտա հաջորդ դասին կրկին անդրադառնալու այդ խնդիրներին, վստահ լինելու, որ տվյալ դասանյութի բովանդակությունը ճիշտ է ընկալվել:

Պարագրաֆ 31.

ԴԱՄԻ ՊԼԱՆ

ԴԱՍԱՆՅՈՒԹԸ՝ § 31. Հռոմեական քաղաքակրթության ազդեցությունը
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 1 դասաժամ (45 րոպե)

ԴԱՄԻ ՏԻՊԸ՝ Համակցված դաս

ԴԱՄԻ ՆՊԱՏԱԿԸ՝

ԻՄԱՆԱ՝

- Այսօր մեր բառապաշարում օգտագործվող մի շարք բառերի պատմական ծագումն ու բացատրությունը:
- Ինչպիսի՞ քաղաք էր Հռոմը քաղաքաշինական և մշակութային առումներով:
- Ի՞նչ մշակութային արժեքներ է ժառանգել քաղաքակիրթ աշխարհը հին Հռոմից:

ԿԱՐՈՂԱՆԱ՝

- Արժևորել մշակութային արժեքների պահպանումն ու փոխանցումը սերունդներին

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: Դերային խաղ, աշխատանք խմբերով՝ պաստառի ստեղծում, գունավոր մատիտներ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ: Քարտեզ, դասագիրք, դասանյութին կից էլեկտրոնային տեղեկատվություն QR 31.1-31.3, Հայոց պատմության դասագիրք:

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԸ: Հայոց պատմություն (Արտավազդ II-ի գերեվարությունը Ալեքսանդրիա, Տրդատ I Արշակունու հանդիսավոր թագադրումը Ներոնի կողմից):

ԽԹԱՆՈՒՄ: Այս փուլի համար կարելի է երկու տղաների առաջարկել բեմականացնել 2-3-րդ-պեանոց բանավեճ, որի թեման կլինի մեկի անհիմն մեղադրելը ընկերոջը, իսկ մյուսինը՝ փորձել պաշտպանվել և արդարանալ (որպեսզի ներկայացումն իր նպատակին ծառայի, երեխաներին առանձին զգուշացնել, որ օգտագործեն այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ ապացուցիր փաստերով, ինչ հանգամանքներ ստիպեցին քեզ չմիջամտել կովին, ինչ արդարացում ունես): Ժամանակը խնայելու համար լավ կլինի այս հանձնարարությունը տալ այդ երկու կամ երեք երեխաներին նախորդ դասին, որ իրենք կազմեն երկխոսությունը և անպայման օգտագործեն ընդգծված բառերը: Երկխոսությունից հետո ուսուցիչը հարցը կուղղի մյուսներին՝ արդյոք գիտե՞նք, թե որտեղից են առաջացել օգտագործված բառերը՝ փաստ-Ֆակտ, ալիբի- անհերքելի ապացույց, կազու-դեպք, հանգամանք, իսկ ինչ լեզվով եմ հիմա ես արտասանում այս բառերը, օր.՝ «o tempora o mores» (օ՛ ժամանակներ, օ՛ բարքեր), կամ «veni vidi vici» (Եկա՛, տեսա՛, հաղթեցի՛), կամ «Si vis pacem, para bellum» (Խաղաղություն ես ուզում, պատրա՛ստ եղիր պատերազմի):

Մրա իմաստն այն է, որ սովորողներն իմանան, որ խոսքը լատիներենի՝ որպես մեռած լեզվի մասին է, որը մեր օրերում օգտագործվում է բժշկական, իրավագիտական և այլ

ուղորտներում տերմինների տեսքով: Վատիկանի համար այն պետական լեզու է, սակայն որպես հաղորդակցական լեզու չի գործածվում: Իհարկե, համառոտ պետք է բացատրել նաև, թե ինչու է լեզուն համարվում մեռած, և ինչ դեր են խաղացել հմուտ դիվանագետները Հռոմի և հարևանների հետ մի քանի կողմից հարաբերություններ կառուցելիս, հատկապես երբ Հռոմի վրա կախված է եղել պատերազմի սպառնալիքը: Խթանման այս ընթացքում արդեն իսկ սովորողները ծանոթացան դասանյութի առաջին երեք ենթավերնագրերին (Լատիներեն, Իրավագիտություն և դիվանագիտություն), իսկ այլ մանրամասների կծանոթանան դասը սովորելիս՝ որպես յուրացում:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Խմբային աշխատանքի համար դասարանը բաժանել 3 խմբի:

I ԽՈՒՄԲ՝ նկարիչներ

Ուսումնասիրել « Քաղաքաշինությունը և քաղաքային կենցաղը» ենթավերնագիրն ու պաստառի վրա փորձել քաղաք գծագրել ըստ դասագրքում նկարագրվածի, որն էլ կհամապատասխանի «Բոլոր ճանապարհները տանում են Հռոմ» հայտնի արտահայտությանը:

II ԽՈՒՄԲ՝ դերասաններ

Հանձնարարել ուսումնասիրել «Հանդիսությունները» ենթավերնագիրը և Հայոց պատմության դասագրքից՝ Տրդատ I Արշակունու թագադրման հետ կապված իրադարձությունները, և պատմական այդ իրադարձությունը ներկայացնել թատերականացված տարբերակով:

III ԽՈՒՄԲ՝ բառագետներ

Հանձնարարել ծանոթանալ ամբողջ դասանյութին և պաստառի վրա աղյուսակի տեսքով առանձնացնել բոլոր նոր տերմինները և դրանց բացատրությունները:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ: Հարցերի միջոցով ուսուցիչն ամփոփում է դասանյութը, ուշադրություն հրավիրում արված խմբագրումների վրա, շեշտադրում առանցքային հատվածները:

ԱՆԴՐԱԴԱՐՁ: Սովորողներին հանձնարարել 1 րոպեի ընթացքում հիշողությամբ գրել այսօրվա դասից սովորած նոր հասկացությունները, ապա առաջարկել, որ կարդա այն աշակերտը, որը քանակապես ամենաշատն է հիշել: Մյուսները ուշադիր հետևում են և վերջում ավելացնում են այն բառերը, որոնք չեն հնչել:

Պարագրաֆ 38.

ԴԱՄԻ ՊԼԱՆ

ԴԱՍԱՆՅՈՒԹԸ՝ § 38. Եվրոպայի ավատատիրական հասարակարգը

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 1 դասաժամ (45 րոպե)

ԴԱՄԻ ՏԻՊԸ՝ Նոր գիտելիքի ստացման դաս

ԴԱՄԻ ՆՊԱՏԱԿԸ՝

ԻՄԱՆԱ՝

- Միջնադարյան Եվրոպայում նոր կարգի հաստատման պատճառները:
- Ի՞նչ է ավատատիրական աստիճանակարգությունը:
- Ի՞նչ պարտականություններ ունեին գյուղացիները:
- Ի՞նչ իրավունքներ ունեին ֆեոդալները:
- Ովքե՞ր էին ասպետները, ինչպիսի՞ն էր նրանց կենցաղը:

ԿԱՐՈՂԱՆԱ՝

- Բացատրել ստրկատիրականից ավատատիրական հասարակարգին անցնելու նախապայմանները:
- Բացատրել նոր հասկացությունները (ֆեոդալ, բնամթերային տնտեսություն, ճորտ գյուղացի, գիլդիա...):
- Բացատրել քաղաքների առաջացման և զարգացման նախադրյալները:
- Բացատրել համայնքի դերը միջնադարյան գյուղացու կյանքում:


ՈւՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: Մտազրոհ, աշխատանք խմբերով, շրջագայություն պատկերասրահում:

ՈւՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ: Դասագիրք, դասանյութին կից էլեկտրոնային տեղեկատվություն, QR 38.1-38.4, թեմատիկ նկարներ (ասպետական ամրոց, ֆեոդալական աստիճանակարգությունը, քարտեզներ՝ Հռոմի բաժանումը, Վերդենի բաժանումը):

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԸ: Հայոց պատմություն (ավատատիրական հասարակարգի ձևավորումը):

ԴԱՄԻ ԸՆԹԱՑՔԸ

ԽԹԱՆՈՒՄ: Այս փուլի համար շատ կարևոր է Հայոց պատմությունից արդեն իսկ ուսումնասիրված ավատատիրական համակարգի ձևավորման դասից մտազրոհի միջոցով վերհանել սովորողների գիտելիքները ժամանակաշրջանին բնորոշ գլխավոր հասկացությունների շուրջ՝ ի՞նչն էր միջնադարում հարստության չափանիշը, ի՞նչ է ավատը: Ապա ցույց տալ քարտեզները և առաջարկել վերնագրել դրանք: Օրինակ՝



Հռոմեական կայսրության բաժանումը, 395թ. Վերդենի բաժանումը, 843թ.


Ապա շատ համառոտ պատմական ակնարկով ներկայացնել Եվրոպայում նոր հասարակարգի ձևավորման կապը այս քարտեզների հետ:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Խմբային աշխատանքի համար դասարանը բաժանել 3 խմբի:


I ԽՈՒՄԲ: Ուսումնասիրում են ավատատերերի աստիճանակարգը և, օգտվելով տրված նկարներից, պաստառի վրա պատկերում են նրանց կենցաղը, աստիճանակարգությունը, վասալ-սենյոր կապը (QR 38.1): Ահա նկարների մի քանի հնարավոր օրինակներ.



Ասպետ



Աստիճանակարգությունը



Ամրոցի աշտարակը



Ամրոց




Վասալի երդումը սենյորին և մի բուռ հողի և ծառի ճյուղի սիմվոլիկ հանձնման տեսարանը



Ֆեոդալական պատերազմներ

II ԽՈՒՄԲ: Ուսումնասիրում են գյուղական կյանքը, ներկայացնում ճորտերի՝ որպես դասակարգի առաջացումը, գյուղական համայնքի դերի կարևորությունը, սոցիալ-տնտեսական իրավիճակը, նրանց կենցաղը, ապրուստի միջոցը (QR 38.2):

Նկարների հնարավոր օրինակներ.



Գյուղական համայնք



Գյուղացու խրճիթը



Ճորտ գյուղացի



Հողային բաժանում


III ԽՈՒՄԲ: Ուսումնասիրում են միջնադարյան Եվրոպայի քաղաքային կյանքը, նկարներից օգտվելով՝ ներկայացնում են քաղաքը որպես առևտրի և արհեստների կենտրոն, կապը գյուղի և քաղաքի միջև, արհեստը և առևտուրը որպես քաղաքի առաջացման նախադրյալ (QR 38.3-38.4):

Ահա նկարների և գծապատկերների մի քանի հնարավոր օրինակներ.




Քաղաքը՝ որպես առևտրի և արհեստների կենտրոն

Արհեստավորներ



Քաղաքային բնակչության կազմը



IV ԽՈՒՄԲ: Հետաքրքրասեր հանդիսատեսները ծանոթանում են ամբողջ դասանյութին և կազմում հնարավոր կարևոր հարցերը, որոնց պատասխանները ակնկալում են լսել ցուցադրության ժամանակ: Դրանց չլինելու կամ անհասկանալի լինելու դեպքում հարցեր կուղղեն խմբի անդամներին:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ: Հարցերի միջոցով ուսուցիչն ամփոփում է դասանյութը, ուշադրություն հրավիրում արված խմբագրումների վրա, շեշտադրում հասկացությունների բացատրությունները, նոր հասարակարգի ձևավորման օրինաչափությունը:

ԱՆԴՐԱԴԱՐՁ: Սովորողներին հանձնարարել ավարտել տրված նախադասություններից որևէ մեկն իրենց ընտրությամբ.

- Այս դասից ես սովորեցի....
- Այս դասից ես հասկացա...
- Այս դասից ինձ համար ամենահետաքրքիրը...

Պարագրաֆ 40.

ԴԱՄԻ ՊԼԱՆ

ԴԱՍԱՆՅՈՒԹԸ՝ § 40. Մոնոլոլական արշավանքները և «Եվրասիական» տերության ստեղծումը

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 1 դասաժամ (45 րոպե):

ԴԱՄԻ ՏԻՊԸ՝ Նոր գիտելիքի ուսուցման դաս:

ԴԱՄԻ ՆՊԱՏԱԿԸ՝

ԻՄԱՆԱ՝

- Մոնոլոլական նվաճումների ժամանակաշրջանը, պատճառները և հետևանքները:
- Չինգիզ խանի պատմական դերը կայսրության ստեղծման և կայացման գործում:
- «Եվրասիական» տերության ստեղծման, հետագա տրոհման և կործանման պատճառները:
- Նոր հասկացությունները՝ խան, ուլուս, «Եվրասիական» տերություն»:

ԿԱՐՈՂԱՆԱ՝

- Բացատրել քոչվորական ցեղերից միասնական պետություն ստեղծելու հիմնական նախադրյալները:
- Բացատրել կայսրության անկման գլխավոր պատճառները:
- Բացատրել կայսրության ունեցած կարևոր դերակատարումը պատմության մեջ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: «ԻՈՒՍ», դասախոսություն:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ: Դասագիրք, դասանյութին կից QR 40.1-40.4 էլեկտրոնային տեղեկատվությունը, համակարգիչ / պրոյեկտոր՝ սահիկաշարի ցուցադրության համար, նշագրիչ, թուղթ, գրատախտակ (ցանկալի է էլեկտրոնային):

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԸ: Հայոց պատմություն, Եկեղեցու պատմություն

ԴԱՄԻ ԸՆԹԱՑՔԸ

ԽԹԱՆՈՒՄ: Ուսուցիչը սովորողներին առաջարկում է հիշել հայոց ու համաշխարհային պատմությունից յուրացրած դասերը, որոնցում խոսվում էր քոչվոր ցեղերի մասին (արաբներ, մոնղոլներ), ինչն էր դարձել այդ ցեղերին միավորելու գործոն, և ինչպես են վերածվել պետության: Ապա սովորողներին տեղեկացնել նոր նյութի մասին, հարցնել, թե թեմայի հետ կապված ինչ հարցեր ունեն, ու դրանք գրել ԻՈՒՍ աղյուսակի (կարող են գրել ինչպես իրենց տետրերում, այնպես էլ՝ գրատախտակին) «Ու-Ի՞նչ ենք ուզում իմանալ» սյունակի մեջ, իհարկե լրացնելով նաև առաջին սյունակը՝ «Ի-Ի՞նչ գիտենք»:
Ուսուցիչն օգնում է աշակերտներին դասակարգել իրենց գիտելիքներն ու հարցերը և առանձին մի ցուցակ կազմում:

Ի-Ի՞նչ գիտենք	Ու-Ի՞նչ ենք ուզում իմանալ	Ս-Ի՞նչ սովորեցինք

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Ուսուցիչը սահիկաշարի ցուցադրությամբ սկսում է նոր դասանյութի բացատրությունը (տե՛ս կից սահիկաշարը), դադարներով ու մեկնաբանություններով մասնակից դարձնելով սովորողներին: Ավարտելուց հետո ուշադրությունը հրավիրվում է 3-րդ սյունակի վրա՝ «Մ-Ի՞նչ սովորեցինք»: Առաջարկվում է թվարկել թեմային վերաբերող այն նոր տեղեկությունները, որոնք գտել են սահիկաշարին հետևելու ընթացքում, և դրանք գրի է առնում երրորդ սյունակում:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ: Հարցերի միջոցով ուսուցիչն ամփոփում է դասանյութը, ստուգում սովորողների գիտելիքների յուրացման աստիճանը, կատարում գնահատում:

ԱՆԴՐԱԴԱՐՁ: Սովորողները վերլուծում են իրենց իմացածն ու նոր սովորածը և կատարում ինքնագնահատում՝ ստացա՞ն արդյոք իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները:

Վերջին սահիկը ցուցադրելով՝ ուսուցիչը տեղեկացնում է, որ տնային աշխատանքը բարդությամբ եռամակարդակ է. Առաջին կետը պարտադիր է բոլորի համար, պետք է փորձեն պատասխանել և հաջորդ երկու կետերում առաջադրված հարցերին (օգտվեն նաև QR 40.1-40.4. հավելյալ նյութից):

Սահիկաշարը դիտելու համար պետք է մի քանի րիք անել այս և հաջորդ պատկերների վրա



Պարագրաֆ 43.

ԴԱՍԻ ՊԼԱՆ

ԴԱՍԱՆՅՈՒԹԸ՝ § 43. Իրանը միջնադարում
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 1 դասաժամ (45 րոպե)
ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ համակցված դաս
ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ՝
ԻՄԱՆԱ՝

- Նոր հասկացությունները՝ շահնշահ, վագուրգ, զրադաշտական կրոն, դըզլբաշ:
 - Նոր արքայատոհմերի հաստատումը (Մասանյաններ, Սեֆյաններ) ինչ փոփոխություններ բերեց Իրանի պատմության մեջ:
 - Ինչ դեր ունի Իրանը՝ համաշխարհային քաղաքակրթության մեջ:
- ԿԱՐՈՂԱՆԱ՝
- Բացատրել Իրանի դերի կարևորությունը Առաջավոր Ասիայի պատմության մեջ:
 - Կապեր գտնել հայ-իրանական հարաբերությունների պատմության մեջ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: Մտազրոհ, դասախոսություն՝ սահիկաշարի ներկայացմամբ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ: դասագիրք, դասանյութին կից էլեկտրոնային տեղեկատվությունը QR 49.1-49.7, պրոյեկտոր կամ համակարգիչ:

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԸ: Հայոց պատմություն:

ԽԹԱՆՈՒՄ: Ուսուցիչը մտազրոհի միջոցով վերհանում և թարմացնում է սովորողների արդեն իսկ նախորդ դասերից, այդ թվում՝ հայոց պատմությունից, ունեցած գիտելիքները հայ-պարթևական և հայ-պարսկական հարաբերությունների վերաբերյալ (տե՛ս սահիկաշարում ներառված հարցերը՝ սահիկ 2)

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Այս փուլում ամփոփելով մտազրոհի ժամանակ վեր հանած գիտելիքները ինչպես համաշխարհային պատմության, այնպես էլ հայոց պատմության դասընթացից, անցում ենք կատարում դասախոսության, որը ուղեկցվում է սահիկաշարի ցուցադրությամբ ու մեկնաբանություններով, ընթացքում սաները ակտիվորեն ներգրավված կարող են լինել, հաշվի առնելով, որ ունեն որոշ գիտելիքներ հայոց պատմությունից՝ կապված Մասանյանների արքայատոհմի հաստատման, արաբական արշավանքների հետևանքների մասին:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ:

10-րդ սահիկում տրված է հանձնարարություն, որի կատարումն էլ կստուգի սաների ընկալումը և ուշադրությունը, ինչպես նաև իրադարձությունների ժամանակագրական պատկերացումը:

ԱՆԴՐԱԴՐԱԸ:

Անդրադառնալ անհասկանալի մնացած առանցքային հարցերին, որոնք հնարավոր է դեռևս անհասկանալի են մնացել:

Ուսուցիչը հանձնարարում է տնային աշխատանքը՝ §49 սովորել պատմել, իմանալ նոր հասկացությունների բացատրությունները: Օգտվելով դասանյութին կից տրված լրացուցիչ տեղեկատվությունից (QR 49.7), համացանցից՝ փորձեն պարզել, թե ինչպիսի ազդեցություն է ունեցել իրանական մշակույթը համաշխարհային քաղաքակրթության վրա:

Պարագրաֆ 44.

<https://koncept.ru/srednie-klassy/konspekt-uroka/istoriya-6klass/3723-konspekt-uroka-strana-voshodyaschego-solnca.html>

<https://infourok.ru/urok-po-vsemirnoj-istorii-na-temu-yaponskaya-civilizaciya-6-klass-4028790.html>

ԴԱՄԻ ՊԼԱՆ

ԴԱՄԱՆՅՈՒԹԸ՝ § 44. Ճապոնիան միջնադարում

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 1 դասաժամ (45 րոպե)

ԴԱՄԻ ՏԻՊԸ՝ Նոր գիտելիքի ուսուցման դաս:

ԴԱՄԻ ՆՊԱՏԱԿԸ՝

ԻՄԱՆԱ՝

- Ճապոնիայի աշխարհագրական դիրքը, քաղաքակրթության առաջացման պայմանները:
- Նոր հասկացությունների բացատրությունները՝ «ծագող արևի երկիր», ցունամի, սինտոիզմ, բուդդայականություն, «տայկա» հեղաշրջում, սյոգուն, սամուրայ:
- Պետական կառավարման առանձնահատկությունները միջնադարյան Ճապոնիայում:
- Ինչ է նշանակում «կայսրերը իշխում էին, բայց չէին կառավարում» արտահայտությունը:

ԿԱՐՈՂԱՆԱ՝

- Բացատրել ճապոնական քաղաքակրթության տեղն ու դերը համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ
- Գտնել ճապոնական հասկացություններին համարժեք եվրոպական բնորոշ հասկացություններ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: Մտազրոհ, դասախոսություն, «աշխատանք զույգերով»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ: Դասագիրք, դասանյութին կից էլեկտրոնային տեղեկատվությունը, QR 44.1-44.6, համակարգիչ (կամ էլեկտրոնային այլ միջոց թեմային վերաբերող նկարները ցուցադրելու համար, այդ թվում՝ Ճապոնիայի քարտեզը), նշագրիչ, թուղթ, գրատախտակ (ցանկալի է էլեկտրոնային), Ճապոնիայի ուրվագծային քարտեզներ՝ զույգերով աշխատելու համար:

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԸ: Աշխարհագրություն:

ԴԱՄԻ ԸՆԹԱՑՔԸ

ԽԹԱՆՈՒՄ: Ուսուցիչը համակարգչով ցուցադրում է նախապես պատրաստած մի քանի տարբեր նկարներ, որոնք սաներին կհուշեն կռահել այսօրվա թեման (օրինակ՝ արև, սուշի, ճապոնական ավտոմեքենաների... լոգոներ). հարցադրումը կվերաբերի՝ ինչն է կապված այս նկարները միմյանց հետ:



Ուսուցիչը մտազրոյի միջոցով պարզում է սովորողների գիտելիքները «ծագող արևի երկրի» մասին և առաջարկում լրացնել ԻՈՒՄ աղյուսակի առաջին երկու սյունակները (դասավանդման այս մեթոդի մանրամասները տե՛ս §40-ի դասի պլանում): Ուսուցիչն օգնում է աշակերտներին դասակարգել իրենց գիտելիքներն ու հարցերը և մի առանձին ցուցակ կազմում:

Ի-Ի՞նչ գիտենք արդեն	Ու-Ի՞նչ ենք ուզում իմանալ	Մ-Ի՞նչ ենք սովորել

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ:

ա) Ուսուցիչը համակարգչով կամ աշխարհագրական քարտեզի վրա ցույց է տալիս Ճապոնիան, բացատրում նրա աշխարհագրական դիրքը և հանձնարարում գույգերով աշխատելով արագ նշել երկրի 4 խոշոր կղզիները, ավերք ողողող ծովերը, տրվում է նաև համառոտ աշխարհագրական նկարագիր՝ սեյսմիկ իրավիճակի, ցունամիների հաճախականության, ինչպես նաև «ծագող արևի երկիր» կոչվելու և սինտոիզմի կրոնի մասին:

բ) Հանձնարարում է դասանյութի առաջին ենթաբաժնից գտնել առաջադրված հարցերի պատասխանը և գրել տետրում (աշխատում են գույգերով, 1-2 րոպե).

- Ո՞վ էր Յամատոն: Պատասխանը բարձրաձայն կարդալուց հետո ուսուցիչը շեշտադրում է անում տոհմացեղային կարգավիճակից պետություն դառնալու հանգամանքի և այդ գործում նոր կրոնի՝ բուդդիզմի դերի վրա:

գ) Հաջորդ քայլը պետական համակարգի առանձնահատկությունն է Ճապոնիայում, իսկ մինչ այդ՝ վերհիշենք հայոց և համաշխարհային պատմությունից մեր սովորած ցանկացած պետական համակարգի կառուցվածքը (այս քննարկումը կազմակերպել բանավոր, իսկ դասի ավարտին՝ որպես տնային աշխատանք, հանձնարարել Վենի դիագրամով դուրս բերել եվրոպական որևէ երկրի և Ճապոնիայի պետական համակարգերի նմանություններն ու

տարբերությունները: Եթե դասարանը նախորդ հանձնարարությունները կատարի հեշտությամբ, ապա կարելի է նաև տնային աշխատանքի համար նախատեսված հանձնարարությունը ևս կատարել դասարանում՝ գույզերով: Ուղղորդող հարց ու պատասխանների միջոցով վերհիշելուց հետո հանձնարարել 3-րդ ենթաբաժնից գտնել «կայսրերը իշխում էին, բայց չէին կառավարում» արտահայտության բացատրությունը, Եվրոպայի ավատական աստիճանակարգության մեջ ով է նույնանում ճապոնական սամուրայի, սյուգունի հետ:

դ) Դասի հաջորդ մասը վերաբերում է ֆեոդալական մասնատված ճապոնիայի միավորման գործընթացին: Որպեսզի անձանոթ և բարդ հնչեղություն ունեցող անունները դժվարություն չառաջացնեն, ուսուցիչը բանավոր կբացատրի միավորման գործընթացը և այդ գործում Խիդեկուի կատարած կարևոր բարեփոխումները (դասագրքում կարող են տեսնել նրա նկարը, իսկ համակարգչով՝ QR կոդով 44.5-ում նրա կառուցած Օսակայի ամրոցը): Բացատրությունը լսելուց հետո կարդում են նաև այդ բաժինը և հայտնում անհասկանալի թվացող մտքերը, ստանում դրանց բացատրությունները դասընկերներից, եթե կդժվարանան՝ միջամտում է ուսուցիչը:

ե) Ուսուցիչը համառոտ ներկայացնում է դասի վերջին ենթաբաժինը՝ շեշտադրում անելով Տոկուգավայի կողմից սյուգունատի հաստատման և ժառանգական լինելու փաստի վրա, ապա առաջարկում ընթերցել այդ հատվածն ու գտնել հետևյալ հարցի պատասխանը՝ ինչո՞ւ ճապոնիան «փակվեց» օտարերկրացիների համար:

զ) Կշռադատումից առաջ թարմանում ենք ֆիզկուլտ դադար անելով՝ զգում ենք մեզ ինչպես սամուրայ...

ԿՇՌԱԴՍՏՈՒՄ:

Ավարտելուց հետո ուշադրությունը հրավիրվում է 3-րդ սյունակը լրացնելու վրա՝ «Մ-Ի՞նչ ենք սովորել»:

Հարցերի միջոցով ուսուցիչն ամփոփում է դասանյութը, ստուգում սովորողների գիտելիքների յուրացման աստիճանը, կատարում գնահատում:

ԱՆԴՐԱԴԱՐՁ:

Սովորողները վերլուծում են իրենց իմացածն ու նոր սովորածը և կատարում ինքնագնահատում՝ ստացա՞ն արդյոք իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները:

Ուսուցիչը հանձնարարում է տնային աշխատանքը (սովորել դասը, նոր հասկացությունները, Վենի դիագրամով դուրս բերել եվրոպական և ճապոնական քաղաքակրթությունների տարբերություններն ու նմանությունները, օգտվել նաև QR 44.1-44.6 նյութից):

Պարագրաֆ 49

ԴԱՍԻ ՊԼԱՆ

ԴԱՍԱՆՅՈՒԹԸ՝ § 49. Եվրոպայի ավանդական հասարակության փոխակերպումը:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 2 դասաժամ (45+45 րոպե):

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ համակցված դաս:

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ՝

ԻՄԱՆԱ՝

- Նոր հասկացությունները՝ ճորտ, բատրակ, ռենտա, վարձու աշխատող
- Նոր դասակարգերի առաջացման պատճառները

ԿԱՐՈՂԱՆԱ՝

- Բացատրել պատճառահետևանքային կապը՝ բնատնտեսության ճգնաժամի առաջացման և դրանցից բխող հետևանքների միջև:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ մտազրոհի՝ «Ֆիշբոուն» (կամ «ձկան կմախք»), «խմբային աշխատանք», դասախոսություն:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝ դասագիրք, դասանյութին կից էլեկտրոնային տեղեկատվությունը QR 47.1-47.4:


ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԸ՝ հայոց պատմություն:

I ԴԱՍԱԺԱՄ (45 րոպե)

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

ԽԹԱՆՈՒՄ: Ուսուցիչը մտազրոհի միջոցով վերհանում և թարմացնում է սովորողների արդեն իսկ նախորդ դասերից, այդ թվում՝ հայոց պատմությունից, ունեցած գիտելիքները ֆեոդալական հասարակարգի ձևավորման, ավատ, գյուղացիական համայնք, հողի մշակման եռադաշտային համակարգ, քաղաքների և քաղաքային համայնքների հասկացությունների շուրջ, ապա առաջարկում մտածել հետևյալ հարցի շուրջ՝ արդյոք կարո՞ղ էր գյուղացին գոհ լինել կամ համակերպվել իր վիճակի հետ (եթե այո, ապա բացատրեք՝ ինչն էր գոհացնող, եթե ոչ՝ ապա ինչ պարող էր անել իր վիճակի բարելավման համար): Այս քննարկումը ամփոփել՝ համառոտ ներկայացնելով Ֆրանսիայում բռնկված գյուղացիական ապստամբությունը՝ Ժակերիայի, իսկ Անգլիայում՝ Ուոլտ Թայլերի գլխավորությամբ գյուղացիական պատերազմը:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Այս փուլում հանձնարարել տեղում առանձին կարդալ §47-ի առաջին 3 ենթավերնագրերը՝ Բնատնտեսության ճգնաժամը, Դրամական ռենտայի և վարձու աշխատանքի տարածումը, Քաղաքային ինքնավարությունը: Ապա շարքերում՝ քառյակներով քննարկել միմյանց հետ և լրացնել «Ձկան կմախքը»:



Միսեման բաղկացած է 4 հիմնական մասերից՝ գլուխ, պոչ, վերին և ստորին ոսկորներ: Այս ամենը միմյանց կապողը ձկան ողնաշարն է:

- Գլուխը — խնդիրն է, հարցը կամ թեման, որը պետք է վերլուծության ենթարկվի:
- Կնախքի վերևի ոսկորների վրա գրի են առնվում թեմայի հիմնական հասկացությունները, որոնց հետևանքով առաջացել է խնդիրը:
- Ներքևի ոսկորները փաստերն են, որոնք հիմնավորում են առանձնացված պատճառները:
- Պոչը՝ առաջադրված հարցի պատասխանն է, հետևանքն է կամ ընդհանրացումն է:

Այս դասի համար որպես խնդիր (Ձկան գլուխը) առաջադրվում է «բնատնտեսության ճգնաժամը»:

Այս մեթոդը օգնում է զարգացնել համագործակցությունը թիմային աշխատանքի ժամանակ, վերլուծել տեքստը, առանձնացնել գլխավոր իրադարձությունները, գտնել դրանց պատճառները, ինչպես նաև զարգացնել քննադատական մտածողությունը:

ԿՇՌԱԴՍՏՈՒՄ:

Ավարտելուց հետո խմբերը ներկայացնում են իրենց կողմից լրացված սխեմա, լրացնում միմյանց, կատարում խմբագրումներ ըստ ուսուցչի դիտարկումների:

ԱՆԴՐԱԴԱՐՁ:

Սովորողներին հանձնարարվում է դուրս բերել իրենց համար ամենակարևոր կամ ամենահետաքրքիր միտքը մեկ նախադասությամբ:

Ուսուցիչը հանձնարարում է տնային աշխատանքը (սովորել դասը, նոր հասկացությունները, օգտվել նաև QR 47.1-47.4 նյութից): Կարելի է հանձնարարել նաև նոր սովորած տերմինների վերաբերյալ կազմել հարցադրումներ՝ հաջորդ դասին դասընկերների հետ բլից հարցում անելու համար:

II ԴԱՍՍԺԱՄ (45 րոպե)

ԴԱՄԻ ՊԼԱՆԸ

ԴԱՍԱՆՅՈՒԹԸ՝ § 47 (2-րդ դասաժամ). Եվրոպայի ավանդական հասարակության փոխակերպումը:

ԴԱՄԻ ՏԻՊԸ՝ նոր նյութի յուրացման դաս:

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ՝

ԻՄԱՆԱ՝

- Ի՞նչ է դասային միապետությունը:
- Որո՞նք էին պետությունների միավորման նախադրյալները:
- Ովքե՞ր էին դրանում շահագրգռված:

ԿԱՐՈՂԱՆԱ՝

- նկարագրել դասային միապետության տեսակները Արևմտյան Եվրոպայի երկրներում, ավանել դրանք:
- բացատրել, թե ի՞նչ հետևանքներ ունեցավ դասային միապետությունների առաջացումը այդ երկրների համար:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ մտազրոհ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝ դասագիրք, դասանյութին կից էլեկտրոնային տեղեկատվությունը QR 47.1-47.4, համակարգիչ կամ պրոյեկտոր՝ սահիկաշարը ցուցադրելու համար

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

ԽԹԱՆՈՒՄ: Էկրանին երևում է սահիկաշարի առաջին էջը՝ վերնագիրը:



Մտազրոհ՝ ուսուցիչը բանավոր հարցադրումներով պարզաբանում է նախորդ դասի յուրացումները, ապա հայտնում, որ այսօրվա դասը նախորդի շարունակությունն է, և այն փոփոխությունները, ինչին անդրադարձել էինք նախորդ դասի ժամանակ, որպես հետևանք հանգեցրին նաև ԴԱՍԱՅԻՆ ՄԻՊԵՏՈՒԹՅԱՆ առաջացմանը:

Իսկ ի՞նչ է դասային միապետությունը:

Հարց՝ նայում ենք սահիկ 2. Ովքե՞ր են ներկայացված, ի՞նչ կապ եք տեսնում նրանց միջև՝ թագավոր/իշխան, հոգևորականություն, ժողովուրդ, ընտրյալ դասեր... (մի քանի կարծիքներ լսել, ապա ուշադրությունը հրավիրել էկրանին), սահիկ 3. մեր այսօրվա դասին կփորձենք դուրս բերել, թե ինչպես ընթացավ դասային միապետության առաջացման գործընթացը, ովքեր էին դրանում շահագրգռված և ինչու:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Այս փուլում ուսուցչի կողմից ներկայացվում է դասը՝ սահիկների հաջորդաբար ցուցադրությամբ, և մեկնաբանությունները, որոնց մասնակցում են նաև սաները, պատասխանելով ընթացիկ հարցադրումներին:

ԴԱՍԱՅԻՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՅՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ



Սահիկաշարը դիտելու համար քիչ անել այս և ամեն հաջորդ էջին

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ:

Ավարտելուց հետո սովորողներին առաջադրվում է հետևյալ հարցը.

Ի՞նչ էք կարծում՝ ինչու՞ Եվրոպայում հնարավոր եղավ ժողովրդավարության այդպիսի դրսևորում:

ԱՆԴՐԱԴԱՐՁ:

Սովորողներին հանձնարարվում է դուրս բերել իրենց համար ամենակարևոր կամ ամենահետաքրքիր միտքը մեկ նախադասությամբ:

Ուսուցիչը հանձնարարում է տնային աշխատանքը (սովորել դասը, նոր հասկացությունները, օգտվել նաև QR 47.1-47.4 նյութից), գծապատկերով դուրս բերել դասային միապետության ընդհանրությունները Անգլիայի և Ֆրանսիայի միջև, ցանկության դեպքում ինքնուրույն ուսումնասիրել լեհական կամ գերմանական օրինակները:

Պարագրաֆ 52

ԴԱՄԻ ՊԼԱՆ

ԴԱՍԱՆՅՈՒԹԸ՝ § 52. Փոփոխություններ հասարակական և մշակութային կյանքում:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 1 դասաժամ(45 րոպե):

ԴԱՄԻ ՏԻՊԸ՝ նոր գիտելիքի ուսուցման դաս:

ԴԱՄԻ ՆՊԱՏԱԿԸ՝

ԻՄԱՆԱ՝

- Ի՞նչ նոր դասեր էին առաջացել Եվրոպայում և ինչո՞վ էր դա պայմանավորված:
- Մշակութային ի՞նչ նոր փոփոխություններ են տեղի ունեցել ուշ միջնադարում:

ԿԱՐՈՂԱՆԱ՝

- Բացատրել ֆեոդից կապիտալի՝ որպես հարստության նոր չափանիշի անցումը:
- Համեմատել հին և նոր դասակարգերը:
- Բացատրել գիտության և մշակույթի բնագավառում բուռն վերելքի պատճառները:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ մտազրոհ, «խմբային աշխատանք», դասախոսություն, Վենի դիագրամ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝ դասագիրք, դասանյութին կից էլեկտրոնային տեղեկատվությունը QR 52.1-52.4, համակարգիչ (կամ էլեկտրոնային այլ միջոց թեմային վերաբերող նկարները ցուցադրելու համար), 4 հատ (Ա4 չափսի) պատճենած «Վենի դիագրամ», 4 հատ աղյուսակ (Ա4-ի վրա պատճենած), որտեղ պետք է լրացվեն գիտության ու մշակույթի ոլորտի կարևոր իրադարձությունները:

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԸ՝ բնագիտություն:

ԽԹԱՆՈՒՄ: Ուսուցիչը համակարգչով ցուցադրում է նախապես պատրաստած հասարակության տարբեր դասերի մի քանի նկարներ, որոնք սաներին կհուշեն կռահել օրվա դասի թեման. հարցադրումը անել ցուցադրելով որևէ նկար, և առաջադրել կռահել, ո՞ր դասի ներկայացուցիչն է պատկերված նկարում, ինչու՞ են այդպես կարծում: Ահա նկարների օրինակներ.



MISS KENNEDY DISTRIBUTING CLOTHING AT KILBUSH.



Թղթախաղ



Ֆրանցիսկոս I

Բուրժուա


Ապա մտագրոհի միջոցով սովորողներին ուղղորդում ենք վերհիշելու միջնադարի ձևավորման համար ստեղծված նախադրյալները, և թե ինչու էր հարստության չափանիշ համարվել ֆեոդը (ավատը, հողը), որոնք էին հասարակության հիմնական շարժիչ ուժերը, հիմնական դասակարգերը, ինչ է նշանակում մանուֆակտուրա, ուլքեր էին այնտեղ աշխատում, նախորդ դասից էլ հիշեք, թե ինչ նախադրյալներ էին անհրաժեշտ կապիտալիստական հասարակարգի ձևավորման համար: Այնուհետև առաջադրվում է հիմնական բովանդակային հարցը, որն օրվա դասի ընթացքում պետք է բացահայտվի, այն է՝ ինչ նոր փոփոխություններ տեղի ունեցան հասարակական և մշակութային կյանքում XV-XVII դդ. (հարցը գրել գրատախտակին):

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Ուսուցիչը՝

ա) դասարանը բաժանում է 4 աշխատանքային խմբերի (ճիշտ կլինի խմբերից երկուսում ընդգրկել առավել ուժեղ սովորողների և նրանց հանձնարարել աշխատել Վենի դիագրամով, մինչդեռ համեմատաբար թույլ սովորողներին հանձնարարել լրացնել աղյուսակը, որ հիմնականում մեխանիկական աշխատանք է ենթադրում),

բ) հակիրճ դասախոսությամբ ներկայացնում է հիմնական նոր տերմինները, որոնք բովանդակային շարունակությունն են նախորդ դասանյութի: Ստորև ներկայացված գծապատկերով բացատրվում է հասարակության նոր դասերի առաջացումը, նրանց դերը հասարակական կյանքում: Ապա նշում նաև, որ նոր ժամանակներին բնորոշ էր նաև գիտության և մշակույթի առանձնահատուկ վերելքը, հետաքրքրությունը նոր բացահայտումների, բնության երևույթների առավել խոր ուսումնասիրությունների, գիտական հայտնագործությունները կյանքում կիրառելի դարձնելու և այդ ամենի կյանքի կոչման համար կաթոլիկ եկեղեցու դոգմաներին հակադրվելու անհրաժեշտությամբ պայմանավորված համառ պայքարը:

Հասարակարգի փոփոխությունները Եվրոպայում XVI – XIX դդ.



գ) ապա խմբերից 2-ին հանձնարարվում է կարդալ դասի առաջին 2 ենթամասերն ու լրացնել Վենի դիագրամը՝ միմյանց հետ համեմատելով ավատատիրական հասարակարգը նոր առաջացող կապիտալիստական հասարակարգի հետ (համեմատաբար ուժեղ խմբերը), և մյուս 2 խմբերին հանձնարարել ծանոթանալ դասի երկրորդ մասին, (QR 52.2-52.3) և լրացնել աղյուսակը:

Մշակույթի բնագավառը	Ներկայացուցիչը	Հայտնագործությունը

Վենի դիագրամը կառուցվում է 2 (ըստ անհրաժեշտության նաև ավելի) շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հաստման մեծ մակերես ունեն, որտեղ և նշվում են ընդհանրությունները: Չհասկնող հատվածներում նշվում են տարբերությունները:



ԿՇՌԱԴԱՏՈՒՄ:

Տրված ժամանակի ավարտից հետո ուժեղ խմբերից մեկը կներկայացնի իրենց լրացրած դիագրամը, իսկ մյուս խումբը կկատարի հավելումներ կամ խմբագրումներ՝ ուսուցչի ուղղորդմամբ, եթե կարիք լինի: Մյուս 2 խմբերից մեկն էլ կներկայացնի աղյուսակի մի մասը, ապա կշարունակի երկրորդ խումբը, դարձյալ ուսուցչի խմբագրումներով, եթե կարիքը լինի:

ԱՆԴՐԱԴԱՐՁ:

Սովորողներին առաջարկվում է ներկայացնել իրենց համար ամենակարևոր միտքը օրվա դասից, ապա տնային աշխատանքը՝ սովորել դասը, նոր հասկացությունները:

Պարագրաֆ 55

ԱԲՍՈԼՅՈՒՏԻԶՄ

Բացարձակ միապետությունը եվրոպայում XVI-XVII դդ.



«Հպատակության համար ծնվածը պետք է հպատակվի»
 «Աստծո կամքն է, որ հնազանդության համար ծնվածը պետք հնազանվի
 անվերապահ»

8. ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ՝ ԹԵՄԱՏԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԹԵՍԵՐ

§ 12. ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ / ԱՄՓՈՓԻՉ ԹԵՍՏ. ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. Երկրագործությունը և անասնապահությունը ե՞րբ դարձան նախնադարյան մարդկանց հիմնական զբաղմունքը.

- Ք.ճ.ա. V հազարամյակ
 - Ք.ճ.ա. IV հազարամյակ
 - Ք.ճ.ա. III հազարամյակ
- Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

2. Ո՞ր ժամանակաշրջանն ենք անվանում բրոնզի դար.

- Ք.ճ.ա. IV - III հազարամյակը
- Ք.ճ.ա. III - II հազարամյակը
- Ք.ճ.ա. IV - II հազարամյակը
- Ք.ճ.ա. III - I հազարամյակը

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

3. Ո՞ր տարածքը և ինչո՞ւ են անվանում «Բարեբեր կիսալուսին» / «Ոսկե եռանկյուն»

.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25+0.25) 1 բալ

4. Բացատրեք՝ ինչո՞ւ են հնում Եգիպտոսը անվանել «Նեղոսի պարզև»

.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25+0.25) 1 բալ

5. Գիտնականներից ո՞վ և ինչպե՞ս վերծանեց եգիպտական հիերոգլիֆները

.....
.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25+0.25) 1 բալ

6. Ո՞ր գետերն են հոսում Միջագետքով, և որտեղի՞ց են դրանք սկիզբ առնում.

.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է 0,75 (0.25+0.25+0.25) բալ

7. Թվարկեք Ուրարտու պետության արքաներին, որոնց դեմ պատերազմել է Ասորեստանը Ք.ճ.ա. IX-VIII դարերում

.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25+0.25) 1 բալ

8. Ո՞ր պետության մայրաքաղաքն էր Երուսաղեմը.

- Խեթական
- Հրեական
- Միտաննիի
- Փյունիկիայի

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

9. Թվարկեք Բաբելոն քաղաքի կարևոր շինությունները Ք.ճ.ա. VI դարում

.....
.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25+0.25) 1 բալ

10. Աշխարհում առաջինը այբուբեն ստեղծեցին.

- խեթերը
- հրեաները
- մարերը
- փյունիկեցիները

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

11. Ո՞ր արքան էր Աքեմենյան տերության հիմնադիրը.

- Դարեհ I
- Կամբյուսես
- Կյուրոս I I
- Քսերքսես

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

12. Ի՞նչ էին վառնաները, քանիսն էին դրանք, ինչով էին իրարից տարբերվում

.....
.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25+0.25) 1 բալ

13. Ի՞նչն ենք անվանում «Մետաքսի ճանապարհ», որտեղի՞ց և ու՞ր էր այն տանում

.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25) 0,75 բալ

14. Ինքնուրույն քաղաքակրթություն ստեղծած ժողովուրդների անվանումները գծիկներով միացրեք այն մայրցամաքի անվանմանը, որտեղ նրանք բնակվել են.

	ագտեկներ աքքադացիներ ինկեր հնդիկներ մայաներ չինացիներ շումերներ	
ԱՍԻԱ		ԱՄԵՐԻԿԱ

Լիարժեք պատասխանները գնահատվում են (0.25+0.25+0.25+0.25+0.25) 1,25 բալ

22. ՀԵՏԱՂԱՐՁ ԿԱՊ / ԱՄՓՈՓԻՉ ԹԵՍՏ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

1. Հունաստանի հնագույն բնակիչներին անվանում էին.

- աքայացիներ
 - դորիացիներ
 - կրետացիներ
 - պելասգներ
- Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

2. Ո՞րն էին անվանում «դեմոկրատական պոլիս» և ո՞րը՝ «արիստոկրատական պոլիս»

.....
.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25+0.25) 1,25 բալ

3. Բացատրեք, ո՞ր տեսակ պետությունն ենք անվանում «ամբողջատիրական»

.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25) 0,75 բալ

4. Ինչպե՞ս էին Սպարտայում դաստիարակում աղջիկներին

.....
.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25) 0,75 բալ

5. Բացատրեք՝ ի՞նչ է նշանակում «լակոնիկ խոսք» արտահայտությունը

.....

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

6. Ինչո՞ւ էին ասում, որ «Դրակոնի օրենքները գրված են ոչ թե թանաքով, այլ արյունով»

.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25) 0,75 բալ

7. Բացատրեք՝ որքա՞ն է «մարաթոնյան վազքը», ինչպես է այն առաջացել

.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25) 0,75 բալ

8. Հունաստանի պատմության ո՞ր հատվածն ենք անվանում «դասական դարաշրջան»

.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25) 0,75 բալ

9. Ո՞ր շինություններն էին հին Հունաստանում անվանում ճեմասրահ

.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25) 0,5 բալ

10. Ե՞րբ է հին Հունաստանում տեղի ունեցել առաջին Օլիմպիադան.

- ք.ճ.ա. 776 թ.
- ք.ճ.ա. 490 թ.
- ք.ճ.ա. 336 թ.

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

11. Ու՞մ էին հին Հունաստանում անվանում օլիմպիոնիկներ.

- մարզիկներին
 - մարզիչներին
 - մասնակիցներին
 - հաղթողներին
- Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

12. Բացատրեք «առողջ մարմնում առողջ հոգի» հունական թևավոր խոսքի իմաստը

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25) 0,5 բալ

13. Ո՞ր շինություններն էին հին Հունաստանում անվանում ճեմասրահ

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25) 0,5 բալ

14. Բացատրեք, թե ի՞նչ հետևանքներ ունեցավ Գավգամելայում Ալեքսանդրի տարած հաղթանակը Հայաստանի համար

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25) 0,5 բալ

15. Բացատրեք՝ ի՞նչն ենք անվանում հելլենիստական մշակույթ

.....

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25+0.25) 1 բալ

16. Որտե՞ղ են հայտնագործել «պերգամենտը», ինչի՞ց էին պատրաստում, ինչպե՞ս ենք այն անվանում հայերեն

.....

.....

.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25+0.25) 1 բալ

§ 32. ՀԵՏԱԴԱՐԶ ԿԱՊ / ԱՄՓՈՓԻՉ ԹԵՍՏ ՀԻՆ ՀՌՈՄԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ

1. Ո՞րն է Ապենինյան թերակղզու ամենախոշոր գետը.

- Առնո
- Տիրր
- Պո
- Ռոնա

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

2. Հռոմ քաղաքի բնակիչներից ովքեր էին համարվում Հռոմի քաղաքացի.

- Էտրուսկները
- պատրիկները
- պլեբեյները
- սաբինները

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

3. Որո՞նք էին պատրիկների և պլեբեյների պայքարի պատճառները: Հռոմեական ժողովրդի ի՞նչ երեք նոր դասեր ձևավորվեցին այդ պայքարի արդյունքում

.....
.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25+0.25) 1 բալ

4. Բացատրեք «Սագերը փրկեցին Հռոմը» թևավոր խոսքի իմաստը

.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25) 0,5 բալ

5. Բացատրեք «Պյուռոսյան հաղթանակ» թևավոր խոսքի իմաստը

.....
.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25) 0,75 բալ

6. Նկարագրեք Հռոմի դեմ կարթագենացի զորավար Հաննիբալի վարած պատերազմը: Կարո՞ղ եք փաստերով հիմնավորել այն պնդումը, որ Հաննիբալը եղել է Հայաստանում

.....
.....
.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25+0.25+0.25+0.25) 1,5 բալ

7. Բացատրեք «Բաժանիր և տիրիր» հռոմեական դիվանագիտության իմաստը.

.....
.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25) 0,75 բալ

8. Ո՞ւմ էին անվանում գլադիատոր, ինչի համար և ինչպես էին նրանց վարժեցնում

.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25) 0,75 բալ

.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25+0,25) 1 բալ

9. Թվարկեք Պաղեստինում ձևավորված 3 խաչակիր օրդենների անվանումները և դրանց տարբերանշանները

.....
.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25+0,25) 0,75 բալ

10. Ե՞րբ, ու՞մ դեկավարությամբ և ինչպե՞ս օսման-թուրքերը գրավեցին Կոստանդնուպոլիսը

.....
.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25+0,25+0,25) 1 բալ

11. Պարսից որ բանաստեղծն է «Երգեր Հայաստանի» ոտանավորների շարքի հեղինակը

- Նիզամի
- Իսայան
- Իսաքանի
- Ֆիրդուսի

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0,25 բալ

12. Ո՞ր ժողովուրդն է կատարել վառողի, կողմնացույցի, թղթի և գրատպության գյուտերը.

- արաբ
- հնդիկ
- չինացի
- ճապոնացի

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0,25 բալ

13. Ո՞րն էր սյոգունի պաշտոնը Ճապոնիայում, իրականում ինչ իշխանություն նա ուներ

.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25) 0,5 բալ

14. Նշեք քաղաքակրթության մակարդակի հասած Ամերիկա մայրցամաքի 3 ժողովուրդներին.

- ատաբասկներ
- ացտեկներ
- ինկեր
- կեչուաներ
- մայաներ
- սապոտեկներ
- սեմինոլներ
- տոլտեկներ

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25+0,25) 0,75 բալ

§ 58. ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ / ԱՄՓՈՓԻՉ ԹԵՍ.
ՄԻՋՆԱԴԱՐԻ ԱՎԱՐՏԸ: ՓՈՓՈԽՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հասարակության ինչ նոր դասեր ձևավորվեցին Արևմտյան Եվրոպայում XIV-XV դդ.

.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25) 0,5 բալ

2. Բացատրեք՝ պետության կառավարման որ ձևն ենք անվանում դասային միապետություն, երբ է այն ձևավորվել Եվրոպայում

.....
.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25+0,25) 0,75 բալ

3. Բացատրեք՝ ինչի՞ց է առաջացել «Ոչխարները ուտում են մարդկանց» թևավոր խոսքը

.....
.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25+0,25+0,25) 1 բալ

4. Ինչպե՞ս էին կոչվում դրամափոխության համար գանձվող տոկոսները հայերեն.

- մաքս
- մուրհակ
- վաշխ
- վեքսիլ

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0,25 բալ

5. Որո՞նք էին աշխարհագրական Մեծ հայտնագործությունների պատճառները

.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25) 0,5 բալ

6. Ո՞վ է հայտնագործել Ամերիկա մայրցամաքը, և ու՞մ անունով է այն կոչվել

.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25) 0,5 բալ

7. Բացատրեք՝ ինչու՞ Ամերիկա մայրցամաքի տեղաբնիկներին անվանեցին հնդկացիներ

.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25) 0,5 բալ

8. Բացատրեք՝ ի՞նչ է մանուֆակտուրան, ինչպե՞ս էր այնտեղ աշխատանքը կատարվում

.....
.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25+0,25) 0,75 բալ

9. Բացատրեք՝ ի՞նչ են բանկերն ու բորսաները, ինչի՞ հետևանքով դրանք առաջացան

.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25+0,25+0,25) 1 բալ

10. Ո՞ր թվականին և ո՞ւմ կողմից է կատարվել գրաստայության գյուտը Եվրոպայում

.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25) 0,5 բալ

11. Ինչպե՞ս են կոչում կաթոլիկ եկեղեցու ազդեցությունը թուլացնելուն ուղղված շարժումը

- աղանդավորություն
- հումանիզմ
- ռեֆորմացիա

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0,25 բալ

12. Ի՞նչն ենք անվանում Վերածնունդ / Ռենեսանս, որտե՞ղ, ո՞ր դարերում է սկզբնավորվել

.....
.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25+0,25+0,25) 1 բալ

13. Կառավարման ի՞նչ ձև է արսոյուտիզմը, ե՞րբ է այն հաստատվել Եվրոպայում, որ դասերն էին արսոյուտիզմի հենարանը

.....
.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25+0,25+0,25) 1 բալ

14. Ե՞րբ է կնքվել Ուտրեխտի դաշինքը, և ո՞ր պետությունը կազմավորվեց դրա արդյունքում.

- 1379 թ.
- 1479 թ.
- 1579 թ.
- 1679 թ.
- Բելգիա
- Հոլանդիա
- Լյուքսեմբուրգ
- Ֆլանդրիա

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25) 0,5 բալ

15. Ե՞րբ է Ռուսաստանում հաստատվել և մինչև ե՞րբ է իշխել Ռոմանովների արքայատոհմը.

- 1483 թ.
- 1598 թ.
- 1613 թ.
- 1686 թ.
- 1796 թ.
- 1917 թ.

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0,25+0,25) 0,5 բալ

9. ԹԵՄԱՏԻԿ ՍՏՈՒԳՄԱՆ / ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐԵՐ
Թեմա 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՅՈՒՄԸ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

§ 1.

1. Բացատրեք՝ ի՞նչ է քաղաքակրթությունը

.....
.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25) 0,5 բալ

2. Երկրագործությունը և անասնապահությունը ե՞րբ դարձան նախնադարյան մարդկանց հիմնական զբաղմունքը.

- Ք.ծ.ա. V հազարամյակում
- Ք.ծ.ա. III հազարամյակում
- Ք.ծ.ա. IV հազարամյակում
- Ք.ծ.ա. II հազարամյակում

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

3. Մարդիկ ե՞րբ տիրապետեցին մետաղներ մշակելու և դրանցից առարկաներ պատրաստելու արհեստին.

- Ք.ծ.ա. V հազարամյակում
- Ք.ծ.ա. III հազարամյակում
- Ք.ծ.ա. IV հազարամյակում
- Ք.ծ.ա. II հազարամյակում

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

4. Ո՞ր ժամանակաշրջանն ենք անվանում բրոնզի դար.

- Ք.ծ.ա. IV - III հազարամյակը
- Ք.ծ.ա. III - II հազարամյակը
- Ք.ծ.ա. IV - II հազարամյակը
- Ք.ծ.ա. III - I հազարամյակը

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

5. Ո՞ր արհեստն են գիտնականներն անվանում իւեցեգործություն.

- Կողովներ և զամբյուղներ գործելը
- Մետաղյա իրեր պատրաստելը
- Կավե ամանեղեն պատրաստելը
- Խեցիներից զարդեր պատրաստելը

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

6. Բացատրեք՝ ի՞նչ է նահապետական ընտանիքը, ո՞վ էր այն գլխավորում

.....
.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25) 0,5 բալ

7. Որո՞նք էին նախնադարում քաղաքների առաջացման պատճառները, և ովքե՞ր էին բնակվում քաղաքներում

.....
.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25) 0,5 բալ

8. Որո՞նք էին նախնադարում ցեղամիջյան պատերազմների նպատակները

.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25) 0,5 բալ

9. Ո՞ր երկրների տարածքն են ընդգրկում «Բարեբեր կիսալուսինը/«Ոսկե եռանկյունը»

.....
.....
.....

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25+0.25) 1 բալ

10. Որո՞նք էին մարդու մշակած առաջին 2 մետաղները.

- անագը
- բրոնզը
- երկաթը
- պղինձը

Ճիշտ են 2 պատասխան, գնահատվում է 0,5 (0.25+0.25) բալ

11. Ինքնուրույն քաղաքակրթություն ստեղծած ժողովուրդների անվանումները գծիկներով միացրեք այն մայրցամաքի անվանմանը, որտեղ նրանք բնակվել են.

ացտեկներ
աքքադացիներ
ինկեր
հնդիկներ
մայաներ
չինացիներ
շումերներ

ԱՄԻԱ

ԱՄԵՐԻԿԱ

Լիարժեք պատասխանը գնահատվում է (0.25+0.25+0.25+0.25+0.25) 1,25 բալ

§ 2.

12. Ո՞ր փարավոնը և ե՞րբ սկիզբ դրեց Եգիպտոսի միասնական պետությանը.

- Թութոսը
- Սենեթը
- Ռամզեսը
- Քեոփսը

Ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 բալ

